



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1335

1336

1337

1338

83

4-66



150

83

9-66

ԱՄ ՀԵՐՄԱՆ ԵՒ ԴՈՐՈԹԷԱ

ՎԵՊ ՅԻՆՆ ԵՐԳՍ



ԹԱՐԳՄԱՆԵՑ

Ռ. Տ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Կ. ՊՈԼՍՍ

ՏՊԱԳԻ ԶԱՐԳԱՐԵԱՆ

3 20 0-3

2011

planned
88

no. 755

W. E. B. DUBOIS

THE LIFE OF W. E. B. DUBOIS

BY C. VANN DUNEER

NEW YORK

1908

254

ՀԱՅԿԻ ԵՆ ՀԱՅԿԻ ԵՆ ՀԱՅԿԻ ԵՆ ՀԱՅԿԻ
Կ. Պոլսոյ, Սոցիալական Համայնք



Գ 3048
3A

Հրամանատար Մկարթիմի

ՀԵՐՄԱՆ ԵՒ ԴՈՐՈԹԷԱ

1845

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

PHYSICS DEPARTMENT

ՆՈՒԷՐ

ԱՌ

ՍԻՐԵԼԻ ԳՈՅՐ ԻԻՐ

ՏԻԿԻՆ ԵՐԱՆՈՒՀԻ ԱՌԱՆՁԱՐ

Ի ԹԱՐԳՄԱՆՁԷՆ

RECEIVED
MAY 10 1887

DEPT. OF THE INTERIOR

LAND OFFICE

WASHINGTON

RECEIVED

MAY 10 1887

DEPT. OF THE INTERIOR

LAND OFFICE

WASHINGTON

RECEIVED

MAY 10 1887

DEPT. OF THE INTERIOR

LAND OFFICE


WASHINGTON

RECEIVED

MAY 10 1887

Printed in Turkey

Հ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



Հ միայն բարձր եւ խիստ դասերու կեանքն է որ ունի իւր երջանիկ կամ դժբախտ յեղաշրջումներն, իւր աստիճաններն, իւր բանաստեղծութիւնն, այլ եւ միջին դասուց պարզ ու համեստ կեանքն : Դիւցազնութիւնք յատուկ չէ՛ն ազնուականներու . ընտանեկան խո-

նարն յարկերու տակ ամեն օր ո՛րպիսի դիւցազնութիւնք կը գործուին, որք զի աւելի նսեմ տեսարանաց վերայ կը կատարուին՝ չէն նուազ հիւանալի եւ ո՛չ իսկ նուազ հրահանգիչ : Մանաւանդ համեստ բաղարացիներու կեանքն աւելի արգաստանգ է առարկնութեամբք քան ընկերութեան վե-

րին դասուցն . առաջնոց խրատտունն է աւելի պարզ բնութիւնն , մինչ վերջնոց բով սրտի ազնիւ բնազդումներն կը խոնարհին յաճախ շահադէտ նկատմանց եւ ընկերական կեղծուպատիր պահանջմանց : Յիրաւի աւելի լուսաւոր են ընդհանրապէս ժողովրդեան վերին խաւը , եւ ներքինը չեն ողողուած միշտ փրկաւետ լուսոյ ճառագայրներով . բայց երէ միջնակարգ ժողովուրդն ունի իւր նախապաշարումներն , աղբիւր ջարեաց , մուսրեանց , նուա՞զ ենքակայ է եւ բարձրագոյն դասն ծիծաղելի ու միանգամայն ողբալի մուրուրեանց որք ինքեան են միայն սեպնական . որպիսիք են խաբէական պատուաւարութիւնն մի , տենչ սնուտի փառաց , զարդասիրիկ ցանկութիւն , իղճ ունայն հաճոյից , անյազ ծարաւ ոսկոյ եւ այլք , որք բանիօ՞ն թշուառութեանց մայր կը լինին եւ ի՛նչպիսի ողբերգութեանց կուտան ծնունդ : Ըարձրադիր մարդն , յառաջացեալ քաղաքակըրքութիւնն մի ընդօրինակելոյ ատեն , յաճախ կը հրապուրուի նորա արտարին փայլէն , ստուերին ետեւէն կ'ընթանայ բան իրականութեան , խելք կը կարծէ ինչ որ կապկային հուպտանք կամ թութակային շողփաղփութիւնն է , ձեւապաշտութեանց զոն կուտայ պարզութիւնն ու անկեղծութիւնն , եւ հաստատուն (առարինութիւններ' մուսրեանց , որք կը ներկային նմա ա՛յնքան սիրուն ու յանկուցիչ կերպարանաց տակ . բայց բուն ժողովուրդն , իւր խոնարհութեան , պարզութեան ու անգիտութեան մէջ , կը պանէ անվրար աւանդական առա-

քինութիւնքն , հասարակաց մտքի ճշմարտութիւններն , բերեալ լաւագոյն կը ճանչէ կեանքն որոյ հետ գիրկընդխառն կը կօռի ամէն օր , եւ , շատ անգամ իւր ստորագաս դրից մէջ աւելի երջանիկ քան կարծեցեալ աւագանին , հակառակ իւր վաստակալից կենայ եւ ճնշմանն զօր իւր վերայ կը ծանրացնէ գերագոյն ընկերութիւն մի , կը ծիծաղի իւր ընտանեկան յարկի խորէն նոցա վերայ՝ որք երջանկութիւնն ի ձեռին ունենալ կը համարին , մինչ սին փափարանաց եւ անբնական կրից ու զարեաց են գերի : Երէ ճոխին , ազնուականին , իշխանին կեանքն , բանաստեղծութեան եւ բարոյականի տեսակետով , բեղմնաւոր է , երէ բերրողն հարուստ հանք մի կը զտնէ ներշնչմանց այդ փայլուն , աղմկայոյզ եւ բազմադէպ կեանքին մէջ , եւ երէ բարոյախօսն առատ նիւթերու կը պատանի անդ իւր դասերուն համար , նուա՞գ հարուստ է բանաստեղծական գեղեցկութեամբք եւ բարոյական հրահանգներով քաղաքացւոյն համետ կենցաղն : Բանաստեղծութիւնն ամենութեք է , եւ աւելի՛ անդ ուր մերձագոյն եւս կը զտնուիմք բնութեան , եւ ի վեր հանել գեղեցիկն՝ արդէն կրթել , հրահանգել է զսիրտ :

Բանաստեղծք , սակայն , մասնաւոր ճգտում ունեցած են իւրեանց վիպաց (էջէջ) ու բատերց մէջ ներկայացնել մասնաւանդ բարձր դասուց կեանքի պարագայներն , նոցա փառքերն , նոցա առարիմութիւնքն ու մուրթիւններն , կրքերն որք կը յուզեն զնոսա , նոցա հեշտութիւնքն ու աղետքն : Աստի՛

դիւցազներգութիւնք , աստի՛ յունական ողբերգու-
րիւնք եւ նոցա եւրոպական , մանաւանդ գաղիա-
կան, նմանողութիւնք : Քաղաքացւոյն ու շինականին
կենցաղն կատակերգակին բողոքած մի դաշտ եր-
գութարճութեան եւ ծաղու միայն նիւր կ'ընճեռէր այն
ի զբուսնս ազատին եւ ի խրատ ուսմկին : Հումե-
րոս , Վիրգիլիոս , Լուկանոս , Ստատիոս , Պաս-
սօ , Վոլդեր դիւցազներգութեան գոռ շեփորով
նռչակեցին դից ու դիցափառ արանց գործերն ,
եւ զնոյնս ի տեսիլ ընծայեցին մեզ իւրեանց բա-
տերց մեջ Եսթիդէս , Սօփոկղէս , Եւրիպիղէս :
Ողբերգութիւնն , իւր սուերց վերայ բարձրա-
ցեալ , կարի վեն էր իջնելոյ նամար մարդկային
ընկերութեան ստորին խաւերուն մեջ , եւ Արիս-
տոփանեալ բաժինն էր ժողովութեան՝ նկատեալ մի-
այն իւր տխմարութեան մեջ , իւր բարոց ծաղ-
րական ու ծիծաղելի կողմերով : Ժողովութեան ջեր
նասկացուէր նոյն իսկ ի նոցանէ որք կ'ելնէին իւր
ծոցէն : Քաղիական մատենագրութեան պանծալի
ոսկեղարն մի անանցանելի պատնէշ կանգնած էր
ընդ ողբերգութիւն եւ ընդ կատակերգութիւն :
Պոսնէլլ եւ Ռասին գործ ջունին խառնաղանձին
նետ , ի բաց առեալ առաջինն՝ իւր Սոփոկղէս եւ
Երկրորդն՝ իւր Պոստիւլիս մեջ , յորս երկու մեծ
ողբերգակք մի օր Մոլիերի լեզուն առին փոխ :
Շերսբիլլի իսկ , վիպական դպրոցի այս նանա-
պետին , բատրերգութեան մեծագոյն մասին դիւ-
ցագունք են արբայք եւ իշխանք , բեպետ շէրսբիլլ-

Էան բատրն մի տիեզերք է որ կ'ընդգրկէ զերկին և զերկիր բովանդակ :

Բայց բնական էր այս , եւ չկարէր այլազգ լինել : Որ եւ է ժամանակի գրազիտութիւնն նոյն ժամանակի բարուց հայելին է . կը ներկայացնէ ժամանակին երկու երեսներն . իրականն ու տեսլականն : Մինչ ժողովուրդն կ'արհամարհուէր , մինչ պատմութիւնն ոչ այլ ինչ էր բայց էրէ բազաւորաց եւ զօրավարաց արիւնացին խաղերու զրոյցն , մինչ Արիլլես եւ Աղէքսանդր առաքինութեան եւ մեծութեան տեսլականն կը ներկայացնէին , մինչ Վերսալներ կը մրնցնէին երկինքն իսկ տեղափոխելով արեգակն , տարբեր գրականութեան մի ջեր կարելի սպասել . — Եւ այս նոյն իսկ յունական եւ հռովմեական հանրապետութեանց մէջ , որք , որպէս յայտնի է , ազնուապետական կառավարութիւններ էին , որք ժողովրդեան այլ եւ այլ դասուց բաժանումն կ'ընդունէին , որք գերութիւնն կը նուիրագործէին եւ Բ-Դ-Դ-Դ , Ա-Գ-Լ- կը կոչէին մարդկութեան մնացորդն :

Ասկայն յառաջդիմութիւն կը բայի անկասելի . ժողովուրդն հետզհետէ կը տիրէ իւր անգոսնեալ ու բռնաբարեալ իրաւանց . նախապաշարմունք կը փարատին , եւ կը տեսնուի թէ ինչ որ մարդկութեան աւելորդ ու անպէտ մբութն միայն կը համարուէր՝ հոգին եւ հիմն իսկ է մարդկութեան , թէ հզօրք եւ երջանիկք երկրի՝ զօրութեամբ նորա էին հզօրք եւ ի զին նորա երջանկութեան էին երջանիկք . թէ մի երկրի մեծութեան եւ հարստուէ

բեան ճշմարիտ տարերք ի նմա խնդրուիլ պարտին , բէ պատմութիւն անկատար է ցորջափ չը ներկայացնէ կեանքն , ոգին ու գաղափարներն այդ մեծ մարմնոյն՝ որ ցայնվայր պատուանդանն միայն կը կարծուէր մի բանի առանձնաշնորհեալ եակաց փառքին ու երա՛նուրեան , եւ բէ անկատար է գրականութիւն ցորջափ չպատկերէ ժողովուրդն իւր միանգամայն փայլուն ու մրին կողմերով , իւր առարկնութեամբքն ու մտութեամբք , իւր կենաց աշող բէ ճախող պատահարներով , եւ ցորջափ չմտնէ ի սպաս նորա օգտին :

Եւ քաղաքագիտութեան տեսակետն կ'սկսի փոխուիլ , եւ պատմութիւն կը փոխուի տակաւ , եւ մի բուն ժողովրդական գրականութեան ծընունդն կը լինի կարելի : Այսպէս ի Գաղիա Գրեմանի կ'ստեղծուի . արդէն վոլդեր եւ Տրոքո կը համարձակին ի տեսիլ ածել հասարակաց կեանքն առնուած իրողութիւններ , եւ քաղաքացւոյն սրտի յոյգերովն կը յանդգնին գորովել զազնուականն : Ի Գերմանիա՝ Լեւսինկ , կեօթէ եւ Շիլլեր ժողովրդական բատրն կը կանգնեն , տալով նմա իւրեանց հզօր մտքին յաղթ հիմունքն : Պերանժէ ի Գաղիա , Ռւլանտ ի Գերմանիա ժողովրդական երգի համեստ կաղապարին մէջ կը ձուլեն իւրեանց հանճարն : Յետոյ Հիւկօ , այդ գերազանցապէս ժողովրդական քերթողն , Ռէյ Պլէի եւ Տէր Մոլլի անձանց տակ կը ներկայէ մեզ ժողովուրդն ու քաղաքութիւնն ընդգրկուած սիրոյ համբուրի՝ մի մեջ :

Մի նոր ազգ կը ծնի նաեւ դիւցազնական վեպի -
կէորէ կը գրէ ՀԵՐՏՆ — ԴՈՐՆԷՆ Եւ Լամար-
դին ԺԵՆՆԵ :

Կէորէ ստուգիւ հումերեան ճեւղով կ'երգէ ոչ
բէ աստուածազարմ Աքիլլէսի մի քեցն, այլ միջնա-
կարգ պարզ ընտանիքի մի կեանքն . ոչ զինուց շա-
ջիւն ու բանակաց ընդհարումն կը լսուի անդ , այլ
բաժակաց՝ զոր բարեկամութիւն կը բաղխէ միմ-
եանց սիրածայն . ոչ արքայաժողով երախանաց
մէջ դրացի ժողովրդոց դէմ ատելութիւն Եւ ման
կը գոռան անդ , այլ ընտանեկան ազուժներու
մէջ մերձաւորին բշուատութեան վերայ կը գորո-
վին , Եւ կը խօսին այն հաճոյից վերայ զոր կ'ըզ-
գայ մարդ սփոփելով այլոյ վիշտն . ոչ փառասի-
րիւն Եւ նախանձ կը մրմռան անդ կոյր Եւ վայրագ ,
այլ կը խօսին մեղմութեամբ սղջմտութիւն , փորձ
իմաստութիւն Եւ անկեղծութիւն . ոչ կիկն մրցա-
նակն է անդ արիւնջուայ յաղթականին Եւ նորա
բիրտ զքօսանաց առարկայն , այլ ճշմարիտ սիրոյ
վարձքն , առարիճութեան պսակն , մարդոյն ըն-
կերն Եւ ընտանեկան յարկի տիրունին :

Նիւրոյն նման պարզ Եւ գեղեցիկ է միանգա-
մայն ոճն . սերեսերք չկան . ջնիացներ , այլ կը
նկարէ բնութիւնն իւր մերկութեան մէջ , Եւ կը
բողու նմա խօսիլ իւր անզարդ այլ վեհափառ լե-
զուն : կը բառականանայ զգալով Եւ ի վեր հա-
նելով այն զմայելի գեղեցկութիւններն զորս կը
բազուցանէ յինքեան քաղաքացւոյն անշուք բնա-
կարանն , Եւ այն իմաստութեան ու հոգւոյ ազ-

նուութեան զաններն որք կը ծածկին նորա մը-
տաց ու սրտի խորն : Մի գերազանցապէս նրա-
րանանգիջ ու բարոյական վեպ է սա , օգտակար
մեծին ու փոքրին , ճոխին ու խոնարհին : Շատ
խակ կարգաց ժողովուրդն մեծամեծաց կեանքն ու
յառեց իւր աչերն պատկերներու վերայ որք կը
շլացնէին զինքն , բայց որք չբոսացնէին իւր
սիրտն . այդ դիւբական աշխարհին մէջ օտար կըզ-
գայր զինքն . պէտք է որ իւր իսկ կեանքի պատ-
կերն դիտէ գծուած ճարտարարուեստ վրձիններէ,
եւ ուսանի գնահատել ինչ որ կայ լաւ եւ գեղե-
ցիկ ընդերկար ամարգ ու ստորին համարուած
իւր կենցաղոյն մէջ : Եւ բող ազնուագարմն ու մե-
ծափարբամն ուսումնասիրեն այն իմաստութեան ,
պարզասիրութեան , մարդասիրութեան դասերն
գորս կուտան նոցա պարկեշտ եւ աննշան քաղա-
րացիք :

Լամարդին , որ իւր « Ընտանեկան ընթացք
գրագիտութեան » անուն ամսօրեայ հանդիսին մէջ
մի վերլուծութիւնն ըրած է կէօթի այս չքնաղ
վեպին , գնահատելով նորա բարձր արժեքն բա-
րոյականի վերաբերութեամբ , կ'ըսէ . « Եթէ մեր
կառավարութիւն լինէինք , միլիոնաւոր օրինակ-
ներով տպագրել կուտայինք զՆԵՐՆԷ Ե ՊԵՐՆԷ-
Եւ ձրիապէս կը սփռէինք քաղաքաց եւ գիւղօ-
րիից մէջ՝ գործարանաց եւ մասրներու գիշերային
ժամերն զմայրեցնելոյ եւ նրանանգելոյ համար :
Այսբան երկար ատեն գրականութիւնն մոլութեան
ի նպաստ ի կիր արկանելէ յետոյ՝ ժամ է որ բա-

րոյականութեան ի սպաս գործածենք զայն : Ժողովրդեան համար բարոյականն զգացման մեջ է, եւ զգացման համար ամենէն ժողովրդական խողովակն է մի գեղեցիկ քերթութիւն :

Ահա է՛ր եւ մեր կը փութամք գերմանացի հոյակապ քերթողին սոյն գեղեցիկ վեպին բարգմանութիւնն մատուցանել մեր ժողովրդեան : Վըստան էմ որ Մասիսի Թերթօնին(*) ընթերցողաց հաճոյք եւ օգտակարութիւն միանգամայն պիտի ընծայէ :

Բնագիրն տաղաչափեալ է, բայց մեր արձակ բարգմանել նախընտրեցինք, ինչպէս եղած է գաղիական բարգմանութիւնն ալ : Ռւրախ էմ որ մեր գերմաներէն լեզուին ունեցած փօքր ի շատ հմտութիւնն ներեց մեզ, գաղիական բարգմանութիւնն ընդ աջօք ունենալով հանդերձ ի խորհրդակցութիւն, ուղղակի բնագրին վերայ եւ ըստ այնմ ընել մեր բարգմանութիւնն, որով քան զգաղիականն շատ աւելի հաւատարիմ մնացած լինել կը կարծենք բնագրին, եւ այս անշուշտ մեր ազգային լեզուի չբնաղ յատկութեանց շնորհիւ, որ ա՛յնքան քաջ կը զուգորդի գերմաներէնի դիւրաբերութեանց եւ կը մասնակցի նորա հարստութեանց : Աստի յառաջ եկած է այն զգալի տարբերութիւն, ոճոյ մանրամասնութեանց մասին, որ


(*) Հիշե՛աւ եւ Գոգոթի-Թարգմանութիւնն առաջին անգամ՝ հրատարակեցինք Մասիսի Թերթօնին մէջ :


անտարակոյս չպիտի վրիպի մեր բարգմանութիւնն
գաղիականին հետ բաղդատողաց աչքէն , տար-
բերութիւն՝ որ սակայն յօգուտ ճշգրտեան է. հա-
ւատարմութեան է , այսինքն այնպիսի հանգամա-
նաց , որք խնդրելի են մանաւանդ ի բարգմա-
նութիւնս :

1882 Ապրիլ 19 խոհեւտար



4011109E







ԿԱԼԵՌՈՊԵ ()

ՃՈՎՏՏՈՒՄ ԵՒ ՄԵՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

3048
39



'Ն երբեք այսքան մե-
նաւոր ու ամալի տեսած եմ
վաճառանոցն ու փողոցներն . լքեալ ու
թափուր կը թուի քաղաքն , ե համակ
մեռելափայ : Ոչ իսկ յիսուն մեր բոլոր
բնակիչներէն մնացել են կարծես : Ի՞նչ
բանի կարող չէ հետաքրքրութիւն : Ամէն ոք կ'ըն-

(*) Կէօթէ ինն Աստուծոյն տալոյն կը կոչէ այս վեպին
ինն երգերն :



Թանայ երազափոյթ տեսնել հէք փախստէից տը-
խուր անցքն : Աստի ցխճուղին , ընդ որ կ'անցնին ,
կայ մի ժամու ճանապարհ , և սակայն միջօրէի հը-
րատոշոր փողոցն մէջէն կը դիմեն անդր : Ես չէի
ուզեր տեղէս շարժիլ տեսնելոյ համար թշուառու-
թիւնն այն բարի մարդոց որք , թողլով անդրհոն-
նական գեղեցիկ ամուսնքն , իւրեանց ազատեալ
գոյիւք , կը դիմեն գէպ յայսկոյս և կը թափառին
մեր պտղաւէտ հովտին երջանիկ խորշին ու նորա
կամակոր շաւղաց մէջ : Բարւոք գործեցիր , կի'ն
դու , որ մեր որդին ընդ առաջ յղեցիր նոցա հին
ձորձովք և պարէնիւք , որպէս զի բաշխէ թշուա-
ռաց . զի տալն գործն է մեծատան :

Ինչպէս լաւ կը վարէ երիտասարդն և քաջիկ կը
սանձահարէ մեր խստերախ երիվարներն : Մեր նոր
կառքն շատ գեղեցիկ կ'երևւի . անդորր կը նստին
անդ շորս անձինք , ի բաց առեալ կառավարն իւր
նստարանի վերայ : Այս անգամ մէն միայնակ կը
տանէր . ինչպէս գիւրաթաւալ կը գլորէր փողոցն
գառնալոյ ատեն :

Այսպէս կը խօսէր , գոհ ու զուարթ , Ուլեղէն
Աւի-ձու պանդոկապետն իւր կենջ , նստած վա-
ճառանոցին վերայ՝ իւր տան դրանն առջև :

Եւ այսպէս պատասխանեց ժրագլուխ զգօնա-
միտ տանտիկինն .

Բարեկա'մս , սոփորաբար շեմ շուայլեր այն ձոր-
ձեր զոր ոչ եւս կը հագնիմք . վասն զի շատ բանի
գեռ կը ծառայեն և գրամով չէ գիւրին ունենալ
զայնս երբ կարօտիմք նոցա : Բայց այսօր յօժարա-

միտ ընծայեցի մեր լուսագոյն վերմակներէն ու շապիկներէն շատերն , երբ լսեցի թէ աղայք և ծերունիք կ'երթան մերկ անպատասպար : Պիտի ներե՞ս ինձ սակայն , զի քո դարան եւս կողոպտուեցաւ , և մանաւանդ ազնիւ բամբակէ ու ընտիր բուրդով կրկնուած ծաղկատիւլ ցայդահանդերձդ այլ առի՛ մաշած ու հին էք և բոլորովին նախնածեւ :

Բարի տանուաէրն ժպտեցաւ և ըսաւ .

Սակայն շեմ կարող չցաւիլ սակաւիկ ինչ այդ հինաւուրց բամբակեայ ցայդահանդերձին , այն բուն հնդիկ կերպասին վերայ . նմանն չէ կարելի գտնել այսուհետեւ : Բայց չէ փոյթ . արդէն այլ եւս չէի հազներ գայն : Անտարակոյս այժմ ուրիշ կերպ պէտք չէ ներկայանալ , բայց միայն թիկնոցով և կոշիկներով . հողաթափն ու գդակն վտարուած են :

Տե՛ս , ընդմիջեց կինն , արդէն իսկ կը դառնան ոմանք ի նոցանէ որք գնացին տեսնել փախրատէից անցքն . ամէն ինչ վերջացած պարտի լինել : Տե՛ս , ի՛նչպէս ամէնուն կոշիկներն փոշտեալ են . իւրեանց դէմքերն ի՛նչպէս կը բոցաւառին . և անցնիւր որ՝ թաշկինակ ի ձեռին՝ իւր հակառի քերտն կը սրբէ : Չէի ուզեր բնաւ այս տօթածամուն երթալ ի զնին մի այնպիսի սրտահմլիկ տեսարանի : Պատմութիւնն լսել բաւ է ինձ :

Եւ հայրն բարի ըսաւ վստահութեամբ .

Մի այսպիսի հնձոյ գուն ուրեք ի գէպ կուգայ մի այսպիսի օղ : Չոր ու անանձրեւ , ցորեանն սիրտի կարեմք ամբարեւ , որպէս արդէն իսկ ամբար-

րեցիներ խարն . սրայծառ է երկիրք , ոչ գոյղն ինչ
ամոյ կը տեսնուի անդ , և դովաշունչ զեփուսն կը
փչէ յարեւելից : Ահա՛ մի տեսական օդ , և արդէն
քաջ իսկ հասունցած է ցորեանն . վաղիւ կ'սկսիմք
քաղել առատ հունձքն :

Մինչ նա կը խօսէր , հետզհետէ կ'անէր ամ-
բոխն արանց և կանանց որք շուկայէն անցնելով
կ'երթային յիւրեանց բնակարանն . և իւր դասերց
հետ , Ղանտոյի մէջ շինուած քաց կառքով , իւր
այն ինչ նորոգուած տունն , որ կը գանուէր յայն-
կոյս հրատարակին , կը գառնայր նաեւ փարթամ
գրացին , տեղւոյն առաջին փաճառականն : Ոգեւո-
րեցան փողոցք , զի մարդաշատ էր քաղաքիկն , և
առևտրոյ ու ճարտարութեան այլ և այլ ազգք կը
մշակուէին անդ :

Այսպէս ամուլքն ընտանի , նստած ի մուտս ի-
ջեւանին , կ'զրօնուին այլ և այլ դիտողութիւն-
ներով ամբոխին վերայ որ կ'անցնէր : Բայց յար-
գելի տանտիկինն հուսկ ուրեմն « Տե՛ս , ըսաւ , ե-
րէցն առ . մեզ կուգայ , և մեր գրացի դեղազործն
իւրեան հետ է . պէտք է որ պատմեն մեզ ինչ որ
տեսան և ինչ որ տխուր է տեսնել : »

Երկոքին եւս մօտեցան բարեկամութեամբ , ող-
ջունեցին ամուսիններն և նստեցան փայտեղէն նըս-
տարանաց վերայ , թօթափելով փոշին յտօից եւ
թաշկինակաւ հովահարելով զինքեանս : Յետ փո-
խադարձ յարգանաց , դեղազործն սկսաւ զառաջինն
խօսիլ և ըսաւ գրեթէ գառնացեալ .

Ահա՛ այսպիսի են մարդիկ . երբ մի աղէտ կը

հասնի մերձաւորին վերայ, իսկոյն կը փութան դիտել բերանարաց և խնդագին : Անցնիւր որ կ'ընթանայ ի տեսիլ բոցոյն որ կը սլանայ յերկինս աւերածու, հէք մահապարտին որ վշտագին կը քայլէ ի մահ : շիմայ ալ ամէն որ դուրս ինկած է ամէն երթալոյ տեսնելոյ համար իւրեանց ընտանեկան յարկերէն արտաքսուած բարի մարդոց թշուառութիւնն, և ոչ որ կը խորհի թէ նմանօրինակ ճակատագիր մի կարէ նաև իւրեան վիճակիլ, գուցէ ի մտոյ կամ առ յարա : Աններելի կը դանեմ զայս թեթեւամտութիւն . սակայն անբաժին է մարդկային բնութենէն :

Սե խօսեցաւ յայնժամ աղնուամբա հանճարեղ ժողովրդապետն, զարդն քաղաքին, դեռ երիտասարդ, մօտ յայրութիւն : Սա կը ճանչէր կեանքն, և գիտէր իւր հօտին պէտքն երբ կը խօսէր . համոզուած էր Սուրբ գրոց բարձր արժէքին վերայ, որք ի վեր կը հանեն մեզ մարդոց ճակատագիրն ու վախճանն յոր սահմանուած են . քաջ նաև ծանօթ էր արտաքին ընտրելագոյն մատենից : Սա խօսեցաւ . Չեմ ես գատապարտեր ինչ որ բնութիւն, մայր խանդակաթ, տուած է մարդոյն իրրու անմեղ յօժարութիւն . զի յաճախ ինչ որ միտք և բանականութիւն շեն կարող գործել՝ կը գործէ մի բարեղէպ բնագղումն որ կը վարէ զմեզ անգիմադրելի գորութեամբ : Աթէ քննասիրութեան ոգին հզօր հրապուրանօք : յանկուցանէր զմարդ, ըսէ՛ք, մարդն պիտի կարէ՞ր ծանօթանալ այն սունչութեանց, որովք էակք աշխարհի իրերաց հետ կը

շաղկապին զեղայարմար : Նախ կը ցանկայ նորոյն , սպա կը խնդրէ օգտակարն անխոնջ փութով . հուսկ ուրեմն կը տենչայ բարւոյն , որ կը բարձրացնէ զնա և կուտայ նմա իւր ճշմարիտ արժանիքն : Մինչ երիտասարդն է , թեթեւամտութիւն մի դուարի՛ ընկեր է նմա , որ կը թաքուցանէ վրտանդն , և կը ջնջէ արագ աղեխորով վշտին հեաքերն , երբ հազիւ անցած է այն : Անշուշտ յարգելի է այն մարդ ոյր միտք , աւելի հասուն հասակի մէջ , կը թողու զայդ անխորհուրդ արբեցութիւն և կը լինի տակաւ լրջագոյն , որ երջանկութեան որպէս և ապերջանկութեան մէջ կը տքնի ժիր և դործօն . նա կ'արտադրէ բարին և կը դարձանէ փնասն :

Միրալիր գէմքով ըսաւ իսկոյն տանտիկինն անժոյժ .

Պատմեցէ՛ք մեզ ինչ որ տեսաք , զի բազմալի է ինձ գիտել զայն :

Յետ ամենայնի զոր տեսայ , պատասխանեց զեղագործն . շեշտելով , գժուարին պիտի լինի ինձ դառնալ շուտով յուրախութիւն : Աւ ս՞՞վ կարէ պատմել այն բազմազան բազմադիմի աղէտն : Արդէն ի հեռուստ նշմարեցինք փոշին շեւ իջած ի մարդապետինն , և բազմութիւնն որ՝ անվերջ՝ կ'երթայր բլրէ ի բլուր՝ մինչ ընդ ազօտ գեռ կը տեսնուէր ամէն բան : Բայց երբ հասանք այն ճամբուն վերայ որ խտարնակի կը կարէ ձորն , աւա՛ղ , հեախոտայ ու կառայ հո՞՞ք բազմութեանն ու ժխորին հակառակ , շատ իսկ տեսանք դարձեալ այն թըշ-

ուսաներէն երբ կ'անցնէին , խելամուտցինք թէ քանի՛ դառն է ցաւագին մախուսան և քանի՛օն քաղցր՝ հապճեպով փրկուած կենաց զգացումն : Տխուր էր տեսնել այն բազմապղի դոյքերն , որ բարեկազմ տան մի յարկին տակ միայն կը ծածկուին եւ զորս բարի տանուտէրն իւր շորտղին պատշաճագոյն տեղերու մէջ դրած է , միշտ առձեռնապատրաստ , զի ամէնքն այլ սլիտանի և օգտակար են , տեսնել այդ ամէնն՝ շտապաւ ազատեալ՝ այլ և այլ կառաց ու սայլից վերայ խառնիխուռն բեռցուած ու դիզուած : Դարանին վերայ դրուած էին նքոյրն ու բրդեայ վերմակն , մահիճն՝ տաշտին մէջ , և սաւանն՝ հայելւոյն վերայ : Եւ , որպէս քսան ամօք յառաջ տեսանք հրդեհին առան , վտանգն այնպէս մարդոյ խելքն կ'առնու գլխէն որ անպիտանն կը փրկէ և կը թողու պատուականն : Նոյնպէս և հոս , եղներն ու ձիերն տաժանագին փարելով , կը տանէին յախուռն ու անխորհուրդ հողածուխեամբ դուզնաքեայ իրեր , հին փտած տախտակներ ու կարասներ , վառեկաց վանդակն ու սագանոցն : Այսպէս նաև կանայք և մանկունք շնչապառ գայթ ի գայթ կ'երթային ծրարներով բեռնաւորեալ կամ ճնշեալ կողովներու և որթերու ներքեւ , որք լի էին անպէտ իրերով . ա՛յնքան դժկամակ կը թողու մարդ յետինն իսկ իւր ստացուածոց : Աոյն օրինակ , անկարգ և շփոթ , կը յառաջանայր ամբօխն բնդ ուղին փոշեկից : Մին , տկար անասուններով , կ'ուզէր գնալ յամբաքայլ , մի ուրիշն կ'ուզէր ձեպել : Անդ կը բարձրանային

խառնամայն՝ ճմլեալ կանանց և տղայոց ճիշն , անասնոց գոյիւնն , շանց հաջիւնն , և ողբազին ազտազին ծերոց և հիւանդաց որք ի բարձունս ծանրարեան կառաց նստած էին անկողնոց վերայ և կը տատանէին երերակոծ : Բայց , յեզր մի գառիվեր ուղւոյ , անիւն՝ ուժգին ճնշուելով՝ կը խուսափի իւր գծէն ճոճածայն . կը գառնայ սայլն և կը գըլրի գարահոս փոսոյն մէջ , եւ բուռն ցնցումէն մարդիկ՝ սոսկալի աղաղակներ արձակելով՝ կը նեաուին հեռին . գալտին մէջ , բայց բարեբախտարար անմիաս : Աւելի ուշ ինկան արկեղք և սայլէն խուն հեռի , ականատեսն կ'սպասէր անտարակոյս տեսնել այդ մարդոց ջախջախիլն պահարաններու և գարանաց ներքեւ : Եւ այսպէս խորտակեալ կը մնայր այդ կասքն , և մարդիկ՝ անօգնական , զի սյլք յառաջ անցան և գացին արագընթաց , ինքեանս և եթ խորհելով և հոսանքէն ընդ քարշ տարուած : Յայն դիմեցինք իսկոյն , և տեսանք որ հիւանդք և ծերունիք . որք ի տան և յանկողնի հազիւ կը կրէին իւրեանց երկարատեւ ցաւերն , անդ գեանատարած փրաւոր կը հեծէին և կը կողկողէին , արեւէն հրկիզեալ և ալեծուփ փոշիէն հեղձամղձուկ :

Ձգածեալ , ըսաւ յայնժամ մարդասէր պանդոկապետն .

Իցիւ Հերման պատահէր նոցա , կազդուրէր ևւզղեցնէր . ինձ դժպիլ պիտի լինէր տեսնել զայնս . ցաւէ ինձ տեսիլ թշուառութեան : Արդէն , ի դուրս գորովեալ յառաջին գրոց այգքան մեծ ա-

զեախց , փութացիներ յղել մասն ինչ մեր առատու-
թենէն , որպէս զի գէթ ոմանք այդ թշուառներէ
կարենան օգուտրիլ և երեւին մեզ արտօնեալ : Բայց
վերջացնե՛մք այս տխուր պատկերներն . խէթ ևւ
մտահոգութիւն , որք քան զչարիս իսկ դժնդակ են
ինձ , շոյս կը սողոսկին մարդոց սրտին մէջ : Ս'ն ,
երթամք ներքսագոյն սենեակն , որ աւելի զով է ,
ուր շթափանցեր արեգակն , որոյ թանձր պա-
տերն շեն ներքս տապոցն ներս մտնել . և տիկինն
այլ կը բերէ մեզ ութսուն երեքէն շիշ մի փարա-
տելոյ համար մեր տխրութիւն : Աստ չէ կարելի
ըմպել հաճութեամբ . ճանճերն կը բզզան բաժա-
կաց շուրջն :

Եւ գնացին անդր , և զովութիւն զուարճացոյց
զինքեանս :

Մայրն բերաւ խնամով այն վնիս հիանալի գի-
նիէն անագեաց բոլորչի շողչողուն արտէի մի վերայ,
ողորկ շիշի մի մէջ և հոննական գինւոյն յատուկ
կանաչադոյն գաւաթներով . և երեքին նստան շուրջ
կըտր , թխացեալ ու համակ փայլիլուն սեղանին
որ հաստատուած էր ամուր ստից վերայ : Իսկոյն
պանդոկապետին և երիցուն բաժակք ընդհարեցան
յստակաձայն . սակայն երրորդն անշարժ կը բռնէր
զիւրն մտախոհ , և պանդոկապետն ձայն արձակեց
առ նա սիրալիր խօսքերով .

Ս'ն անդր , տէր դրացի , խմե՛նք , ցայսօր պա-
հեց զմեզ Աստուած թշուառութենէ , ևւ պիտի
պահէ նաև յապագային . քանզի ո՞վ յստատովանիւր
թէ ահաւոր հրդեհէն ի վեր , որ ա՛յնպէս խափու

պատուհասեց զմեզ, նա յար ուրախացուցած է զմեզ
և յար պաշտպանած, որպէս կը պահպանէ մարդ-
իւր աչաց թանկագին բիրն որ սիրելի է նմա ա-
ռաւել քան զայլ մատունս իւր մարմնոյն : Պիտի
զլանա՞յ մեզ այսուհետեւ իւր թիկունքն ու պաշտ-
պանութիւն . — զի վտանգաց մէջ մանաւանդ կ'ու-
սանի մարդ իւր հզօր զօրութիւնն : Այս ծաղկեալ
քաղաքն, զոր նախ վերահանդնեց իւր աճիւններէն
ժրաջան քաղաքացւոց ձեռքով և զոր լցոյց ապա իւր
օրհնութեամբք, պիտի ուզէ՞ կործանել զայն վե-
րջաբին և ի չիք դարձնել ա՛յնքանի վաստակ :

Պայծառ աղէ՛մ և քաղցրաձայն ըսաւ հոփուն պատ-
ուական .

Սերտի՛ւ յարեցէ՛ք հաւատոց, և պի՛նդ կացէ՛ք
այդ համոզման մէջ . զի նա երջանկութեան մէջ
զգօն ու աներկեւան կը գործէ զմարդ, գժրազ-
դութեան մէջ ազնուագոյն աստիանքն կը շնորհէ
և կը տածէ գերագոյն յոյսն :

Պանդոկապետն յարեց յայնժամ այրական իմաս-
տուն մտածութեամբք .

Ո՛րպիտի հիացմամբ ողջունած եմ յաճախ Հու-
նոսի ալիքներն, մինչ, գործոցս աղազաւ ուղեւո-
րելով, կը մերձենայի նմա վերստին : Միշտ վեհ
երեւցած է ինձ և միտքս ու սիրտս փսեմացուցած .
չէի կարող մտածել սակայն թէ ընդհուպ իւր բազ-
մազուարճ աստուհքն պատնէ՛շ պիտի լինէ՛ին մեզ
ընդդէմ Գաղիացւոց, և իւր լայնասրտ ձորն՝ մի
անանցանելի խրամ : Տեսէ՛ք, ա՛յսպէս կը պաշտ-
պանէ զմեզ բնութիւն, ա՛յսպէս կը պաշտպանեն

բաջալանի Պերմանք և ա՛յսպէս կը պաշտպանէ Տէրն-
 ո՞վ կ'ուզէ վճատիլ յիմարարար : Խոնջ են արդէն
 պատերազմողք , և ամէն ինչ խաղաղութիւն կ'ազ-
 դարարէ : Իցի՛ւ ուրեմն , երբ այս երկար ատենէ ի
 վեր բաղձացեալ տօնն խմբուի մեր եկեղեցւոյն մէջ ,
 մինչ զանգակն հնչէ երգիոնին զուգածայն և դանշէ
 շեփոր երգակցելով բարձրանուազ ՉԿԷ ԱՊՊՈՅ
 ԷՌԷՆԻԷԻՆ , իցի՛ւ յայնժամ և իմօ Հերման մի և
 նոյն օրն , Տէ՛ր Երէց , իւր խօսեցելոյն հետ ներ-
 կայանայր ձեր առջև ի սեղանն , և այն երջանիկ
 հանդիսական օրն , ամէն աշխարհաց մէջ տօնա-
 խըմբեալ , ծագէ՛ր ինձ յազազային իրբու տարե-
 դարձն մի ընտանեկան ցնծութեան : Յաւօք սրտի
 կը տեսնեմ սակայն որ այս երիտասարդն , այն-
 քան դործօն եւ եռանդուն տան մէջ , այլուր
 դանդաղ և երկչոտ է : Չսիրեր երեւիլ ակումբնե-
 րու մէջ , կը խորշի օրիորդաց ընկերութենէն և կը
 մերժէ զուարթարար պարուց զբօսանքն որում ա-
 մէն երիտասարդ կը ցանկայ :

Ա՛յսպէս խօսեցաւ , և ունկն կը մատուցանէր ու-
 շաղիբ : Լսելի կը լինէր ստնաարտի երիվարաց հե-
 սաւոր գոսիւնին մօտիլն , և երազահոլով կատքի
 մի գզրդիւնն , որ որտալնդօստ կը մտնէ ահա տան
 մտից կամարներուն ներքեւ :



The first part of the paper is devoted to a general discussion of the
 various methods which have been proposed for the determination of the
 constants of the equation of state of a gas. It is shown that the
 most reliable method is that of the virial equation of state, and
 that the constants of this equation can be determined from the
 experimental data by the method of least squares. The constants
 thus determined are compared with those obtained by other methods,
 and it is shown that they are in good agreement with the values
 obtained by the method of least squares. The second part of the
 paper is devoted to a discussion of the various methods which have
 been proposed for the determination of the critical constants of a
 gas. It is shown that the most reliable method is that of the
 virial equation of state, and that the critical constants can be
 determined from the experimental data by the method of least
 squares. The critical constants thus determined are compared with
 those obtained by other methods, and it is shown that they are
 in good agreement with the values obtained by the method of
 least squares.

ՅԵՐՐՍԻԵՈՐ

ՏԵՐՔՍԻՔՈՐ

ՀԵՐՄԸՆ



Երբ սենեկին մէջ մտաւ բարեձեւ
բաջակազմ որդին, ի նա հայեցաւ
երէցն սուր ու թափանցող նայ-
ուածքով և զննեց նորա գէճքն ու
ողջոյն կերպարանն հետախոյզ ա-
չօք մի գիտողի, որ գիտէ հեշտիւ
ընթեռնուլ գիմաց գծերն. ժրջ-
տեցաւ յետոյ և ըսաւ նմա փտա-
հուփեամբ.

Իբր համակ փոխուած մի մարդ
կը գտնուար. երբե՛ք զձեզ այսքան
արթուն զուարթուն չեմ տեսած և ո՛չ ձեր նայ-
ուածքն այսքան կենդանի: Ուրախ էք և պայծա-
ռազէմ. յայտնի է թէ նպատաւ բաշխել էք աղքա-
տաց և նոցա օրհնութիւնքն ընդունել:

Լրջութեամբ եւ հանդարտագին պատասխան
տուաւ Որդին.

Թէ լաւ գործեցի՛ չգիտեմ. բայց սիրտս հրա-
մայեց ինձ գործել ինչ որ արդ պիտի պատմեմ:
Մայր, քիչ մի շափազանց ժամադանձառ եղաք

28944943

խնդրելով և ընտրելով ձորձերն . ծրարն ուշ կազմուեցաւ , և գինին ու գարեջուրն կառքի պահարանին մէջ յամբ և դժուարաւ զետեղուեցան : Երբ , դուրս ելնելով քաղաքի դռնէն , միեկայ դաշտին մէջ , արդէն իսկ յետս կը դառնայր քաղաքացւոց ամբոխն կանամբք և մանկատաւ . արդէն հեռացած էին փախստեացք : Երազեցի ընթացքս և ուղղեցի զայն դէպ յայն գիւղ ուր լսեցի թէ պիտի գիշերեն : Մինչ կը հետևէի այս նոր ճամբուն , ահա յակն ինձ անկաւ մի սայլ , ամուր փայտերէ շինուած , լծեալ երկու եզներէ — յաղթագոյնքն ու հզօրագոյնքն օտար աշխարհաց — . պօրեղ քայլերով առ երի կը գնայր մի օրիորդ , որ երկայն դաւազանաւ կը վարէր երկու վիթխարի կենդանիներն , մերթ խրախուսելով , մերթ զսպելով , զզուշութեամբ տանելով կառքն : Երբ տեսաւ զիս օրիորդն , երիվարացս մօտեցաւ հանդարտութեամբ և ըսաւ .

Մեր վիճակն միշտ ա՛յնքան ողորմելի չէ եզած որչափ կը տեսնէք այժմ այս ճանապարհի վերայ , և չեմ ես սովոր խնդրել նպաստ օտարէն որ յաճախ դժկամակութեամբ կուտայ և զերծանելոյ համար աղքատէն . բայց կարօտութիւն կը մղէ զիս յայն : Անդ տարածուած կայ յարդին վերայ մի գոյաւոր մարդոց կին որ արդ իսկ ազատեցաւ . յերկունս էր երբ դրի զնա այս սայլի վերայ . հազիւ կարացի զայն փրկել այս եզներով ու կառք . յետս մնացինք . շունչն միայն կայ կենդանի իւր վերայ , և նորածին մանուկն մերկ է իւր բազկաց մէջ : Շատ

դոյզն օգնութիւն մի կարեմք սպասել մեր ընկեր-
ներէն , եթէ գանձմք գիրենք մօտագոյն գիւղին
մէջ ուր պիտի հանգչինք այսօր . բայց կը վախճամ
որ հեռացած գացած լինին արդէն : Եթէ շրջա-
կայներէն էք ուրեմն և ունիք ձեզ անպէտ կտաւի ,
չնորհ ըրէք տալ թշուառաց :

Այսօրիկ էին իւր բանք . և կինն մատաղածին ,
դաշկահար և նուազուն , վեր հանելով ձգամբ իւր
գլուխն , ինձ նայեցաւ . իսկ ես սպասասխանեցի .

Յիրաւի շատ անգամ մի երկնային ողի կը խօսի
բարեկիր մարդոց սրտին , որով նոքա կ'զգան տա-
ռապանքն իւրեանց հէք եղբօր . այսպէս մայրս ,
նախազգարով ձեր թշուառութիւնն , տուաւ ինձ
մի ծրար՝ մերկերու պիտոյքն գոհացնելու համար :

Եւ լուծանելով իսկոյն ծրարին կապերն , տուի
նմա հօրս ցայգահանդերձն և շապիկներն և կտա-
ւին : Շնորհակալ եղաւ ինձ ցնծագին և գօշեց .
Երջանիկն շհաւատայ թէ գեռ հրաշք կը գործուին ,
զի գժբախութեան մէջ միայն կը ձանչէ մարդ Աս-
տուծոյ մասն , որ գրարեւիրս մարդիկ կը մղէ ի
բարեբարութիւն : Ինչ որ ըրաւ նա արդ մեզ ձեր
ձեռամբ՝ ընէ՛ դայն և ձե՛զ իսկ :

Եւ կը տեսնէի որ տղարերն խնդութեամբ կը
չջափէր մէն մին ձերմակեղէններէն և մանաւանդ
ցայգահանդերձին կակուզ բուրդն :

Փութանք , ըսաւ նմա կոյսն , յայն գիւղ ուր մեր
ընկերք արդէն հասած կը հանգչին և ուր պիտի
մնան այս գիշեր . անդ կը սպասորստակ մտա-

մայն մանկան խանձարուբքն և այլ ամէն ինչ որ պիտանին է :


Եւ ողջունեց զիս վերստին և շնորհակալ եղաւ անդրէն սրտագին , խիժանեց եղներն ու մեկնեցաւ կառքն : Եւ սակայն կը յամէի մեկնիլ և ձիերս կը բռնէի . զի յերկուս խորհուրդս կը հերձնայր սիրտս տարակուսեալ , թէ արդեօք երթայի՞ արագասլաց ի գիւղն՝ միւս թշուառաց բաշխելոյ համար նստարեղէններն , թէ անդ իսկոյն զամէնն յանձնէի օրիորդին , որպէս զի նա բաժնէր իմաստութեամբ : Եւ ընդ հուզ վճիռ առաւ սիրտս , և վարեցի կառքս իւր ետեւէն և հասնելով առ նա՝ ըսի փութով .

Վարեսիրտ օրիորդ , միայն ձորձ շտուաւ ինձ մայրս որպէս զի այնու մերկերն զգեցնեմ , այլ յարեց ի նա ուտեստ և ըմպելիք , յորոց բաւական քանակութեամբ ունիմ կառքիս պահարանին մէջ , արդ կը խորհիմ ձեզ աւանդել նաև այս նուէրներն , և այս կերպով կը կարծեմ լաւագոյնս կատարած լինել իւր հրամաններն , զու ընտրանօք կը բաժնես . զուցէ ըստ բախտի դորձէի ևս :

Օրիորդն պատասխանեց . Հաւատարմութեամբ և արդարապէս պիտի դորձամեմ ձեր պարգեւներն , և կարօտեալն պիտի հրճուի :

Այսպէս խօսեցաւ նա : Եւ փութանակի բացի կառքի պահարանն , զուրս հանեցի ծանրակշիռ երչիկներն , հացերն , գինւոյ և դարեկրոյ շիշերն , և մատուցի նմա զամէնն : Յօժարակամ պիտի տայի նմա աւելի ևս , բայց դատարկ էր պահարանն :





Չամէնն զեանեղեց նա խնամով առ ոսոս մատաղա-
ծնին , և հեռացաւ : Աս փութացի յեաս ի քա-
ղաք իմ ձիերով :

Այն ինչ վերջացոյց Շերման զիւր խօսան , և ահա
լեզուանի զրացին խօսել կարաւ և գոչեց . Մհ ,
երանի այնմ որ այս փախստեան և սաղնապոյ
աւուրց մէջ միայնակ կ'ապրի իւր առնն և զորով
չեն փաթթուիր՝ գողգողուն՝ կին մի և մանկունք :
Երջանիկ կ'զգամ զիս արդ . շէի ուզեր բնաւ այս-
օր հայր կոչուիլ և կնոջ ու զաւակաց հոգն ունե-
նալ իմ ուսոց վերայ : Արդէն շատ անգամ փախչիլ
մտարերած եմ , և ժողոված եմ ամէնէն թանկա-
զին գոյքերս , հին արծաթեայ սպասքս , բարեյի-
շատակ մօրս ոսկեզէն շղթայքն , յորոց ոչինչ զեռ
ծախուած է : Ստուգիւ բազում ինչ թողուլ հարկ
պիտի լինի որոյ անշն դիւրաւ չէ կարելի ընուլ . պի-
տի ցաւիմ մանաւանդ , թէպէտ մեծագին ինչ չեն՝
այն արմատոց ու խտաբուռն վերայ զորս այնքանի
խնամով հաւաքած եմ : Ըսոյց անաւաս պիտի մնայ ,
ուստի կարեւ մեկնիլ անգիշտ : Եթէ առձեռնարատ-
րաստ արծաթս ու անձս փրկեմ , ամէն ինչ փրկած
եմ . թեթեւոսն կը փախչի այր մեծակեաց :

Դրացի , յարեց երիտասարդն Շերման ուժ-
գնութեամբ , համամիտ չե'մ ձեզ բնաւ , և կը պար-
սաւեմ ձեր խօսքերն : Մի պատուարժան մարդ է
այն որ , երջանկութեան և ապերջանկութեան մէջ ,
չինքն միայն կը հոգայ , որ չդիտէ այլոց հետ բա-
ժանել ցաւքն ու բերկրանքն , և զոր իւր սիրան
չմզեր յայն : Այսօր ստաւել քան երբեք կը փա-

փառքէի կինն առնուլ, զի շատ ազջկունք պէտք ունին մի ամուսնոյ որ պաշտպանէ գինքեանս, և արք՝ մի կնոջ որ զուարթացնէ գինքեանս, և բոլ առաջիկայ նոցա դժբախտութիւնն :

Ժպտագին ըսաւ հայրն յայնժամ . Ազնիւ, քաջ խօսեցար, դուն ուրեք այսպիսի իմաստուն խօսք լրած եմ բերանէդ :

Եւ մայրն բարի յաւելցուց անդէն աշխուժիւ .

Արդեակ իմ, իրաւունք ունիս . և մեք ծնողքս տուած եմք օրինակն : Զի ուրախ օրերու մէջ չընտրեցինք մեք զիրեար, այլ մի ազնտալի ժամ մեր սրտերու հանգոյցն յօրինեց : Երկուշաբթի առաւօտ մ'էր, քաջ կը յիշեմ, աստի քսան տարի յառաջ . նախորդ օրն պատահած էր այն ահաւոր հրդեհն որ մոխիր դարձոյց մեր քաղաքին : Մի կիւրակէ էր որպէս այսօր . տօթագին ու շոր էր օդն և ջրոյ նուազութիւն կայր : Բոլոր բնակիչք ի պտոյտ ելած էին տօնական հանդերձներով և ցրուած զիւզերու, աշխարհաւանդից և ջազացից մէջ : Եւ ի ծագ քաղաքին սկսաւ կրակն : Արագ ընթացաւ փողոցաց մէջէն, ինքնին ծնուցանելով մի հողմ բռնաշունչ : Եւ հրոյճարակ եղան ամբարք առատադէզ հնձոց, և այրեցան փողոցք մինչև շուկայն . և անկաւ հրակէզ հօրս տունն, և ընդ նմին և այս որ դրակից էր նմա : Դոյզն ինչ ազատեցինք : Այն յոգնատխուր գիշերն ի բուն, քաղաքին գիմաց, դաշտին մէջ, նստայ պահպանելով արկղերն ու անկողիններն . սակայն հուսկ ուրեմն յազթուեցայ քունէն, և երբ արթնցուց զիս

առաւօտեան զովութիւնն որ կ'իջնէ արեւէն յառաջ , տեսայ ծուխն ու հրաշէկ խանձողներն , սրնամէջ որմուկքն ու ծխանելոյզներն : Միրտս կեղեքեցաւ . բայց արեգակն ծագեցաւ վերստին աւելի վեհափայլ քան երբեք և արութիւն հոսեցոյց իմ հոգւոյն մէջ : Իսկոյն յտան կանգնեցայ : Փափաքեցայ տեսնել տեղին ուր եղած էր մեր տունն , տեսնել թէ փրկուած էին հաւերս որոց վերայ մասնաւոր սէր կը տածէի , զի տղայարարոյ էի դեռ : Երբ ելայ տան և գաւթին բեկորից վերայ որք կը ծխային տակաւին և տեսայ մեր բնակարանն աւերակ , ահա դու վեր կուգայիր միւս կողմէն՝ զննելով շուրջանակի : Զիերէդ մին ախոսին մէջ մնացած էր հրաժառ գերանաց և բեկորից ներքև ծածկեալ , և բնաւ հետք չէր երեւեր կենդանիէն : Այն ատեն կեցանք իրարու դիմաց , մտախոհ եւ արտում , զի անկած էր որմնն որ մեր գաւթիներն յիրերաց կը բաժանէր : Եւ դու բանեցիր ձեռքս ու ըսիր . Շնչանիկ , ինչպէս եկար հոս : Գնա՛ , ներբաններդ կ'այրես . ջերանջրմ են աւերակներն ու կը տոշորեն կոշիկներս : Եւ վեր ամբառնալով զիս քո բազկաց մէջ , բակիդ մէջէն բերիր զիս գէտ այս կողմ . դեռ կանգուն կը մնայր տան դուռն հանդերձ իւր կամարաւ , ինչպէս այժմ կը տեսնուի . այն միայն մնացել էր յստենայնէ : Եւ գետինն դրիր զիս ու համբուրեցիր զիս , և ես կ'ընդգիմանայի : Ըայց դու ըսիր ինձ սա սիրալիր նըշանական խօսքերն . Տե՛ս , կործանած է այս տուն . կեցիր աստ և օգնէ՛ ինձ վերաշինել զայն , և ես

մտխարէն կ'օգնեմ քո հօրն վերաշինել զիւրն : Ես սակայն չքմբռնեցի քո միտքն մինչեւ որ մայրդ յըզեցիր առ իմ հայր և մեր երջանիկ միութեան հարսնախօսութիւնն կատարուեցաւ : Տակաւին ցայսօր հաճութեամբ կը յիշեմ այն կիսացրեաց մարդակներն և աչացս առջեւ կը տեսնեմ միշտ արեգակն որ կը քարձրանայր ճաճանշաւէտ հօրիզոնին վերայ . զի այդ օրն ընծայեց ինձ իմ փեսայն , եւ զի այդ ահեղ կործանման առաջին ժամանակներն տուին ինձ իմ երիտասարդ տխրոցս զաւակն : Ահա սորա համար կը գովեմ զքեզ , շերման , որ մի անբիծ մտահաճութեամբ այս տխուր օրերուն մէջ կը խորհիս կին առնուլ քեզ և կը համարձակիս ամուսնութեան հանգոյցն յօրինել պատերազմի մէջ և աւերանաց վերայ :

Անդէն պատասխան տուաւ հայրն եռանդազին և ըսաւ .

Մեր որդւոյն գիտաւորութիւնն գովելի է , սիրելիս , և ճշմարիտ է նաև ինչ որ արդ պատմեցիր , զի այդպէս անցաւ ամենայն . բայց լաւագոյնն աւելի է քան զլուսն . ամէն մարդոյ չյաջողիր ծայրէն վերակախիլ իւր բովանդակ կեանքն . պէտք չէ որ ամէն որ շարատանջ մատակի , որպէս մեք եւ այլք ըրած եմք : Ահ , քանի՛ երջանիկ է այն որում իւր հայրն ու մայրն թողած են մի բարեկազմ տուն և որ բարօրութեամբ ապրելով անդ՝ չունի առնել այլ ինչ բայց գեղազարդել զայն : Ամէն ըսկզբնաւորութիւն ատժանելի է , մանաւանդ մի բնատանիքի . մարդոյ պիտոյք բազմադիմի են , եւ

ամէն իրաց գինն կը բարձրանայ որ քան զօր : ուս-
տի և հարկ յէ նախագգուչութեամբ շարժիլ եւ
փոյթ ունենալ յաւելլուլ գրամն : Ա՛յսպէս , կը յու-
սամ , իմա Հերման , որ ընդհուպ գեղեցիկ օժտով
հարս մի պիտի բերես ինձ տուն . պարկեշտ այր
մի արժանի է ընչաւէտ աղջկան , և քանի քաղցր
է երբ ըղձացեալ մանկամարդ կնոջ հետ նաև օ-
ժիտք սապաաներով եւ արկղներով մանեն անէն
ներս : Աչ եթէ յուժպէտս իւր աղջկան կը պատ-
րասաէ մայրն տարիներով բարակաման և խոշորա-
հիւս կտաւի , ոչ յուժպէտս նորա կեքահայրն ու
կնքամայրն կը բերեն նմա արժաթեղէն պատուական
ընծայներ , և հայրն մէկ կողմ կը դնէ իւր գրա-
դարանին մէջ չքնաղ սոկեդրամն . այլ որպէս զի
մի օր այդ ընչիւք և ընծայներով բերկրեցնէ զայն
երիտասարդ որ առաւել ընարեց գինքն քան
զայլ օրիորդս : Գիտեմ , որչափ հաճելի է մի նոր
հարսի իւր տունն երբ խոհանոցին ու սենե-
կաց մէջ կը գանէ իւր իսկ գոյքերն , և երբ ինքն
իսկ զարգարած է իւր անկողինն ու սեղանն : Ըստ
այսմ օժտաւէտ հարս մի միայն կ'ուզեմ տեսնել
իմ տանս մէջ . զի աղքատիկն ի վերջոյ կ'արհա-
մարհուի իւր ամուսնէն , որ իբր ընդ աղախնոյ կը
վարուի նորա հետ , որ աղախնանման խոնարհ ծը-
րարով մտաւ դռնէն ներս : Արք միշտ անիրաւ են .
սիրոյ ժամերն կը թռչին կ'երթան : Այ՛ո , իմա Հեր-
ման , մեծ ուրախութեամբ պիտի ուրախացնես
զիմ ծերութիւն՝ եթէ ինձ ընդ հուպ մի հարս բե-
րես մեր գրացիներէն , սա կանաչ տունէն : Ար-

դարեւ մեծատուն է մարդն . իւր առևտուրն ու դործարաններն կը բազմապատկեն իւր հարստութիւնն ամէն օր , զի ուր շշահիր վաճառականն : Միայն երեք ազնկունք կան անդ . արդէն խօսեցեալ է անդրանիկն , գիտեմ . բայց երկրորդն և երրորդն դեռ ազատ են և գուցէ ոչ երկար ժամանակի համար : Նթէ ես լինէի փոխանակ քո , չէի յամեր այսքան ընդերկար և կ'երթայի առնուլ մին ի նոցանէ որպէս ես առի բերի մայրիկդ :

Անդ յայնժամ որդին պատասխանեց պատկառօտ իւր հօր ստիպիչ խօսքերուն .

Ստուգիւ իմ իղձն այլ , նման ձեր փափաքանաց , մին ընտրել էր մեր դրացւոյն ազնիկներէն : Ի միասին մեծցած եմք , մեր առաջին տարիներուն մէջ կը խաղայինք միատեղ հրապարակի ջրհորին մօտ , և յաճախ պաշտպանած եմ զիրենք մանչ տղայոց վայրագութեան դէմ : Բայց արդէն վաղուց անցան այդ օրերն . օրիորդներն տակաւ անելով , հարկ եղաւ որ տան մէջ մնան և փախչին կարի ազատ խաղերէ : Բարեկիրթ են արդարեւ . մեր հինօրեայ ծանօթութեան պատճառաւ և ձեր բազմանացն համար մերթ ընդ մերթ գնացի իւրեանց տունն . բայց իւրեանց ընկերութիւնն չէ կարացած երբեք հանելի լինել ինձ : Միշտ պարտաւելի բան մի կը գտնէին յիս , և հարկ էր ինձ հանդուրժել . հանդերձս կարի կարճ էր , կերպասն խիստ խոշոր , գոյնն ամենեւին հասարակ , և մազերս գէշ փոքրուած և գէշ գանգուրուած էին : Նուսկ ուրեմն խորհեցայ որ ես այլ հագուիմ շքուիմ այն

վաճառականի մանուկներուն նման , որք կիրակէ
օրերն կը ներկային նոցա տունն և կը պարզեն
ամառն իւրեանց մետաքսեայ հանդերձին . բայց
դարձեալ շուտով նշմարեցի թէ միշտ առարկայն էի
իւրեանց ծաղուն . չկարացի անդգայ մնալ . հարս-
տութիւնս վիրաւորեցաւ . եւ ինչ որ մանաւանդ
սիրտս կը հմլէր՝ այն էր թէ այս աստիճան կ'ար-
համարէին այն բարեացակամ տրամադրութիւնքն
զորս ունէի իւրեանց նկատմամբ , մանաւանդ Սի-
րանուչի , մանկագունին ի նոցանէ : Աերջին ան-
գամ Չատկական տօնին էր որ այս զգացումն տա-
րաւ զիս դարձեալ իւրեանց տունն . նոր հանդերձս
զգեցած էի , որ արդ վերն պահարանիս մէջ կախ-
ուած կայ , և միւս պատանեաց նման գանգուր-
ուած էի : Երբ ներս մտայ , ծաղրական ժպիտներ
արձակեցին . իմ վերայ շառի սակայն : Յարադաշ-
նակին լաջեւն էր Սիրանուչ . անդ էր հայրն , կը
լսէր իւր դստրկան երգելն , և կ'զմայլէր և զուար-
թացեալ էր : Երգին խօսքերէն շատերն անհասկա-
նալի եղան ինձ . միայն ստէպ կը լսէի Բամինա ,
Դամինո (*) անուններն . և սակայն շէի ուզեր համբ
անբարբառ մնալ : Երբ աւարտեց , տեղեկութիւն
հարցի բնագրին և այն երկու անձանց մասին : Ա-
մէնքն լսեցին և ժպտեցան . բայց հայրն ըսաւ .
Այնպէս չէ՞ , բարեկամս , միայն Ադամն ու Եւայն

(*) Անձինք մի գերմանական զուեշտային գուտաներգու-
թեան , Դի-Լի-ու Սի-Լի-ու , որք երաժշտութիւնն Մոցարթ յօ-
րինած է :

կը ճանչէ : Այն ստանն ոչ որ կարաց զայել ծի-
ծարն , և քրքջածայն խնդացին ազջկունք , քրքջա-
ծայն խնդացին պատանիք , և ծերունին՝ խնդալէն
մարելով՝ կողերն կը բռնէր : Շփոթութենէս գըլ-
խարկա ձեռքէս անկաւ , և ծիծաղք շարունակեցին
անընդհատ ցորչափ տեւեցին երգք և նուազածու-
թիւնք : Իսկ ես , ամօթահար և սրտասուչ , փու-
թացի տուն դառնալ , վերարկուս կախեցի պահա-
րանին մէջ , մտաներով քրքրեցի մազերս , և երգ-
ուայ այլ եւս չղնել ուրս այդ տան սեմոց վերայ :
Եւ իրաւունք ունէի , քանզի ունայնամիտ են և սի-
րազուրկ , և կը լսեմ թէ մինչեւ ցարդ զիս Գա-
մինօ անուամբ կը կոչեն :

Մայրն յարեց . Պէտք չէր , Հերման , որ ցարդ
դժտեալ մնայիր այդ ազայոց հետ , զի ստուգիւ
դեռ ազայ են ամէնքն այլ : Միբանոյչն անտարա-
կոյս բարեսիրտ է և քեզ միշտ համակիր եղած է .
դեռ անցեալ օր զքեզ կը հարցնէր . պէտք էր որ
զայն ընտրէիր :

Մտախոհ պատասխանեց որդին . Չգիտեմ , բայց
այն պիշտն այնպէս խոր տալաւորեցաւ իմ սրտի
մէջ , որ անկարելի է ինձ տեսնել զայն այսուհե-
տեւ իւր յարադաշնակին առջեւ և լսել իւր եր-
գակներն :

Յայնժամ զայրացաւ Հայրն և խօսեցաւ բարկա-
ցայտ բանիւք .

Գիշ ուրախութիւն կուտաս ինձ : Միշտ կ'ըսէի
արդէն երբ կը տեսնէի թէ քեզ հաճելի են միայն
ձիերն ու արտերն . մի փարթամ կալուածատիրոջ

սպասաւորին պաշտօնն կը կատարես . և հայրդ լքեալ կը տեսնէ ինքզինք մի որդիէ՝ որ պարտէր պատիւ բերել իւրեանք քաղաքացւոց առջև : Մայրդ անդտաին առաջին տարիներէդ ունայն յոյսերով զիս կը խաբէր , երբ կը դանդառէի թէ ընթերցման , գրի և ի բերան ուսանելոյ մէջ այլոց պէս քաջ չէիր և միշտ դասին վերջինն կը լինէիր : Ահա այս կը լինի վախճանն երբ պատուասիրութեան զգացումն շաղրիր մի երիտասարդի սրտին մէջ , և երբ շցանկար միշտ ի բարձունս թեւակոխել : Եթէ իմ հայր այնքան խնամք տարած լինէր իմ վերայ որչափ տարած եմ ես քո վերայ , եթէ զիս դպրոց զրկած լինէր և դասատուներ բռնած , անտարակոյս Ուիւզէն Ա-ի-ձ ու պանդոկապետէն տարբեր մի անձ կը լինէի այժմ :

Յոտն ելաւ որդին և անխօսուկ մօտեցաւ դրան յամրաքայլ և անշունջ . բայց հայրն , սրտմտեալ , գոչեց նորա ետեւէն .


Գնա՛ , կը ճանչեմ արդէն խեղ ոգիդ . գնա՛ ու գործիդ նայէ , այնպէս որ կշտամբանացս շարժանանաս . բայց մտքէդ մի անցնէր տունս հարս բերել մի գեղջուկ , աղքատիկ ազգիկ : Ընդ երկար ապրեցայ և գիտեմ մարդոց հետ վարուիլ , գիտեմ այնպէս հիւրընկալել Պարոններն ու Տիկիներն որ գոհ մեկնին . գիտեմ հաճոյ եղանակաւ շողոքորթել օտարականներն : Բայց պէտք է նաև որ վերջապէս մանկամարդ հարս մ'այլ նոյնն ինձ փոխարինէ և քաղցրացնէ իմ այնքան յոգնութիւններս . պէտք է

որ նա այլ ինձ դաշնակա՛հարէ . սէտք է որ հա-
ճութեամբ խմբուին իմ տանս մէջ քաղաքին բնա-
րեւոյցոյն անձինքն , ինչպէս կիւրակէ օրերն կը ժո-
ղովին մեր դրացոյն տան մէջ :

Յետ բանիցս՝ Արդին մեղմով ճնշեց դռնափակն,
և այսպէս մեկնեցաւ սենեկէն :



ԲԱԼԻԱ



ԲԱՂԻԱ

ՔԱՂԱՔԱՅԻՔ



ԲԲ Արդ ին՝ պատկա-
ռով խուսափեցաւ
այսպէս զայրադ ին՝
այն ճառէն , յառաջ
մատուց շայրն որ-
պէս սկսած էր .

Ինչ որ չկայ մի
մարդոյ մէջ՝ չկարէ
դուրս ելնել ի նմանէ , և շատ յուսալի չէ որ իմ
սրտագին բաղձանացս կատարումն ուրախացնէ պիս
մի որ , այն է թէ որդիս ինձ նման չլինի , այլ լա-
ւազոյն որ : Զի ինչ կը վնէր մի տուն , ինչ կը վի-
նէր մի քաղաք , եթէ անցնիւր որ չհողացր սիրով
ու հաճութեամբ պահպանել և նորոգել զայն , և

բարւոքել ևս ու ազնուացնել որպէս ժամանակն և այլ աշխարհներ մեզ կ'ուսուցանեն : Պէտք չէ որ մի մարդ , նման մի սունկի , յետ բուսանելոյն՝ խկոյն փափ անդ ուր ծնաւ , ոչ մի հետք թողլով իւր կեանքի գործունէութենէն : Յառաջին տեսիլ մի տան կը գուշակուի տիրոջ ոգին , որպէս մի քաղաքի մէջ մտնելոյ ատեն կը գնահատեմք զայն վարողներն : Անդ ուր կը քայքային կ'անկնին պարիսպք և աշտարակք , անդ ուր աղբուք կը դիզուին խրամոց մէջ և կը դիզուին փողոցաց վերայ , անդ ուր փլած անկած քարն ոչ եւս անդրէն կը գրուի իւր տեղն , անդ ուր գերանն փտած է և որդնահար , և ի զուր տունն կ'սպասէ նոր մոյթերու , անդ չիք բարւոք վարչութիւն : Երբ վերին իշխանութիւնք չեն հսկեր ի բարձանց բարեկարգութեան և մաքրութեան վերայ , քաղաքացին դիւրաւ կը սովորի զազրայի սղերդութեան , որպէս մուրացիկն իւր ցնցոտեաց : Ահա էր կը փափաքիմ որ ընդ հուպ ճամբորդել սկսի Հերման և տեսնէ գէթ զՍգրազպուրկ , զՊրանքֆորդ և զուղղաչէնն զգեղածիծաղն Մանհայմ : Որ ոք տեսաւ քաղաքներ մեծ և մաքուր՝ չունի այլ ևս հանդիստ մինչեւ չգեղազարդէ իւր քաղաքն հայրենի , որչափ և փոքր լինի այն : Ա՞չ ապաքէն անցնիւր օտարական կը գրուատէ մեր նորոգեալ դռներն , բռեալ աշտարակն , և եկեղեցին որ կը թուի վերաշինեալ : Չը՞ գովեր մեր սալարկն , մեր ծածկեալ՝ ջրաշատ և լաւարածին ջրմուղներն , որք այնպէս լաւ կարեն ծառայել մեր պիտոյից և ապահովութեան՝ յառաջին նշան մի հրդեհի . և այս

ամենայն վերջին բազմադէտ հրդեհէն թ վեր շկա-
տարուեցաւ : Այն անգամ շինուած ապետ կար-
գուեցայ մեր խորհրդոյն մէջ և արժանի եղայ գո-
հունակութեան , սրտագին շնորհակալեաց բարի
քաղաքացւոյ՝ առաջարկելով օգտակար ծրարեր ,
յառաջ վարելով եռանդագին նոցա գործադրու-
թիւնն և թ գլուխ հանելով ուղղամիտ մարդերէ
սկսեալ շինութիւններ՝ որք անկատար էին մնա-
ցած : Չայս օրինակ նախանձն արթնցաւ վերջա-
պէս խորհրդոյ մէն մի անդամոյն սրտին մէջ , և
արդ ամենեքին կ'աշխատին ժրաջան , և արդէն
նոր խճուղին , որ զմեզ մեծ պտղոտացին հետ կը
կապէ , աւարտած և հաստատուն է : Եւ այն երկիւղ
մեծ է ինձ որ մեր երիտասարդութիւնն չհետեւի
այս օրինակաց . զի ոմանք զբօսանաց վերայ միայն
կը խորհին և ունայն զարդարանաց , այլք կծկեալ
կը մնան տանց անկիւնն ու կը թխտեն վառարա-
նաց ետեւ : Եւ կը վախճամ որ գուցէ եւ շերման
այսպիսեաց կարգէն մնայ միշտ :

Եւ պատասխան տուաւ իսկոյն բարեգորով զգօ-
նամիտ մայրն .

Հայր , գու միշտ այսպէս անիրաւ ես առ մեր
որդին , և այսու չյաջողիր քեզ բարին զոր կը տեն-
չաս : Ձի չէ՛ կարելի մանուկներն ըստ մեր մտաց
կազմել . ինչպէս որ տուաւ զայնս մեզ Աստուած՝
պարտիմք պահել և սիրել զնոսա , ջանալ լաւագոյնս
կրթել զնոսա՝ առանց բռնադրօսելոյ նոցա ընդա-
րոյս բնութիւնն : Սա այս ինչ ձիրքերն ունի , նա
այն ինչ . իւրաքանչիւր որ կը գործածէ բնութենէն

խրեան արուած ձիւղերն , եւ իւրաքանչիւրն ըստ իւր յատուկ կերպի միայն կարէ լինել բարի եւ երջանիկ : Չեմ թողուր որ կշտամբուի իմ Հերմանս , զի գիտեմ թէ արժանաւոր է այն բարութեանց զորս պիտի ժառանգէ մի օր , թէ կը խնամէ մեր դաշտերն իբրեւ փորձ եւ նարտար տնօրէն , թէ մի օրինակ է նա հետեւելի՞ քաղաքացւոց եւ մշակաց , եւ ստոյգ գիտեմ եւ կը նախատեսեմ այժմէն թէ յետինն չպիտի լինի խորհրդոյն մէջ . բայց ամէն օր յանդիմանութեամբք եւ գորովանօք հիբին սրբտին մէջ կը խեղդես ամէն արութիւն , որպէս ըրիբ այսօր :

Եւ անդէն մեկնեցաւ սենեկէն եւ փութաց ի խնդիր որդւոյն , որպէս զի գտնելով զայն փարատէ նորա միշտն գորովայից խօսքերով , զի նա , բարեբարոյ որդին , արժանի էր արդարեւ :

Հապիւ ելաւ նա դուրս , ահա Հայրն ըսաւ ժրգտելով .


Չարմանայի ժողովուրդ մ'են սա կանայք եւ արդայք : իւրաքանչիւրն կ'ուզէ ապրիլ ըստ իւր քրմաց , ե յետոյ կը սրահանջէ որ այլք գովեն զինքն ու փայտայեն : Միանգամ ընդ միշտ , նախնեաց առածն ճշմարիտ է . Յոռու զքնացուն եք կ'երկոյ : Այս այսպէս է միշտ :

Եւ զեղազորձն յարեց խորհրդածող կերպարանօք .

Յօժարամիտ կ'ընդունիմ զայդ առած , Տէր զըրացի , եւ միշտ լուազունին ի խնդիր եմ , միայն թէ նորն չլինի կարի ծանրագին . բայց երբ փար-



W. H. Woodcut




Թամութիւն շունի որ , կը կարծէք թէ բաւական
լինի գործօն ու փայթեռանդն լինել՝ ներքուստ եւ
արտաքուստ գեղեցիկ յարդարելոյ համար զիւր
տուն : Քաղաքացին կարի սահմանափակ է . լաւն
կարող չէ ստանալ՝ երբ կը ճանչէ զայն . կարի տը-
կար է իւր քսակն , իսկ պէտքն կարի մեծ . եւ
այսպէս ցանգ արգելից կը պատահի նա : Բազում
ինչ ըրած կը լինէի ես . քայց սով շտտկար այսպիսի
փոփոխութեանց պատճառած ծախքերէն , մանա-
ւանդ այս վտանգալից ժամանակաց մէջ : Արկար
ատենէ ի վեր պիտի ծիծաղէր ինձ իմ տունն իւր
նորահաշակ հանդերձին մէջ , երկար ատենէ ի վեր՝
մեծ ապակիներով զարդարուն՝ պիտի շողշողային
պատուհանք . սակայն սով կարող է նմանիլ վաճա-
ռականին , որ իւր հարստութեան կը կցորդէ նաև
ծանօթութիւնն այն եղանակաց՝ որովք լաւագոյնն
ստանալ կարելի է : Տե՛ս հանդիպակաց տունն ,
ինչպէս նոր է : Արորածոյ սպիտակ խոյակաց կճա-
ծեփն ինչպէս մեծաշուք կ'երեւի կանաչաներկ ե-
րեսաց մէջ տեղ . մեծ են պատուհանք . գիւրդ կը
փայրիլին հայելանման՝ ապակիք , այնպէս որ նսեմ
ու անշուք կը մնան հրապարակին միւս տներն :
Եւ սակայն , հրդեհէն յետոյ , ի սկզբանն մերքն էին
գեղեցկագոյնքն , Հէ՛ծըսի զեղարանն եւ Ա-կէ-ւէն
Ա-ի-ձու սրանդոկն : Մեր բովանդակ գաւառին մէջ
զերահոշակ էր նաև իմ պարտէզն , եւ անցնիւր
ճանապարհորդ կանգ կ'առնուր և կը զիտէր կար-
միր ձողացանկին մէջէն քարեղէն մուրացիկն ու
բազմագոյն գաճաճն : Նա որում սուրճ կը մատու-

ցանկէի շքեղ քարայրին մէջ որ արդարեւ փոշոտեալ
և կիսակործան կայ այժմ, կը բերկրէր յոյժ ի տե-
սիլ կայծակնացայտ և երփներանգ լուսոյ գեղեց-
կաշար խեցեաց . և ճաշակատէր իրագէտն ասելեալ
ու շլացեալ կը դիտէր ծծմբակապարն ու բուս-
տերն : Ոչինչ նուազ հիացմամբ կը դիտուէին սրա-
հին նկարներն , յորս վայելչազարդ տեսարք և տիկ-
նայք շուրջ կուգան պարտիզին մէջ եւ նրբածայր
մատներով կ'ընծայեն և կը բռնեն ծաղիկներ : Սա-
կայն այժմ ո՞վ կը նայի սոցա : Սրտաբեկ , հազիւ
ուրեմն այլ եւս կ'երթամ ի պարտէզ . զի ամէն ինչ
պարտի փոխուիլ և , որպէս կ'ըսեն , ճաշակաւոր
լինել . պէտք է որ տախտակներն ու փայտեաց նըս-
տարաններն սպիտակ լինին : Պարզն ու հարթն կը
սիրուին այժմ . կը մերժուին քանդակն ու ոսկե-
դէն դրուագն . և սակայն ամէնէն թանգն է արդ
դրուէն եկած փայտն : Հաճութեամբ կուզէի ես այլ
ինչ ինչ նորաձեւ եւ նորաճաշակ իրեր ձեռք բե-
րել , դարուս հետ զուգընթաց երթալ եւ յաճախ
նորոգել կահերս . բայց մարդ կ'երկնչի փոքրագոյն
քայլ մ'առնուլ . ո՞վ կարէ այժմ վարձք տալ դոր-
ծաւորաց : Աերջերս խորհեցայ ոսկեզօծել տալ վե-
րըստին գեղարանիս նշանակն , Միքայէլ հրեշտակն
եւ քսամնելի փրշապն որ նորա ստից տակ կը դա-
լարի . բայց թողի զայն թխացեալ որպէս է . այն-
քան սոսկացոյց զիս նորոգութեան գինն :



6 1 8 6 7 9 1



ԵՒՏԵՐՊԵ

ԸԼՍԵՐ ԵՒ ՈՐԳԻ



յապէս խօսակից
կը լինէին ար-
քըն : Նոյն պա-

հուն կ'երթար մայրն ի խնդիր որդւոյն՝ նախ
տանն առջեւ, քարեղէն նստարանին վերայ ուր
սովոր էր նստիլ, եւ շղաներով անդ՝ կ'երթայր
նայել ախոսին մէջ . թերեւս անդ լինէր գրադեալ
ի դարման սօս անխաբարանոց երիվարացն որ մըտ-
րուկ էին երբ գնեց զնոսա եւ որոց ոչ ումեք կը
հաւատայր խնամքն : Եւ ըսաւ մանուկն . Պար-
տէզ զնաց :

Յայնժամ արագոտն կարեց անցաւ կրկին երկայնաձիգ գաւիթներն , յետկոյս թողուց ախոռներն և ամրաշէն շտեմարանքն , մտաւ ի պարտէզն որ կը ձգէր մինչ ի սարխապն քաղաքին , կարեց անցաւ եւ ընդ այն , եւ զճանապարհայն կը հրճուէր տեսնելով ուռճանալն անցնիւր տնկոյ , կը վերուզդէր խեչակներն որոց վերայ կը հանգչէին խնձորենուոյն ծանրաբեռն սատերն , որպէս և պտղալից վայրահակ ճիւղք տանձենուոյն , ի բաց կ'առնոյր արագ մի քանի թրթուրներ կորսիլ ուռուցիկ կազամբէն , զի գործունեայ կին մի շառնու մի քայլ անողուա :

Այսպէս հասաւ նա ի սպառուած երկայնաձիգ պարտիզին՝ մինչ ի հովանոցն այծիտերեւօք յարկածածուկ . անդ եւս շգտաւ զորդին , և իւր հայեցուածք ի դուր խնդրեցին զնա բովանդակ միջոցին մէջ ընդ որ անցած էր : Բայց կիտարաց էր դռնակն այն , զոր հովանոցէն դուրս քաղաքին սարքապին մէջէն մասնաւոր շնորհիւ ձեղքած էր երբեմն ընտանեաց պապերէն մին , մեծարոյ քաղաքապետ : Դուրս ելաւ , եւ անցաւ շոյա ցամաքեալ խրամէն անդին , ուր յեղր պտղատային կը բարձրանայր անմիջապէս ցանկապատ այգիստանն զտիվեր շաւղով , արէզդէմ : Ալաւ շախիզն ի վեր , և ի գնալն կը բերկրէր ընդ առատութիւն ողկուզաց խաղողոյ որք հացիւ կը ծածկուէին տերեւոց տակ : Բարձանոց վերայ , ի միջափայրի , կայր սարսիինայ հովանաւոր ուր կ'ելնէին անտաշ քարէ աստիճաններով : Անդ կը կախուէր աղնիւ սպիտակ խաղողն ,

և առ նմին մշկահոտան կարմիր - կապոյտ՝ տարօրինակ խոշորութեամբ, ամէնն խնամով մշակուած՝ հիւրոց ազանդերներուն ի զարդ : Մնացորդն այգեստանին կը ծածկէին մեկնակ որթատունկեր փոքրագոյն ուղկոյզներով, յորոց կ'ելնէր գինին պատուական : Ար հրճուէր յառաջագոյն խորհելով մրդաւէտ աշնան վերայ և այն տօնական աւուր յորում ողջոյն մարզն երգ ի բերան խնդագին կը քաղէ խաղողն, կը ճմլէ հնծանին մէջ և խաղմզով կը շնու կարասներն, և յերեկոյին արուեստական հրոց խաղք կը շաշեն կը ճայթեն լուսասփիւռ ամենուրեք ի պատիւ գեղեցկագունին ի հունձա :

Սակայն կ'երթայր նա սրտատանջ անհանգիստ յորմէ հեռէ երկիցս և երկիցս իսկ կոշեց իւր որդին և արձագանգն միայն պատասխանեց նմա քաղմածայն, արձագանգն շատախօս, հնչելով քաղարին աշտարակներէն : Այնքան անսովոր էր իրեն՝ որդւոյն ի խնդիր ելնել - երբե՛ք շատ հեռուներն չէր երթար, կամ կ'աղղարարէր նմա յառաջագոյն որպէս զի մի գուցէ՝ դժբախտ արկած մի խիթալով՝ կասկածանաց և հոգոց մատնուի գորովագութ մայրն : Բայց կը յուսայր տակաւին պատահել նմա, զի յեաին գուռնն այգեստանին քաց էր նման առաջնոյն :

Եւ մտաւ այն արտին մէջ որ լայնածաւալ կը ծածկէր բլրոյն կռնակին : Միշտ իւր սեպհական հողոյն վերայ էր, և ուրախութեամբ կը ընոյր սիրտն ի տես հասկաթուռ սակեգիսակ ցորենոյն որ կը շարժէր հողմածածան վէտ ի վէտ անդատանին

մէկ ծայրէն ցմբւան : Առ եզերք անդոց , կ'երթայր մի նուրբ շաւղէ , աչքն յառած ի մեծ տանձենին որ կը կանգնէր մի բլրոյ վերայ , սահման իւր տան կալուածոց : Ո՞վ անկած էր զայն՝ ո՞չ ոք գիտէր . ամենուստ կը տեսնուէր , և գերահաշակ էին իւր պտուղք : Այս ծառոյն տակ միջօրէին իւրեանց ճաշն կ'առնուին արտահունձք զուարթութեամբ , և նորա շուքին տակ կը նստէին անդէորդք . բազմոցք էին անդ քարեղէն և մամուաշէն :


Եւ չէր խարուած իւր յուսոյն մէջ . անդ նրատած էր իւր Հերմանն . կը հանգչէր՝ գլուխ յեց ի բազուկ , և կը թուէր նկատել հեռուն այն ըստներն որք երկնի ծիրն կը կազմէին , կռնակն իւր մօր դարձուցած էր : Յուշիկ մերձեցաւ առ նա , և մեղմով շարժեց նորա ուսն : Յետկոյս դարձաւ խեղոյն որդին , և մայրն տեսաւ զի արտասուալից էին նորա աշխուճք :


Մայր , ըսաւ ամիշեալ , յանդգտասա ըմբռնեցիր զիս :

Եւ կը ջնջէր արագ արցունքներն , արտայայտութիւն ազնուական զգացմանց երիտասարդ տիտց :

Ի՞նչ , որդեանկ իմ , կուրսօ , ըսաւ Մայրն սրտայոյզ , կարծես թէ նոյն Հերմանն չես . երբե՛ք զքեզ այս փրճակին մէջ չեմ տեսած : Ըսէ՛ , ի՞նչ բան սիրադ կը ճմլէ . ի՞նչ բան կը գրդէ զքեզ դալ նրատիլ սատ մենիկ տանձենւոյն տակ . ի՞նչ բան արցունք կը հոսեցնէ աշերէդ :

Եւ ազնիւ երիտասարդն ամփոփեց ինքզինքն ու ըսաւ .





Արդարեւ շունի սիրտ իւր պղնձեայ կրծոց մէջ նա որ անդգայ կը մնայ մարդկային թշուառութեան, աքսորականաց ազեախցն առջեւ . խելք շունի իւր գլխոյն մէջ նա որ անսոյթ և անտարբեր է իւր անձին և հայրենեաց բարւոյն : Ինչ որ տեսայ այսօր և լեցի՝ շարժեց սիրտս . ուստի և դուրս ելայ անէն և շրջեցուցի աչերս հիանալի և լայնանիստ շինավայրաց վերայ զորս կը պարուրեն շուրջանակի պաղաւէտ բլուրներ, ոսկեզոյն հասկաց վերայ որք արդէն կը խոնարհին որայից առջեւ, և կը խոստանան արդիւնաշատ աշուն և ակազձուն սամբարներ : Բայց, աւանդ, սրշափ մօտ է թշնամին : Հսկնական այլք կը պաշտպանեն զմեզ արդարեւ . բայց ինչ են արդ այլք եւ լերինք այն ահարկութողովրդեան առջեւ որ մրդկանման կը մերձենայ, որ ամենուստ կը համախմբէ երիտասարդներն ու ծերերն և կ'ընթանայ յառաջ բուռն և մեծազօր, և այդ ամբոխն շղիտէ երկնչիլ ի մահուանէ . ամբոխ զամբոխն կը մղէ անվերջ : Ա՛խ . և մի Գերման կը յանդգնի՝ իւր տան մէջ մնալ . կը յուսայ թերեւս ճողտպրիլ ազետէն որ ամէնուն կ'սպաննայ : Մայր սիրեցեալ, ահա կ'ըսեմ ձեզ, այսօրուան օրս շատ կը ցաւիմ որ վերջերս՝ երբ զօրածողով կը լինէր քաղաքացիներէն՝ զիս ազատագրեցին : Յիրաւի միամօր որդի եմ և բազմահոգ է մեր կալուածոց մատակարարութիւնն, ու բազմազրապ մեր գործ, բայց լուազոյն չլինէր սահմանազխոյն վերայ դիմակալել թշնամւոյն քան աստ թշուառութեան և ստրկութեան սպասել : Այո՛, այսպէս կը

խօսի ինձ ողբա , և լանջացս մէջ կը յառնէ արիա-
կան տենչ ապրելոյ և մեռնելոյ հայրենեաց համար
և ընծայելոյ այլոց մի ազնիւ օրինակ : Ճշմարիտ
կ'ըսեմ , եթէ Վերմանական երիտասարդութեան
ծաղիկն , համաշունչ և միաբան , դուժարուէր սահ-
մանադրխոց վերայ , օտարաց տեղի շտալոյ անդրդ-
ուելի որոշմամբ , ո՛հ , անտարակոյս չախտի կոխէին
մեր ցանկալի հողն և մեր աչաց առջև չախտի վա-
յելէին մեր երկրին պատուներն , չախտի հրամա-
յէին արանց և չախտի առեւանդէին կիներն ու
ազջիկներն : Ի՛նձ լսեցէք , մայր , ի խորս սրտիս
վճռուած է ի դլուխ հանել ընդ հուպ եւ առժա-
մայն իսկ ինչ որ արդար կը թուի ինձ եւ բանա-
ւոր . դի ով որ երկար կը մտածէ՝ միշտ չընտրեք
լաւագոյնն : Գիտցէք որ այլ եւս տուն չախտի դառ-
նամ : Աստի դէպ ուղիղ կ'երթամ ի քաղաքն և մեր
պատերազմիկներուն կը նուիրեմ այս բազուկն եւ
այս սիրտն ի սպաս հայրենեաց : Եւ թող այսուհե-
տեւ ըսէ հայրս թէ պատուոյ զգացումն չ'ոգևորեր
նաև իմ , սիրտս և թէ բարձրանալոյ շունքիմ իզձ :

Անդ յայնժամ խորհրդաւոր կերպով պատաս-
խանեց բարեգութ եւ զգօնամիտ Մայրն , անձայն
արտօսք հեղլով , դի դիւրաւ կուգային նմա ար-
ցունք յաշկունս .

Արդեանկ , ի նչ բան այս սաստիճան փոխեց զքեզ
և բնաւորութիւնդ որ շեւ խօսիր մօրդ , ինչպէս
երէկ և միշտ , արձակ համարձակ և շեւ բսեր սրբ-
տիդ բուն բաղձանքներն : Եթէ երբորդ ոք լսէք
զքեզ , ազգու խօսքերէդ հրապուրեալ , մեծ գո-

վեստիք սլիափ գովէր զքեզ և յարդէր որոշումը իբրև ազնուագոյն խորհուրդ . բայց ես կը սրարսուեմ զքեզ , վասն զի , գիտե՞ս , ես լաւագոյն կը ճանչեմ զքեզ . սիրազ յինէն կը ծածկեա և բնաւին տարբեր խորհուրդներ ունիա : Գիտեմ , ոչ թըմբուին զքեզ կը կոչէ եւ ոչ շեփորն , ոչ խակ փափաքող ես . համազգեատով երևելի օրինորդաց , զի սրչափ և քաջ լինիա , քո կոշումն է լաւ պահպանել մեր սուսնն և խնամարկել հանդարտօրէն մեր դաշտաց : Ուստի ըսէ ինձ համարձակ , ի՞նչ է այն որ կը գրդէ զքեզ այս որոշման :

Լրջամիտ ըսաւ Սրդին .

Կը սխալիք , մայր . մի օր չէ նման միւսոյն : Պատանին կը հասուննայ և կը լինի այր . գործելոյ համար աւելի լաւ կը հասուննայ հանդարտութեան քան աղմկայոյզ յողողող կեանքի մի ժխտին մէջ , որ պատճառ եղած է շատ երիտասարդաց կորրստեան : Թէպէտ և հանդարտարարոյ եմ և եղած եմ միշտ , համայն և այնպէս կրծոցս մէջ մի սիրտ կազմուած է որ կ'ատէ անիրաւութիւնն ու հարբատահարութիւնն , և գիտեմ զանազանել և գնահատել աշխարհի իրերն . աշխատութիւնն այլ բազուկս և ոտներս զօրեղ և կորովի գործած է : Այս ամենայն ճշմարիտ է , կ'զգամ զայն , և կը համարձակիմ հաստատել զայն աներկիրու : Սակայն , սոյ մայր , իրաւամբ մեղադիր կը լինիք ինձ զի ճշմարտութիւնն կ'ըօղեմ և կիսով չափ միայն կը յայտնեմ ձեզ : Ուստի կը խոստովանիմ , մտաւրուս միտանդն չէ որ զիս գուրս կը կոչէ հայրական ար-

նէն , և ոչ բարձրագոյն մտածութիւնն ձեռնառու լինելոց իմ հայրենեաց , ևւ ահաւոր՝ թշնամեոյն : Արքա խօսքեր էին միայն , որոց նպատակն էր ծածկել ի ձէնջ իմ գգացումներս որք սիրտս կը կեղեքեն : Թողէք զիս , ով մայր . զի ընդունայն փափաքներ կը կրեմ սրտիս մէջ , ընդունայն թող կորընջի և իմ կեանք . քանզի քաջ գիտեմ զայս ինչ թէ երբ ամէնքն միահամուռ շաջակցին ի մի և նոյն նպատակ , անձնութիւլ առանձինն՝ իւր անձին մնասել է :

Յառաջ տար , յարեց իմաստուն Մայրն , և պատմէ ինձ մեծագոյն որպէս և դուզնագոյն պատճառն քո վրդովման : Բունն են արք , և ծայրայեղութեանց կը մղուին միշտ . իսկ երբ ընդդիմութեան պատահին՝ շուտով իրենք զիրենք կը մտնան և բոլորովին ճամբէ դուրս կելնեն . բայց կին մի ճարտար է ի գիւտ հնարից և գիտէ ի հարկին ճարտար շրջան մի ընել հասնելոց համար ի նպատակն : Մի ծածկեր յինէն ևւ ոչինչ . էր այսպէս սաստիկ յուզուած ևս որպիսի ոչ երբեք տեսած եմ զքեզ . էր արիւն կ'եռայ երակացոյ մէջ , ևւ ընդէր յանկամս քո արտասուք կը ժողովին աչերուդ մէջ ի ցայտել անժոյժ :

Յայնժամ անձնատուր եղաւ ցաւոց ազնուասիրտ երիտասարդն , և լացաւ , լացաւ կականարարձ իւր մօր ծոցոյն վերայ և , պարտեալ , խօսեցաւ այսպէս .

Հօրս յանդիմանութիւնն այսօր իմ սիրտս ծակեց , յանդիմանութիւն որում երբեք չե՛մ արժա-

նայած , ոչ այսօր և ոչ որ և է օր . զի ի վաղուց
օրերէի էր ինձ քան զամենայն պատուել իմ ծնող-
քնն , և ոչ որ կ'երեւէր ինձ առաւել խոհեմ և ի-
մաստուն քան զայնտակ որք կեանք տուին ինձ եւ
ոյց լրջամիտ հոգածութիւնն առաջնորդեց ինձ ման-
կութեան գիշերոյն մէջ : Շատ համբերող եղած եմ
իմ ընկերաց մասին , երբ շարասարութեամբ կը փո-
խարինէին յաճախ իմ սէրն . յաճախ շէի դարձներ
իրենց քարերն զոր ինձ կ'ընկենուին կամ խաղերն
զոր կը խաղային ինձ . բայց եթէ ծաղրէին հայրս՝
երբ կիւրակէ օրն դուրս կ'ելնէր եկեղեցիէն ծան-
րաքայլ և պատկառելի , եթէ խնդային նորա զը-
գակի ժապաւէնին վերայ , նորա ցայգահանդերձի
ծաղիկներուն վերայ զոր կը կրէր վեհութեամբ և
օր այսօր իսկ նուիրուեցաւ , այն ատեն կը գոց-
ուէր ձեռնս ի կռուի ահաւոր , կը յարձակէի ի
նոսա մրմնագին և կոյր կատաղութեամբ կը տե-
ղայի հարուածներ առանց նայելոյ թէ ուր . արիւ-
նահոս ռնգամբք կը ճշէին ողբազին և հագիւ խոյս
կուտային հալածանացս և հարուածոցս մոլեգնու-
թենէն : Եւ այսպէս կը մեծնայի լի որդիական յար-
գանաք որպէս զի իմ հօր կողմանէ կրէի բազում
ցաւեր : Նա յաճախ զիս կ'ընէր նախատակած փո-
խանակ ուրիշներու , երբ խորհրդոյ վերջին նստին
մէջ զինք վշտացուցած լինէին , եւ ե՛ս կը քաւէի
իւր պաշտօնակցաց հակառակութիւնքն ու նեն-
գանքն : Յաճախ դուք իսկ ցաւած էք իմ վերայ .
կը հանդուրժէի ամենայնի , միշտ գրաւուած սս
մտածմամբ թէ պարտիմ պատուել ի խորոց սրտի

իմ ծնողքս, երախտազէտ նոցա բարութեանց եւ այն հոգածութեան որով նոքա շատ վայելքներէ կը գրկեն զինքեանս խնայելոյ համար ի պէտս զաւակաց եւ յաւելլոյ նոցա ինչք եւ ստացուածք : Բայց, աւանդ, այդ խնայողութիւնն, որոյ պատուին անագան ուրեմն ճաշակելի է, այդ խնայողութիւնն չէ միայն որ կը ծնանի զերջանկութիւն. սա յառաջ շքար դէզ ի վերայ գիզի բարդելէ եւ ո՛չ արա արտի վերայ յաւելլէ, որչափ եւ գեղեցիկ իմն բուրբին կալուածք : Զի հայրն կը ծերանայ, եւ ընդ նմին կը ծերանան եւ որդիք առանց վայելելոյ մի օր երջանիկ եւ միշտ վաղուի հոգովն տաղնապեալ : Տեսէք սա գեղեցիկ, վեհաշուք եւ բազմաբեղուն ընդարձակութիւնն. աստ վարն այդեւստանն եւ պարտէզք, անդ ամբարանոցք եւ գոմք, ընչից ստացուածոց շնոր գեղեցկակարգ . բայց երբ անդին կը տեսնեմ տան յետակողմն, եւ տանիքն որոյ տակ կը նշմարուի խցկիս պատուհանն, յուչ ինձ կ'անկնին անցեալ օրերն, թէ քանի գիշերներ արդէն սպասա՞ծ եմ անդ լուսնոյն եւ քանի առաւօտներ արեւուն, երբ կազդուրիչ քունն սակաւ ժամեր միայն կը շնորհէր ինձ . ա՛հ, ոչ նուազ քան սենեկիկս ինձ ամայի կ'երեւին յայնժամ բակն ու պարտէզն, գեղեցիկ դաշտն որ կը ծառայի բլրոյն վերայ . ամէն ինչ, ամէն ինչ անսպաս մ'է աչքիս . մի ընկերուհի կը պակսի ինձ :

Պատասխանեց յայնժամ գորովապսիտ զգօծած միս Մայրն .

Որդեակ, երբ կը բազմաս մի հարս բերել սե-

նեկիդ մէջ որպէս զի քեզ համար զիշերն կենաց
գեղեցիկ կիսամասն լինի և օրուան վատտակն աւելի
հեշտ և աւելի սեփհական լինի քեզ, շեա կարող
բաղձալ զայս աւելի եռանդեամբ քան որչափ հայրդ
և մայրդ կը փափաքին : Միշտ յորդորած եմք ըզ-
քեզ, բռնադատած իսկ, քեզ ազջիկ մի ընտրել-
բայց զիտեմ և սիրտս այլ կ'ըսէ ինձ այս պահուս,
երբ դեռ չէ եկած ժամն, ճշմարիտ ժամն, բերե-
լով բուն ընտրելի օրիորդն, ընտրութիւնն կը յե-
տաձգի, և և ինչ որ ամէնէն աւելի կը ներգործէ
յայնժամ՝ կեղծն ընտրելոյ երկիրդն է : Ըսե՛մ
քեզ, որդեակ իմ, կը կարծեմ թէ քո ընտրութիւնն
եղած է, զի սիրտդ զարնուած է և առաւել քան
երբեք զգայուն : Բացէ ի բաց ըսէ ինձ, զի արդէն
հոգիս վկայած է ինձ, այն հայրենակորոյս օրիորդն
է որ ընտրած ես :

Մայր սիրեցեալ, ըսիք, պատասխանեց Արդին
խանդավառ, այն, նա ինքն է, և եթէ այսօր
հարս չբերեմ զայն ի մեր տուն, եթէ հեռանայ,
եթէ աներեւոյթ լինի առ յաւէտ իմ աշերէս պա-
տերազմի շիտթին և ախար տարուբերմանց մէջ,
նով մայր, յախտեան ի զուր պիտի բարգաւանին
այս կալուածք ինձ համար, ի զուր ապագայ տա-
րիներն ինձ բարեբեր պիտի լինին : Այն, փոխ-
ուած և անհրապոյր են ինձ տունն ու պարտէզն,
և, ան, մայրենի սէրն իսկ չէ կարող սփոփել այս
եզկեկին : Մէրն, կ'զգամ, կը թուրացնէ ամէն այլ
կասկ երբ կը հիւսէ իւր հանգոյցներն և ոչ միայն
օրիորդն կը թողու հայր ու մայր երբ կ'երթայ

զհետ ընտրեալ առնն , այլ և երկտասարդն կը մտնայ մայր ու հայր երբ միոյ միայնոյ սիրելւոյ աղջկան մեկնիլն կը տեսնէ : Աւստի և թողէք ինձ երթալ յոր վայր կը մտէ զիս անյուսուիւն . զի հայրս տուաւ վճիռն , և իւր տունն չէ այլ եւս իմ , երբ կը փակէ զայն այն օրիորդին զէմ զոր միայն կը ցանկամ բերել ի տուն :

Յարեց անդէն բարեգորով խոհական Մայրն .


Իբրեւ կրկին ժայռե՞ր ապա զէմ առ զէմ կը կենան երկու տարակարծիք այրեր . անխլիրտ եւ խորխա , ո՛չ մին կ'ուզէ մերձենալ միւսոյն , ո՛չ մին զառաջինն հաշտական խօսքերու շարժել իւր լեզուն : Աւստի կ'ըսեմ քեզ , որդեակ , դեռ կ'ապրի սրտիս մէջ այն յոյս թէ հայրդ պիտի նշանէ քեզ զայն , եթէ բարի և պարկեշտ է , թէ և աղքատիկ , որչափ և որոշած լինի մերժել չքաւոր աղջիկն : Իւր բարկութեան մէջ շատ բան կը խօսի զոր սակայն չկատարեր . ուստի շատ անգամ կը հաւանի այնմ զոր մերժած էր . բայց անոյշ լեզու կ'ուզէ , և իրաւունք ունի պահանջել ի քէն , վասն զի հայր է : Պիտեմք նաև թէ հաշէն յետոյ , ուր սաստկութեամբ կը խօսի եւ սեղանակցաց կ'ընդգիմարանէ , իւր բարկութիւնն կը զիջանի . գինին կը գրգռէ իւր բուռն կամաց բոլոր զօրութիւնն , և շներեր նմա լաւ բմբռնել այլոց խօսքերն , ինքզինքն միայն կը լսէ եւ կ'զգայ : Բայց կը հասնի երեկոյն , և կ'անցնին երկար խօսակցութիւնք որք տեղի ունեցան իւր ու բարեկամաց մէջ տեղ . աւելի մեղմ է , գիտեմ , երբ կը ցնդի փոքրիկ ար-

բեցութիւնն , և կ'զգայ անարդարութիւնն զոր իւր
զրգուման մէջ ըրաւ այլոց : Ա'կ , փորձն ընե'մք
խկոյն . ձեռներէցն միայն կը յաջողի . և կարեւոր
են մեզ բարեկամքն որք դեռ իւր քով նստած են ,
մանաւանդ արժանաւոր հոգեւորականն մեզ կարէ
օգնել :

Այսպէս խօսեցաւ երազարան , և յարեաւ քա-
րեզէն նստարանէն , յարոյց և իւր որդին որ յօժար
էր հեռեւել նմա : Արկոքին , կարեւոր խորհրդոյն
վերայ մտախոհ , իջան բլրէն անբարբառ :



The first part of the paper is devoted to a general
 discussion of the problem. It is shown that the
 problem is equivalent to a problem in the theory
 of functions. The second part is devoted to the
 solution of the problem. The third part is devoted
 to the study of the properties of the function
 which is the solution of the problem. The fourth
 part is devoted to the study of the properties
 of the function which is the solution of the
 problem. The fifth part is devoted to the study
 of the properties of the function which is the
 solution of the problem.



The sixth part is devoted to the study of the
 properties of the function which is the solution
 of the problem. The seventh part is devoted to
 the study of the properties of the function
 which is the solution of the problem. The eighth
 part is devoted to the study of the properties
 of the function which is the solution of the
 problem. The ninth part is devoted to the study
 of the properties of the function which is the
 solution of the problem. The tenth part is devoted
 to the study of the properties of the function
 which is the solution of the problem.

ԳՈՒԼԻՅԻՄՆԻԱ

011447000

00000000000000000000


011447000



Faint, illegible text at the bottom of the page, possibly bleed-through from the reverse side or a very faded print. The text is arranged in several lines and is difficult to decipher.

ՊՈՂԻՂԻՄՆԻՍ

ԱԾԻՐՐՀՈՒՎՈՂՆՔԵՑԻՆ



ակայն երեք անձինքըն, երէցն, գեղադորժն և պանդակապետն, գե.ս. նստած էին և կը շարունակէին իւրեանց խօսակցութիւնն որոյ նխութըն, իւր ամէն երեսներով քննուած, միշտ մի և նոյնն էր :

Բայց պատուական հոփուն, այնիւ խորհուրդներով ոգևորեալ, ըսաւ .

Չե՞մ ուզեր ձեզ հակառակ խօսիլ : Գիտե՞մ, մարդն պարտի միշտ լուսադունին լինել հետամուտ .

և , որպէս կը տեսնեմք , կը քանայ իսկ հանապաղ
բարձրանալ , կամ զէթ կը խնդրէ նորն : Ասկայն
չստ հեռուն մի երթայք . զի այս գգացմանց բով
բնութիւնն սուած է մեզ նաև հնոցն յարեւոյ յո-
ժարութիւնն , և հաճոյք գրած է այն բանին մէջ
որում սովորած է որ ի վաղուց : Ամէն վիճակք լու-
են , եթէ չեն հակառակ բնութեան եւ բանակա-
նութեան : Բազում իմիք կը ցանկայ մարդ , և սա-
կայն գոյզն ինչ են իւր պէտք . զի կարճատեւ են
աւուրք և սահմանաւոր է ճակատագիր մահկանա-
ցուաց : Ձեւ մեզադրեր գայն մարդ որ , միշտ գոր-
ծօն և անհանգիստ , յանդուգն ժրութեամբ կը շրջի
ընդ ծովս և ընդ բնաւ ուղիս երկրի և կը հրճուի
տեսնելով շահն որ տակաւ կ'աճի և կը զրզուի իւր
և իւրայնոց շուրջն . բայց կը յարգեմ նաև գայն
անդորրասէր քաղաքացին , որ խաղաղ քայլերով կը
պատի իւր հայրենի ժառանգութեան շուրջն և որ
կը գործէ զերկիր ըստ կարգի եղանակաց : Աէն մի
տարի հողն շիտխուի իւր համար և նորասունն
ծառն շիտութար տարածել զէպ յերկինս իւր բա-
ղուկներն առատ ծաղկամբք զարդարուն : Ա՛չ , մար-
դըն համբերութեան պէտք ունի , պէտք ունի նաև
անարատ , հանդարտ , անխառվ հողուոյ և ուզա-
ղատ մտաց : Քիչ սերմեր միայն աւանդ կուտայ
անուցիչ երկրին , և սակաւաթիւ կենդանեաց հօտ
մի միայն կը պահէ , զի օգտակարն է միշտ իւր
միակ մտածումն : Արանի այնմ որում բնութիւնն
սուած է մի այսպիսի ներդաշնակ բնաւորութիւն .
նա կը հայթայթէ մեր ամէնուն անուողն : Օրհնեալ

ինի և փոքու քաղաքին բնակիչ , որ հողագործութեան կը դուզէ՝ քաղաքային արհեստն : նորա վերայ շճանքանար այն ճնշումն որ անձուկ սահմանաց մէջ կը փակէ շինականն ներութեամբ . զայն շին յուզեր հողք ընշուէա քաղաքներու բազմաաննչիկ բնակչաց որք սոքոր են ձգնիլ , թէև արկար միջոցներով , նմանել ճոխին ու մեծին , մանաւանդ կանայք և օրիորդք : Օրհնեցէք ուրեմն , բարեկամդ իմ , ձեր որդւոյն անդորրուէա վաստակոց փափաքն , և օրհնեցէք նաև զայն ամուսին բարեյարմար զոր պիտի ընտրէ իւր մի օր :

Այսպէս խօսեցաւ նա : Իսկ և իսկ ներս մտաւ Մայրն որդւոյն հետ , նորա ձեռքէն բռնած եւ կեցնելով զայն իւր ամուսնոյն առջև :

Հայր , խօսեցաւ նա , քանիցս , միմեանց հետ շաղփաղփելոյ առեն , խորհած եմք այն բարերաստիկ աւուր վերայ որ պիտի գայր երբ Հերման , ընտրելով իւր ամուսինն , ընոյր հուսկ ուրեմն մեր փափաքներն և բերկրեցնէր զմեզ : Այս անգր կը թափառէին մեր միտք , մեր ծնողական խօսակցութեանց մէջ : Այս օրս եկած է արդ , երկինք մատուցին և ցուցին նմա հարսնացուն , և իւր սիրան զձուց : Չէ՞նք ըսեր միշտ թէ պէտք է որ ինքն անձամբ ընէ ընտրութիւնն : Յառաջագոյն իսկ չէ՞ր փափաքեր որ մի օրիորդի վերայ սէր զգայր : Այս ժամն եկած է արդ , զգաց նա և ընտրեց . այն , և այրարար ըրաւ իւր որոշումն : Այս օրիորդն է այն օտարուհին որ պատահեցաւ նմա : Տուր նմա զայն , ապա թէ ոչ երդուած է մնալ ամուրի :

Աւ Արդին ըսաւ . Տճւք ինձ զնա , հայր . սրախ
ընտրութիւնն անմիտ է և անստղիւս . անգուգա-
կան դուստր մի պիտի լինի նա ձեզ :

Բայց Հայրն կը լռէր : Աւ ահա յարեաւ արագ
Երէցն , խօսք առաւ և ըսաւ .

Մարդոց կեանքն եւ բովանդակ ճակատացիրն
միշտ մի միակ վայրկեանէ կախումն ունին . զի ,
նոյն իսկ յեա երկար խորհրդակցութեանց , որո-
շումն միշտ մի վայրկեանի գործ է , եւ իմաստուն
մարդն միայն կուտայ լաւագոյն վճիռն : Վասն-
դուստր է միշտ ընտրութեան մէջ այս ու այն երկ-
րորդական կէտերու վերայ խորհրդածել և ոչսպէս
չփոխութեան մէջ ձգել զգացումն : Ասոյջ է Հեր-
մանի հոգին . անդստին թ մանկութենէ կը ճան-
չեմ զնա . շէր ձգեր նա՝ մինչ տղայն էր՝ իւր ձեռ-
ներն յայս կամ յայն անխտիր . ինչ որ կը բարձայր՝
պատշաճ էր իւրեան , ուստի ամուր կը բռնէր
զայն : Մի ափշիք ուրեմն և մի ահարեկիք տեսնե-
լով յանկարծ հասած ինչ որ կը փափաքէիք այն-
քան երկար տանէ թ վեր : Ասոյզ է թէ սա շհա-
մապատասխաներ այն ըզձից զորս կը տածէիք թե-
րեւս ձեր սրտին մէջ . բայց մեր կոյր տենչանք թ
մէնջ իսկ կը թաքուցանեն յաճախ զտենչային . սար-
գեւք կը հասնին մեզ թ բարձանց իւրեանց ճշմա-
րիտ կերպարանաց տակ : Մի անդունէք ուրեմն
զայն օրիորդ որ զառաջինն շարժեց ձեր սիրա-
սուն , ազնուասիրտ , խոհական օրդւոյ հոգին : Ե-
րանի այնմ առ որ նախասիրեալն իսկոյն կը մա-
տուցանէ իւր ձեռնն , որոյ սիրելագոյն տենչն չի

նուազիր լռին իւր ծոցոյն մէջ : Այս , ամէն ինչ ի նմա կը յայտնէ ինձ զայս , որդւոյդ բախտն վրձ-
առւած է : Ըջմարիա սրտազին յոժարութիւն մի
յանկարծ յայր կը կատարելագործէ զգրասանին :
Հերման անդրդուելի է . եթէ պլանայք նմա ձեր
հաւանութիւնն , կը վախճամ թէ զուցէ իւր գե-
ղեցկապոյն տարիներն տխուր կեանքի մի մէջ սա-
հին զուազին :

Անդէն Կեղապործն , այր չրթանց վերայ արդէն
երկար տակնէ ի վեր պատրաստ կային բանք ի
թռչել , ըսաւ խորհրդածող կերպարանօք .

Այս պարագայիս մէջ այլ միջին ճամբան բռն-
նե՛մք . Փ—ն՝ յ—հ—լ . սա նոյն իսկ Աւգոստոս
կայսեր նշանաբանն էր : Թոժարակամ պատրաստ
եմ , մեր սիրելի գրացւոյն ծառայելոյ համար , ան-
նշան խելքս ի կիր արկանել իւր օգտին : Մանա-
ւանդ երիտասարդութիւնն առաջնորդութեան կը
կարօտի : Քողէք ինձ ապա մեկնել . կուզեմ փոր-
ձել որիորդն , տեղեկութիւն հարցանել իւր վերայ
այն թաղին բնակչաց յորում կ'ապրի և որ անշուշտ
գինքն կը ճանչէ : Այ որ այնպէս գիւրաւ կարէ
խարել գիտ , և գիտեմ կըսել և գնահատել խօս-
քերն :

Իսկոյն Արցին յաւեյցուց արագաթև բանիւք .

Ըրէք զայդ , զրացի , և գնացէք ու տեղեկա-
ցէք , բայց կը փափաքիմ որ Տէր Երէցն այլ ընկե-
րանայ ձեզ . երկու այսպիսի բնափր անձեր անմեր-
ժելի մկայներ են : Մ՛ , հայր իմ , փախստական
անառակ ազգիկ մի շէ նա , շէ այն արկած անօգիր

խափառակիաններէն մին որք այսր անգր կը յածին երկրին մէջ և անխորձ երիտասարդներն կ'ըմբըսնեն իւրեանց նեղանոց թակարդին մէջ : Ա՛յ, այս համայնափինջ պատերազմի ահաւոր պատուհան , որ զաշխարհ կ'աւերէ և որ արդէն բազմաթիւ ամուր շինուածներ հիմն ի վեր տապալեց , վտարանդեց նաև հէզ օրիորդն : Ա՛յ ապաքէն պնուազարձ բարձրապատիւ մարդիկ թշուառութեան մէջ կը դահափթին : Իշխանք ի փախուստ կը ճեղեն ծպտեալ , եւ արքայք կ'սարին արսորանոց մէջ : Ա՛հ , այսպէս և նա , լուազոյնն իւր քերց , տարաշխարհիկ եղած է . մտնալով իւր իսկ թշուառութիւնն , զայլս կ'ախտիէ , և , ինքն իսկ անօգնական , կ'օղնէ այլոց : Մեծ են վիշաք որք կը սփռին երկրի վերայ . անկարելի է որ մի բարիք ծնի այսքան շարիքէ , և ես , ընդունելով գրկացս մէջ հաւատարիմ կենակից մի , մխիթարուիմ պատերազմին աղէտներէն , որպէս դուք մխիթարուեցաք հրդեհէն :

Յայնժայտ Հայրն բացաւ իւր բերանն և յայանեց իւր կամքն այսպէս .

Մնչպէս , որդեակ , արձակուեցաւ լեզուդ որ այնչափ տարիներէ հետէ ընդարմացեալ էր եւ ի ստիպել հարկին միայն կը շարժէր : Ինձ ևս կը փձակի կրել ինչ որ անցնիւր հօր կ'սպառնայ , այն է թէ մայրն , կարի ներտղամիտ , կը նպատաւորէ որդւոյն յամառ կամքն , և մէն մի գրայի պաշտպան և փատաղով կը մանկ , երբ հայրն կամ ամուսինն է առարկայ յարձակման : Մայց շկամիմ

ձեր ամէնուն զխնայրել . ինչ շահ . զի յառաջագոյն կը տեսնեմ խեւութիւնն ու արցունքներն : Վնայէք և քննեցէք , և եթէ ձեր տեղեկութիւնը նորաստուոր են , յանուն Աստուծոյ բերէք ինձ ազջիկն ի տուն . իսկ եթէ ոչ , պէտք է որ մտնայ զայն :

Այսպէս խօսեցաւ հայրն : Եւ Արդին գոչեց ցընծային .

Յառաջ քան զերեկոյն ընտրելագոյն գուսարն պիտի բնծայուի ձեզ , որպէս կը բազմայ մի մարդ յորում կ'ապրի մի իմաստուն ոգի : Նարեսիրա կոչանայլ երջանիկ պիտի լինի , որպէս կը համարձակիմ յուսալ : Այո՛ , յաւիտեան շնորհակալ պիտի լինի ինձ որ ի ձեզ վերագարծուցի նմա հայր ու մայր , որպէս և սօքա կը փափաքին ունենալ խոհանոց գուակներ : Բայց ոչ եւս այլ կ'ուզեմ յամել . երթնմ իսկոյն կազմեմ երիփարներն և տանիմ բարեկամներն սիրելոյս հետոց վերայ . անձնատուր կը լինիմ նոցա և իւրեանց խոհեմութեան . կ'երզնում ահա որ պիտի շարժիմ ըստ իւրեանց որոշման , և շպիտի տեսնեմ վերստին ազջկան երեսն մինչև իմա շլինի :

Եւ գուրա ելաւ առժամայն . այլք ի խորհուրդ մտան իսկոյն զխարեւոր իրացն :

Հերման փութաց իսկոյն յախտն , ուր հրաշունչ երիփարք կը հանդէշին եւ կ'ուռէին արագ արագ մաքուր վարսակն ու շոր խտան , հնձուած լուսոցոյն մարդ աղեանէն : Դրաւ նոցա շոյա փայլուն աւանձն ի բերան , անցոյց փակերն արժաթազոծ

ճարմանդներէն , հաստատեց երկայն ու լայն երասանակներն եւ գուրս բերաւ ձիերն բակին մէջ , ուր թիբ մանուկն , քեզիէն քարշերտով , բերած էր կասքն : Անդէն ճարտարութեամբ մաքուր փակերտով լծեցին երազամիզ ամենէի երիւփարներն : Հերմանն ի ձեռն առաւ խարաղանն , նստաւ եւ գլխեց կասքն գանուղւոյն կամարաց տակ : Արբ երկու բարեկամք իւրեանց տեղերն գրաւեցին , ահա սրացաւ կասքն արշաւասոյր եւ յեակոյս թողուց սաղաշատակն , յեակոյս թողուց քաղաքին պարիսպքն եւ սպիտակաւառլ աշտարակներն : Աւղղեց ընթացքն երազամիտքի՞ դէպ ի քաղածանօթ խճուղին , միշտ երթարով մի եւ նոյն շուտութեամբ թէ գաս ի վեր թէ գաս ի սայր : Դայց երբ նշմարեց գիւղին աշտարակն եւ ոչինչ հեռի պարտէզներով շրջափակ տնակներն , խորհեցաւ ընդ միտան թէ մամ էր կասեցրնելոյ գծիանն :

Դարերէ ի վեր տակ առած արմատացած երկնաբերձ թմբիներու պատկառելի մի ռիթեամբն հոփանաւոր եւ դարբերձ ծածկուած մի լայնածաւալ կանաչագեղ մարգագետին կայր գիւղին առջեւ , զբոսաւայր գիւղացւոց եւ մերձակայ քաղաքացւոց : Մասերուն տակ , դեանի վերայ փորուած , մի սղրիւր կայր անդ . «տախճաններէ վար իջնելով» կը տեսնէ մարդ քարեղէն նստարաններ շուրջ աղբերն որ կը բզիւէր մշտաբուզիս տկանակիս , եւ զոր կը պատէր ցած պատ մի ի գիւրտի իւն այնուցիկ որք կուգային անդր գջրոյ :

Հերմանն որոշեց այս ստուերին տակ կասե-

ցրնել ձիերն , բրաւ այնպէս , եւ խօսեցաւ .

Իջէք արդ , բարեկամք , և դնացէք տեղեկանալ թէ օրիորդն արժանի է ձեռին զոր կ'ընծայեմ նմա : Աս կը հաւատամ աներկբայ , եւ ի դարձին չպիտի սրտակէք ինձ բան մի որ նոր և տարօրինակ ինձ երևի . եթէ յիս և եթ աստատան լինէին իրքն , իսկ և իսկ կը թռչէի ի գիւղն , և բարի կոչան քիչ խօսքով բախտս կ'որոշէր . գիւրին պիտի լինի ձեզ ձանշել գայն , զի դուն ուրեք կը գտնուի մի դէմք գուղական իւր գիմաց : Սակայն ձեզ կուտամ նաև իրբև նշան իւր հանդերձքն որոց նշանաւոր է մաքրութիւնն : Պարմիր բաճկոնակ մի , գեղեցիկ լարով պնդուած , իւր կարակնածու ծոցոյն շուք կը յաւելու , և մի սեաւ լանջապան կը սեղմէ իւր մէջքն . խնամով ծալ ի ծալ գործած է իւր շապկին օձիքն իրբև գանգուր փողկապ , որ անբիծ շնորհօք շուրջ կը պատէ իւր բոլորչի ծնօան . ձուածու ազնուական դէմքն անկեղծութիւն եւ պայծասութիւն կը յայտնէ . իւր երկայն մազերուն հիւսքն արծաթեայ դնշասեղներու բոլորախքն պինդ կը գալարին բազմիցս . բաճկոնակին տակէն կ'սկսի բազմախորշ և կապոյտ շրջազգեստն որ կ'իջնէ և կը ծեծէ իւր ոտից բարեձու պճեղներն : Բայց պոյս եւս կ'ուղեմ ըսել ձեզ և խնդրել ի ձէնջ յապկապէս թէ շխտիք օրիորդին հետ և նշմարել շտայք նմա ձեր խորհուրդն , միայն գայլս հարցէք և մըտիկ ըրէք ասէն ինչ որ պատկեն ձեզ իւր փերայ : Արբ բուական տեղեկանացք աստահովելոյ համար հայրս ու մայրս՝ դարձէք առիտ , եւ յայնժամ կը

մտածեմք թէ ինչ պէտք է ընել : Չճանապարհայն յղացայ այս խորհուրդն :

Այսպէս խօսեցաւ : Յետոյ երկու բարեկամք գնացին ի գիւղն , ուր պարտիզաց , շտեմարանաց և տանց մէջ կ'եռայր գեռայր բազմութիւն մարդկան , լայն սիւղոցին մէջ սայլ սայլի քով կեցած էր խիտ առ խիտ , արք կը դարմանէին բառաշող անասուններն ու ձիւերն որք գեռ լծուած կը մնային , կանայք ամէն ցանկի վերայ ձորձ կը սփռէին շորցնելոյ համար , և աղայք կ'գրօսնուին ջուր չբթթեցնելով վտակին ալիքներուն մէջ :

Արկու առաքեալ քրտեաք , ճեղքելով սայլից , մարդկան ևւ կենդանեաց հոծ բազմութիւնն , յաջ և յահեակ կը նայէին շուրջանակի թէ պիտի նըլմարէին արդեօք նշանակեալ ազջկան պատկերն . բայց ոչ որ յամենեցունց կը թուէր լինել շքնազօրորդն :

Յանկարծ մեծցաւ ամբոխն ու աւելի խուռն կուտեցաւ : Սպառնալից մարդիկ կը կուռէին սայլից բոլորախքն և կանայք միջամուխ կը լինէին ճիշ բառնալով : Աւ ահա մերձեցաւ մի ծերունի որ կը քայլէր վեհութեամբ , գնաց առ այնտիկ որք կը թշնամանէին գիրեար , և երբ խաղաղութիւն հրամայեց ևւ լրջօրէն հայրաբար սպառնացաւ նոցա , իսկայն խախտեցաւ արմուկն :

Թշուառութիւնն , գոչեց , գեռ շնուածն ց ուրեմն գմեղ և շուսոյց մեզ թէ պարտխք միսկեանց համբերող և երկայնամիտ լինել , եթէ անցնիւր որ շկարէ իսկ ինքնին խելամտել ևւ կուել իւր գոր-

ծերն : Արդարեւ անհամբոյր է երջանիկ մարդն .
բայց շարիք շարիք ուսուցանեն ձեզ հուսկ ուրեմն
ոչ եւս այսուհետեւ կազիլ միմեանց հետ : Մի ապա
ստար հոգի վերայ տեղւոյ համար կուտիք իրերաց
հետ , և բաժնեցէք ձեր մէջ ինչ որ ունիք , որպէս
զի սրբութիւնն դանկար :

Այսպէս կը խօսէր այրն , եւ ամենեւին լուս-
կային . և , մեղմացեալ վերստին , հաշտասէր ողբով
կարգի գրին անասուններն ու սայլերն :

Երբ հոգեւորականն լսեց մարդոյն խօսքերն եւ
ստարական դատաւորին հանդարտ ողին նշմարեց ,
մերձեցաւ առ նա և այս խօսքերով յայտնեց իւր
մտածութիւններն .

Արդարեւ , հայր , երբ ժողովուրդն երջանիկ օ-
րերու մէջ կ'ապրի , անանկով երկրին պատուղնե-
րով , որ աննախանձ կը բանայ իւր ծոցն ամենուսս
և մէն մի տարի , մէն մի ամիս կը նորոգէ իւր ա-
ստատաձիւր ցանկայի պարզեւներն , այն ատեն ամէն
ինչ ինքնին կը քայլէ , անցնիւր ոք կը կարծէ լինել
ամէնէն խոհեմ եւ ամէնէն իմաստուն մարդն . եւ
այսպէս կը մնան միմեանց քով , և իմաստնագոյնն
կը կորուի յաճախ խառնադանձին մէջ և կը հա-
մարուի իրրեւ որ յայլոց . զի ամէն ինչ որ կը պա-
տահի՝ կ'անցնի խաղաղութեաց և իրրեւ ինքնաշարժ :
Նայց երբ թշուառութիւնն վեր ի վայր կը վրդովէ
կենաց ստփրական հանապարհներն , հիմնայատակ
կը քանդէ տունն , կ'աւերէ կը գերփէ պարտեղ և
անդատանն , այր ու կին դուրս կը վարէ իւրեանց
ընտանեկան շարկի ծոցէն և ամբողջ տաղ նապալիչ

որեր և գիշերներ կը թափառեցնէ զայնա ընդ քարչ և մալբասէա , ա՛ն , յայնժամ մարդ իւր շուրջն կը նայի թէ ո՞վ է արդեօք իմաստունն և այլ ևս չորտար ի դուր իւր պատգամներն : Ըսէ՛ք , ինձ , հայր , դուք անշուշտ դատաւորն էք այս վատրանդի մարդոց ոչն իսկոյն ցածուցիք սոխքն : Այո՛ , դուք կ'երեւիք ինձ սցար իրբև մին այն վաղնջուց ազգապետներէն որք նժգե՛ն ժողովրդոց առաջնորդեցին անապատներու և անհետ ուղիներու մէջէ : Ինձ կը թուի թէ նոյն ինքն Յեսուայ կամ Մովսիսի հետ եմ խօսակից :

Եւ պատասխանեց նմա դատաւորն լուրջ հայեցումով .

Յիրուի մեր ժամանակն նման է ամէնէն հալուսպիւտ ժամանակաց որք կը յիշուին թէ նուիրական և թէ աշխարհային պատմութեանց մէջ , զի նա որ երէկ ևս այսօր ապրեցաւ , մեր օրերն՝ նա արդէն տարիներ ապրած է , սննդան կուս և հոծ կ'ընթանան պատահարք : Խէպէտ դեռ ևս տուրդ եմ , բայց եթէ սակաւ ինչ մտքս գէտ յանցեալն սանիմ , կարծեա թէ արդէն իսկ ազէրեկ ծերութիւն մի կը ծանրանայ գլխուս վերայ : Ա՛ն , կարեմք զմեզ նմանեցնել այն մարդոց որոց մի ահաւոր ժամու մէջ երեւցաւ Տէր Աստուած հրկիպեալ մտրենուոյն մէջէն . մեզ ևս երեւցաւ ամառոց և հրոց մէջ :

Մինչ Արէջն մտադիր էր յերկարածող և խօսակցութիւնն և կը ցանկայր սեղեկամտալ մարդոյն և իրեններուն փնձակին , ահա ընկերն անհամբեր ը-

սաւ նմա գացաւ ականֆն թ վայր . Շարունակեցէք
խօսիլ գատաւորին Հեա և խօսակցութիւնն օրիոր-
դին վերայ գարձուցէք . Ես կ'երթիմ խնդրել զայն
ամենուրեք , և երբ գանեմ՝ կը գառնամ խկոյն :
Նրէցն Հաճութեան նշան տուաւ զլիով , և մացա-
ւաց , սրարտիզաց և շտեմարանաց մէջն կը շրջէր
լրտեան ու կը յուզէր :



0419

4160

0411



Երբ երէցն հարցուց օտարական դատաւորին

թէ ինչ անցքեր անցած էին իւր ժողովրդեան գլխէն և թէ որչափ ժամանակ է ի վեր գաղթած էր նա իւր բնակութենէն , պատասխանեց այրն .

Մեր վիշտը նորահաս չեն , զի բովանդակ այս ժամանակին դառնութիւնն ըմպեցինք , դառնութիւն եւս աւելի ահաւոր զի եւ մեր կործանեցաւ դեղեցկագոյն յոյսն : Ձի սով կարէ ուրանալ թէ ինչպէս իւր սրտին բարձրանալն զգաց և ինչպէս աւելի առողջ դարկերով բարախեց իւր կուրծն ազատաշունչ , երբ նոր արեւուն առաջին շողերն ծագեցան հորիզոնին վերայ , երբ խօսուեցաւ ամենուրեք մարդոց ընդհանուր իրաւանց վերայ , կենսատու ա-

զատութեան եւ ցանկալի հաւատարութեան վերայ : Այն ատեն իւրաքանչիւր որ յուսաց թէ այլ եւս պիտի կարէ՛ր ասորիւ ինքն ինքեան համար . այն կատարեք, որք կը պրկէին բազում աշխարհներ եւ զորս դատարկացորտութիւն եւ անձնական շահ կը բռնէին իւրեանց ձեռաց մէջ, թուեցան լուծուիլ : Այն անձկալից օրերուն մէջ բոլոր ժողովուրդք շէին դարձներ իւրեանց աշէրն դէպի մայրաքաղաքն աշխարհի, որ երկար ատենէ ի վեր արդէն կը կրէր այդ պերճ տխուրան եւ որ ոչ երբեք առաւել քան յայնժամ արժանի եղած էր այնմ : Անուանքն այն մարդոց, որք զառաջինն աւետարանեցին ազատութիւնն, հաւատար չդատուեցան ամէնէն հոյակապ, յաստեղս ամբարձեալ անուանց : Անցնիւր մարդ չզգաց վերածնիլն յինքեան արութեան, ոգւոց եւ լեզուի . եւ մեք, որ սահմանակից էինք, զառաջինն ոգեւորեցանք այդ կենդանացուցիչ հրով : Եւ ահա պատերազմն սկսաւ, եւ սպառապէն Փաղիացւոց վաշտք մերձեցան, միայն թէ բարեկամութիւն բերել կը թուէին : Եւ բերին ստուգիւ, զի ամենեքին կը կրբէին մի վեհ հոգի . անկեցին զուարթագին ազատութեան գեղածիծաղ ծառերն, խոտանալով անցնիւր ումեք թողուլ զիւրն եւ սալ իրաւունք ինքնակառավարութեան : Մեծ ուրախութեամբ բերկրեցաւ երիտասարդութիւնն, ցնծացաւ ծերն, եւ նոր գրոշակաց շուրջն դարձան զուարթ կարաք : Յազթական Փաղիացիք ընդ հուպ յանկուցին յինքեանս նախ արանց ոգիքն իւրեանց աշխոյժ եւ զուարթ բնաւորութեամբ, յետոյ կանանց սրտերն՝

իւրեանց անդիմադրելի շնորհօք : Բազմապահանջ պատերազմին բեռն իսկ թեթեւ երեւցաւ մեզ , զի յայն այլ ընդ այլոց կ'ընծայեցնէր զսպազայն մեր աշաց և կը հրաւիրէր մեր հայեցուածներն նորաբաց ուղիներուն մէջ : Ահ , քանի երջանիկ է այն ժամանակն , ուր տարփաւորն իւր խօսեցերցն հեա կը հօծի զուգապար , սպասելով ըղձալի աւուր երանաւէտն միութեան . բայց զեղեցիկագոյն ևս էր այն ժամանակն ուր ինչ որ մարդ գերագոյն բարիքն կը դաւանի՝ կ'երեւէր մօտ առ մեզ և դիւրաւ ստանալի : Արձակուած լուծուած էին ամէն լեզուք . ծերք , հասուն մարդիկ և սլատանիք կը խօսէին բարձրաձայն և լի վսեմ խոհիւք և զգացմամբք : Սակայն ընդ հուս միտադնեցաւ երկիւնք : Մի ազգ անօրէն մարդկան , անարժան բարւոյն ըստեղծիչներն լինելոյ , ուղեց յափշտակել տիրապետութեան օգուտներն . զիրար ջարդեցին , հարբատահարեցին նոր գրացիներն ու եզրայրներն և յըզեցին սոցա զոչաքաղ յափշտակող մարդոց ամբօխ Եւշուայտեցան ու կողոպտեցին փոքրերն մինչեւ ցփոքրագոյնն : Իւրաքանչիւրն ուրիշ երկխուզ ունենալ շէր թուեր , բայց միայն սա թէ արդեօք հետեւեալ աւուր համար բան մի կը թողոյր : Մայրայեղ էր մեր շուառութիւն , և ճնշումն կը ծանրանայր օր քան զօր . ո՛չ որ կը լսէր մեր աղաղակաց , զի ինքեանք էին օրուան տէրերն : Այն ատեն վիշտ և զայրոյթ տիրեցին ամէնէն հանդարտ հոգիներուն . ամէնքս միահամուռ երդուանք՝ այնքան թշնամանաց և կրրկնակի սպառեալ յուսոյն դառն կորստեան վրէժն առ-

նուր : Բազդն դարձաւ Քերմանաց կողմն , ու Քաղխացիք յետս նահանջեցին արագ ընթաց : Բայց նաև յայնժամ փորձն ստինք պատերազմի տխուր բախտին : Յազթ ողն ունի վեհութիւն և բարութիւն , կամ գէթ կ'երեւի ունենալ . կը խնայէ պարտելոյն , նկատելով զայն իբրև բարեկամ , երբ օգտակար է իւրեան և իւր ընչիւք կը ծառայէ իւր շահուց . բայց փախտեացն բնաւ օրէնք չճանչեր . միայն մահուանէ ճողոպրիլ կը խորհի , կ'սպասէ արագ աննախատես . բորբոքած է նաև իւր զայրոյթն , և յուսահատութիւնն իւր սրտէն դուրս կը հանէ սեւառծիբներ : Այլ ևս ինչ նուիրական է նմա . սովն ինչ իւր որսն է : Վայրագ ցանկութիւնն կը մղէ զնա գահապէժ մի կնոջ վերայ , եւ եղեսան կը փոխէ հաճոցն : Ամենուրեք մահ կը տեսնէ և խժոժօրէն կը վայելէ իւր յետին վայրկեաններն , կը հրճուի ի տեսիլ արեան և կը հրճուի ի լուր հեծեծանաց թըռուառութեան : Մերայնոց սրտերուն մէջ կատաղութիւնն յարեաւ զայրագին խնդրելոյ համար գլխէժ այնքանի կորստեան և պահպանելոյ ինչ որ կը մնայր : Ի գէն ընթացաւ ամենայն , մղուելով նաև փախրստականին արագութենէն և կապոյտ գէմբէն և մուրթեալ ու խռովացոյց ակնարկէն : Անհանգիստ հրնչեց յայնժամ սաղնապատոյթ գանչիւնն զանգակաց , և ապագայ փտանդն շկասեցոյց բարկացացաւ մուրգնութիւնն : Եւ ահա ի գէն փոխարկեցան իսկոյն խաղաղ գործիներն արդիւնարար մշակին . արեամբ թաթաւեցան մանդաղն ու երկմատնին . անխնայ կ'անկնէր թշնամին . ամենուրեք կը մոլէր հզօր զօ-

բութիւնն , որպէս և վաստափրատ և խորամանկ
ակարութիւնն : Իցիւ շիինէր ինձ աւեանել միւսան-
գամ զմարդ այս քառմենցի մտորութեանց մէջ . նա-
խանեծար է վայրագ գազանն : Թող նա շխօսի այլ
ևս ազատութեան վերայ իբրու թէ կարէր անձամբ
զանձն կառավարել . երբ բարձուին թումբք , ահա
իսկոյն կ'երեւի սպերասան բոլոր այն շարութիւնն
զոր օրէնքն նորա սրտին ներքին խորշերուն մէջ մը-
ղած տարած էր :

Այր պատուական , յարեց երէցն շեշտելով , ե-
թէ քաւական արդարացատ չէք մարդոց նկատ-
մամբ , շեմ մեղադրեր զձեզ , զի այնքան շարիք
պատճառած է ձեզ մի ապօրէն ընթացք : Եւսց ե-
թէ կամէիք յետահայեաց աչք մի շրջեցնել այդ ար-
խուր ժամանակաց վերայ , դուք ինքնին պիտի
խստութանէիք թէ յաճախ բարի արարքներ աւե-
սաք նաև . ո՞չ սպաքէն վտանգն ի վեր կը հանէ շատ
ազնիւ հանդամանքներ որք թագուն կը մնային սրբ-
տից խորն , և ո՞չ սպաքէն շուստութիւն կը գրգռէ
զմարդ իբրև մի հրեշտակ , իբրև մի պահապան
ողի երեւիլ այլոց :

Ժպտացին պատասխանեց ծերունի մեծարոջ
զատուորն .

Իմաստութեամբ կը յիշեցնէք ինձ թէ , յետ իւր
տան հրկիզման , կուգան յաճախ իմացնել յուսահատ
ափրոջ թէ կարէ ձեռք բերել այն ոսկին ու արծաթն
որ հալած և ցանուցիր կան աւերակաց մէջ : Իոյզն
ինչ է այդ արդարեւ , սակայն և այնպէս թանկա-
զին . և անանկն կը փորէ աւերակաց մէջ և կ'ու-

բախանայ գտածին վերայ : Այսպէս և ես յօժարա-
կամ կը դարձնեմ պայծառ հայեցումներ դէպ
այն սակաւաթիւ բարի գործերն որք յիշողութեան
մէջ կը մնան անջնջելի : Այո՛ , շեմ ուրանար , տե-
սայ որ թշնամիներ կը հաշտուէին քաղաքն ազետէ
փրկելոյ համար . տեսայ որ բարեկամաց , ծնողաց ,
որդւոց սէրն զանկարելին կը փորձէր . տեսայ թէ
ինչպէս ծերունին կ'առուզանայր անդրէն , մանուկն
խակ կը յայանուէր իբրեւ երիտասարդ , և տկար
սեռն , որպէս կը կոշուի սովորաբար , կ'երեւէր ա-
րիասիրտ քաջազօր և արագամիտ : Եւ ներեցէք որ
պատմեմ ձեզ ի մասնաւորի այն գեղեցիկ գործն
զոր վեհօգի մի ազջիկ կատարեց , մի պատուական
օրիորդ : Միայնակ մնացած էր նա այլ ազջիկանց
հետ մի մեծ ազարակի մէջ . արք մեկնած էին վա-
նելոյ համար զօտարականոն : Եւ ահա բակին մէջ
լցան խումբ մի սինլքորներ , որք սկսան կողուտել
և ընդ հուպ մտան կանանց սենեկին մէջ : Ի տեսիլ
հասակազեզ մանկամարդ օրիորդին և շնորհազարդ
սիրուն մզջիկանց որք դեռ ազայ կրնային կոշուիլ ,
վայրագ ցանկութիւն մի յափշտակեց զիրենք . յար-
ձակեցան անողորմաբար դողդօջուն երամին և մեծ-
անձն օրիորդին վերայ : Սակայն նա ի նոցանէ մի-
ոյն սուրն խկոյն խլեց իւր մէջքէն և տուաւ նը-
մա մի հզօր հարուած որ տապալեց զայն արիւ-
նաթաթա իւր ստից տակ : Յետոյ այրական հար-
ուածներով փրկեց նաև արիաբար իւր ընկերու-
հիներն , զարկաւ նաև շորան աւազակներէն որք
փախստեամբ գերծան մահուանէ : Ապա գոցեց բա-

կին գուռն և զինեալ սպասեց օգնութեան :

Երբ հոգեւորականն օրիորդին գովեստն ըսեց , ահա յոյս մի արթնցաւ իւր սրտին մէջ , իւր բարեկամին համար , և մտաւ էր հարցանել . Ո՞նչ եղաւ նա , թէ այն ժողովրդեան տխուր վտարանդութեան ընկերացած էր :

Բայց անդէն գեղապործն հասաւ վտւթանակի , ձգեց առ ինքն զհոգեւորականն և յունկն նորին հօծեց այս խօսքերն .

Հուսկ ուրեմն , ի մէջ հարիւրաւոր կանանց , գըտայ ազգիկն ըստ նկարագրութեան : Այկէք ուրեմն և ձեր իսկ աչերով տեսէք զայն . առէք դատաւորն այլ ի միասին , որպէս զի քաղեմք ի նմանէ կարեւոր տեղեկութիւններն :

Աւ գարձան , և ահա դատաւորն , կոշուելով իրեններէն որ պէտք ունէին իւր խորհրդոյն , աներեւոյթ եղած էր : Սակայն երէցն իսկ և իսկ հետեւեցաւ գեղապործին դէպ ի մի ցանկի պատառուածքն , ուր սա նրբամիտ դէմքով սկսաւ մեկնել և ըսել .


Կը տեսնէք ազգիկն . խանձարրոց մէջ պատատել է նորածին մանուկն . կը նանչեմ ահա բամպակեայ հին հանդերձն և կապոյտ բարձերեան որ կը գտնուէր Հերմանէն նմա ընծայուած ծրարին մէջ . սառուիւ շոյա և լաւ գործածութիւն մի ըրել է պարգեւաց : Այս նշանք ակներեւ են . ոչինչ նուազ ստոյգ են այլք . զի իւր կարմիր բանկոնակն , գեղեցիկ լարով սնդուած , իւր կարակեամեւ ծոցոյն շուք կը յաւելու . սեաւ լանջապանն կը սեղմէ

իւր մէջքն . իւր շապկի օձիքն խնամով ծալ ի ծալ գործուած է իրրեւ գանգուր փողկապ և անբիծ շնորհօք շուրջ կը պատէ իւր բոլորչի ծնօտն . ձրւածն և ազնուական դէմքն անկեղծութիւն և սպայծառութիւն կը յայտնէ , և մազերուն գորաւոր հիւսքն արծաթեայ գնդասեղներու շուրջ կը գալարին : Նստած է թէ և , բայց կը տեսնուի գարձեալ իւր հասակի դեղեցկութիւնն , և կապոյտ չըրջազգեստն որ մէջքէն մինչ բարեձեւ պնտեղներն կ'իջնէ բազմախորշ ալեծուփ : Անտարակոյս նա ինքն է . եկէք որ իմանա՞ք թէ բարի , առաքինի և տնաչէն ազջիկ է :

Երէցն , ուշադիր աչօք քննելով նստող օրիորդն , ըսաւ ի պատասխանի .

Թէ հրապուրած լինի մեր երիտասարդն՝ ինձ չեն զարմանք . զի ամէնէն աւելի ճաշակաղէտ մարդոյն աշաց առջեւ կարող է տակալ փորձոյ : Երանի այնմ որում մայր բնութիւն տուաւ մի կազմ բարեձեւ . զի դեղեցիկ կերպարանն ամենուրեք կը յանձնարարէ զայն , և ոչ մի տեղ օտարական է նա : Անցնիւր որ կը մերձենայ նմա հաճութեամբ և կ'ուզէ մնալ նորա ըով , եթէ արտաքին ձեւոյն կը կցորդէ նաև սրտահաճոյ հանգամանքներ : Ար հաւատաւեմ ձեզ թէ մեր երիտասարդն գտած է մի ազջիկ որ իւր կենաց ապագայ օրերուն վերայ սպայծառութիւն պիտի լինի նմա ամէն ժամանակաց մէջ : Մի այսքան կատարեալ մարմնոյ մէջ կը բնակի անշուշտ մի առողջ հոգի , և կորովի երիտասարդութիւնն կը խոստանայ մի ծերութիւն երջանիկ :





Եւ գեղազօրծն ըսաւ յայնժամ ծանրախոհ .

Երեւոյթն յանախ խարէական է . ես շեմ կարող վստահիլ արտաքին կերպարանաց . զի ստէպ փորձն առած եմ սա առածին ստուգութեան , թէ մինչեւ որ մի կայիճ ազ շապառեա մի նոր ծանօթի հեա , մի գիւրաւ վստահիք նմա . միայն ժամանակն պիտի ցուցնէ թէ յարմար էք իրարու ե թէ տեւական պիտի լինի ձեր բարեկամութիւն : Ուստի նախ մի քանի բարի մարդիկ խնդրեմք որոց ծանօթ լինի ազջիկն ե որք պատմեն զնմանէ :

Ինձ ես յարգելի է նախազգուշութիւն, պատասխանեց երէցն հետեւելով նմա . մեզ համար ազջիկ խնդրել շեմք եկած , այլ ուրիշի համար . ուստի ե փափուկ է այս գործ ե ծանրալիս :

Եւ գնացին ընդ առաջ բարի դատաւորին , որ նոյն պահուն , իւր գործոց ազազաւ , գէպ յիւրեանց կողմն կուգայր այսրէն :

Եւ իսկոյն խօսեցաւ ժողովրդապետն առ նա զգուշութեամբ .

Ըսէք . սառ մերձակայ պարտիզին մէջ օրիորդ մի տեսանք որ խնձորենուոյն տակ նստած է ե մանկական հանդերձներ կը պատրաստէ արդէն հազնուած բամպակեայ հանդերձէ մի որ հաւանականարար նուէր տրուած է իւրեան : Իւր գէմքն հանելի երեւցաւ մեզ . պարկեշտ ազջիկ մի կը թուի . ըսէք մեզ ինչ որ գիտէք իւր վերայ . զովելի գիտմամբ կը հարցնեմք :

Գատաւորն անդէն մտաւ ի պարտէզ գիտելոյ համար , ե ըսաւ սպա .

Արդէն ծանօթ է ձեզ . որովհետեւ երբ կը պատմէի ձեզ ազնուական դործն մի ազջկան որ յարձակոյին սուրն խրած և պաշտպանած էր զինքն և իրեններն , սորա համար կը խօսէի : Դուք իսկ կը տեսնէք թէ կարող էր մի այնպիսի դործոյ . ուժեղ և կորովի ծնած է , բայց միանդամայն եւ այնքան բարի որքան զօրաւոր : Իւր մի ծերունի ազգականն խնամեց նա մինչեւ յետին օրն , ուր իւր փոքրիկ քաղաքին թշուառ կացութեան և իւր ստացուածոց սպառնացող վտանգին վերայ իւր խորին միշտն ի դերեզման իջոյց զինքն : Անարատնջ համբերութեամբ տարաւ նաև այն ցաւոց զոր պատճառեց նմա իւր խօսեցելոյն մահն , մի ազնուասիրտ երխտասարգ որ , ազատութեան վերայ մարտնչելոյ վսեմ գաղափարին առաջին եռանդեան մէջ , նոյն իսկ ի Նարիզ գնաց և ընդ հուպ ստակալի մահուամբ մեռաւ . զի անդ ևս , որպէս իւր երկրին մէջ , թշնամի եղաւ բանութեան և նենգանաց :

Այսպէս խօսեցաւ դատաւորն : Արկու բարեկամք շնորհակալ եղան և կը պատրաստուէին մեկնելի : Հոգևորականն ոսկեղէն գրամ մի հանեց (իւր քրակին արծաթեայ գրամն արդէն առատաարքութեամբ բաժնած էր մի քանի ժամ յառաջ , երբ գազթականաց տխուր ամբօխին անցնիլն տեսած էր) , և մատոց զայն առ դատաւորն և ըսաւ . Բաշխէ՛ այս լլումայն կարօտելոց , և Տէր անեցնէ այս՝ նուէրն :

Բայց մերժեց այրն և ըսաւ . Բաւական գրամ ,

հանդերձ և այլ իրեր փրկեցինք , և կը յուսամ թէ , դեռ ամէնն շապառած , կը դառնամք ի մեր տուն :

Պատասխան տուաւ երէցն , նորա ձեռին մէջ սեղմելով դրամն .

Ո՛չ որ , այսպիսի աւուրց մէջ , պարտի դանդաղիլ ի տալ , և ոչ որ մերժել ընդունիլ ինչ որ կը նուիրէ գութ : Ոչ որ գիտէ թէ որչափ ատեն արտի պահէ դայն ինչ որոյ խաղաղ ստացիչն է , և ոչ որ թէ տակաւին քանի ժամանակ պիտի թափառի օտար աշխարհաց մէջ աստանդական , զուրկ արտէն և պարտիզէն որք սնունդ կուտային իւրեան :

Ե՛հ , ըսաւ դեղագործն շփոթեալ , եթէ դրպանիս մէջ դրամ գտնուէր , շատ թէ քիչ , անշուշտ պիտի տայի ձեզ . վասն զի ձերիններէն շատերն անտարակոյս պէտք ունին դրամոյ . սակայն և այնպէս շեմ թողուր զձեզ երթալ անպարզ և , որպէս զի գէթ յօժարութիւնս իմանայք , որչափ գործն ստորին լինի փափաքանացս քով :

Այսպէս խօսեցաւ , և լարերէն քարշելով դուրս հանեց մի սեղնագործ կաշեայ քսակ ուր կը պահէր իւր ծխախոտն , բացաւ շնորհալից կերպով և ընծայեց ինչ որ կը գտնուէր անդ , — մի քանի ծխախոզոցու :

Աննչան բան է նուէրն , յարեց : Բայց դատաւորն ըսաւ . Ղաւ ծխախոտն ուղեւորն հաճութեամբ կ'ընդունի միշտ : Եւ յայնժամ դեղագործն իւր ծխախոտոյն գովեստն ըրաւ :

Բայց երէցն ձգեց նորա բազուկէն , և երկոքին բաժնուեցան դատաւորէն :

Ո՞ն փութանք , ըսաւ այրն հանճարեղ , արդ մեզ կ'սպասէ երիտասարդն անձկալից . որչափ հընար է շոյտ թո՛ղ լսէ աւետիան :

Եւ ճեպեցին և հասան : Երիտասարդն թմբիներուն տակ կեցած էր կառքին կռթնած , ձիերն ռանատրոփ կը քրքրէին մուկգին գալարաւէտ հողն . կը զսպէր զայնս սանձահար , և ինքն , խոհանաց մէջ խորասոց , անթարթ կը հայէր իւր առջեւ , և ի սկզբան շտեսաւ իւր բարեկամներն , մինչեւ նոքա գալով , կոչեցին զինքն և ուրախութեան նշաններ տուին նմա : Դեղազորձն արդէն հեռուէն սկսած էր խօսել . սակայն մերձեցան , և երէցն Հերմանի ձեռքն բռնեց , և , ընդհատելով իւր ընկերոջ խօսքն , ըսաւ .

Երանի քեզ , ո՞վ երիտասարդ , ուղղատես աչքդ , անմիջեւ սիրտդ շաւաղոյն ընտրութիւնն ըրել են . երանի քեզ և երիտասարդ տիտղ կենակցին . արժանի է յա քո ձեռին . եկ ուրեմն և դարձուր կառքն . թո՛ղ զլորէ զմեզ արագաթոխչ գէս ի գիւղըն , որպէս զի ի հարսնութիւն խնդրեմք բարի աղջիկն ու շուտով տանիմք զայն ի տուն :

Սակայն երիտասարդն անշարժ կը մնայր , և առանց բերկրութեան նշաններու կը լսէր բանբերին խօսքերն , որք երկնային էին և մխիթարիչ : Խորին հառաչ մի արձակեց և ըսաւ . ճեպընթաց եկանք այսր , բայց զուցէ ամօթահար և յամբաքայլ պիտի գառնամք ի տուն : Յորմէ հետէ կ'սպասեմ աստ ,

գրաւած են զիս հոգ , տարակոյս , կասկած և ամէն ինչ որ կարէ տանջել մի սիրտ սիրահար : Քանզի մեք հարուստ եմք , և նա աղքատ և նժգեհ , բաւական է մեզ դալ որպէս զի աղջիկն ուզէ մեզ հետեւիլ : Աղքատութիւնն իսկ , երբ տարապարտ է , հոյարտութիւն կը ներշնչէ : Սակաւապէտ և գործօն կ'երեւի այդ օրիորդ . ուստի և իւրն է աշխարհ : Այլ կը կարծէք թէ մի կին , որ այդքանի գեղեցկութիւն ունի և այնպիսի բարք , զարգացած լինի առանց հրապուրելոյ մի երիտասարդ : Այլ կարծէք թէ նա փակած է ցարդ իւր սիրտն սիրային գգացմանց դէմ : Ո՛հ , մի տանիք զմեզ արագափոյթ դէպ ի գիւղն . գուցէ ծանր ծանր ուղղեմք ապա ձիերն դէպ ի տուն յամօթ և ի նախատինս մեր : Այլ փախնամ , գուցէ մի երիտասարդ կայ ուրեք որ կը տիրէ այդ սրտին , գուցէ այդ պարկեշտ ձեռնն սեղմած է նորայն և հաւատարմութիւն խոստացած այն բարեբաստ մահկանացուն : Ո՛հ , այն ատեն կ'երեւակայեմ զիս նորա առջեւ , իմ առաջարկութեամբս , ամօթով ծածկուած :

Նրէցն արդէն կը բանայր իւր բերանն ի քաջալերել զնա , երբ ընկերն , իւր խօսասէր բնաւորութեամբ , մէջ անկաւ և խլեց նորա խօսքն .

Ստուգիւ , եթէ հին ժամանակներն լինէին , ուր ամէն գործ իւր յատուկ եղանակներն ունէր , այսպիսի դժուարութեանց մէջ շարժի անկնէինք : Երբ ծնողք իւրեանց որդւոյն համար մի աղջիկ ընտրէին առաջին գործն էր կոչել մտերմօրէն մի բարեկամ .

յետոյ կը յղէին դնա իրրեւ խնդրակ ընտրեալ օրի-
որդին ծնողաց : Սա հանդիսական զղեւաններ հա-
զած , թերեւս մի կիւրակէ օր , յետ ճաշոյն , կ'եր-
թայր այցել պատուարժան քաղաքացին . նախ և ա-
ռաջ բարեկամօրէն կը մտնէր նորա հետ մի ընդ-
հանուր խօսակցութեան մէջ , ճարտարօրէն ուղղե-
լով եւ դարձնելով զայն ըստ իւր մտաց : Յետ
պատիպատ մանուածոյ երկայն խօսքերու վերջապէս
զովեստիւք կը խօսէր նաև աղջկան վերայ , գո-
վեստիւք նաև այն մարդոյն և տան վերայ որոյ
կողմանէ հրեշտակ գնացած էր : Բանխմաց մարդիկ
կը հասկանային նպատակն . ճարտարամիտ հրեշտա-
կըն այլ կ'ըմբռնէր շուտով արամազ բութիւններն և
կարէր աւելի բացորոշ կերպով իւր միտքն յայտնել :
Եթէ առաջարկն մերժուէր , մարդ երեան ի վեր
ընդունած շէր լինէր մի ցաւայի մերժում . իսկ ե-
թէ յաջողէր , այն ատեն խնդրակն ամէն ըն-
տանեկան հանդիսից մէջ առաջին ակոյին կը գրա-
ւէր յաւէտ , զի ամուլքն իւրեանց բովանդակ կեան-
քին մէջ կը յիշէին թէ նորա ճարտար ձեռնն հիւ-
սեց իւրեանց միութեան առաջին հանդոյցն : Հիմաց
այս ամէնն , ուրիշ բարի սովորութեանց հետ , հը-
նութեանց կարգ գրուած է և ի բաց թողուած .
անցնիւր որ ինքն անձամբ կ'ելնէ աղջիկ բնտուել .
ուրեմն անձամբ իսկ թող ընդունի մերժումն , սի-
րուն պարզեւ որ գուցէ պատրաստուած է իւրեան
և թող ամօթա՛հար մնաց աղջկան առջեւ :

Թող լինի ինչ որ կ'ուզէ , պատասխանեց երի-
տասարդն , որ հացիւ լսած էր բոլոր այս խօսքերն

և որ լսին վճռած էր իւր մտքին մէջ . Եւ կ'երթամ անձամբ , և կուզեմ անձամբ լսել իմ բախտս օրիորդին շրթներէն , որոյ վերայ ծայրագոյն վրատահութիւն ունիմ , որպիսի ոչ որ ունեցած է մի կնոջ վերայ : Ինչ որ պիտի բռնա , պիտի լինի բարի , և բանաւոր . գիտեմ զայս : Եթէ նոյն իսկ վերջին անգամի համար լինի ինձ տեսնել զայն , կ'ուզեմ զամ մի ևս պատահիլ այն սեաւ աշաց պայծառ ու բաց ակնարկին . եթէ չպիտի արուի ինձ երբեք պնդել զայն սրտիս վերայ , կ'ուզեմ զամ մի ևս տեսնել այն ծոցն և ուսերն որոց այնքան բուռն կը տենչայ բազուկս փարփիլ , տեսնել այն բերանն , որոյ մի միակ համբոյրն և այտն կարեն զիս երջանկացնել առ յաւէտ , իսկ ոչն՝ բառնալ յինէն յաւէտ զերջանկութիւն : Բաց միայնակ թողէք զիս . մի սպասէք ինձ . զարձէք հօրս ու մօրս քով , որպէս զի իմանան թէ իւրեանց օրդին չէ սխալած , և թէ արժանաւոր է օրիորդն : Այո՛ , թողէք զիս միայնակ : Բլրոյն վերայէն անցնող շաղէն զէպի տանձենին երթալով և անտի մեր այգեստանն ի վայր իջնելով համառօտակի կարեմ զառնալ ի տուն : Ահ , իցիւ բերէի ինձ հետ իմ սիրելին խնդալից և արագաքայլ : Պուէ մենիկ պիտի տահիմ այդ շաղէն զէպի տուն և այլ ևս չպիտի լինի ինձ ուրախ սրտով զայն կտիսել :

Այսպէս խօսեցաւ և մատոյց երասանակներն երիցուն , որ առաւ զայնս ի ձեռն , զսպելով փրբփրեբախ երիվարներն , արագօտն ոտտեաւ կառքին մէջ և կառավարին տեղն զբաւեց :

Բայց կը վարանձիս դու , գրացիդ զգուշաւոր ,
և կ'ըսես : Յօժարակամ կը հաւատամ քեզ հոգի ,
միաք և սիրա , բայց մարմին և անդամք յապահովի
չեն , երբ հոգեւոր աջն կը տիրէ աշխարհային
սանձուց : Իսկ դու կը ժպտիս , երէցդ խոհական ,
և կ'ըսես : Նստեցէք , և հաւատացէք յիս անկաս-
կած հոգի և մարմին միանդամայն : Ի վազուց ար-
դէն ճարտար է այս ձեռնն երասանակ գործածե-
լոյ , և վարժ է այս աչք արուեստաւոր շրջաններ
ընելոյ . զի ամէն օր , Ազրազուրկի մէջ , ուր կ'ըն-
կերէի երիտասարդ պարոնին , մեր կառքն , զոր ևս
իսկ կը վարէի , դուրս կ'երնէր դռնէն զգրդամայն ,
կը կարէր կ'անցնէր փոշելոյ ուղիներն , կը գլորէր
կ'երթայր մինչ ի հեռաւոր մարդերն ու թմբինե-
րն , անցնելով ժողովրդեան ամբոխին մէջէն , որ
օրն ի բուն պտոյտներով կ'անցնէ իւր ժամանակն :

Ախով շափ յապահովեալ , գրացին ելաւ նստաւ
կառքին մէջ , նախազգոյշ գիրքովն մի մարդոյ որ
կը պատրաստուի խոհեմ ոտախն մի ընել : Եւ սան-
ձակոտոր՝ երթվարք թռան օդաւաց , ախոռոյն ցան-
կացող . իւրեանց հզօր ոտից տակ կ'երնէր փոշին
ամպածեւ : Դեռ երկար ատեն մնաց երիտասարդն ,
և տեսաւ փոշին ամբառնալ այերց մէջ , տեսաւ
փոշին փարատել , և ինքն դեռ կը մնայր անշարժ
և անզգայ :

67430

93394

ԵՐԱՅՕ

ԳՈՐԾԻՆ



Բայէս ուղեւորն ,
որ դեռ՝ արեւն
ի մայր շմտած՝ դամ մի եւս յառեց աչերն այդ նա-
նանչապեղ աստղի վերայ որ սուղեցաւ արագ , կը
կարծէ տեսնել նորա պատկերի օրօրիչն իւր աչաց
առջեւ նսեմաստուեր պուրակին մէջ և ի կող
ժայրին . յո՛ւ և տանի իւր հայեցուածներն , զնա կը
տեսնէ իսկոյն որ կը նստադայթէ և կը նօճի եր-
փնապեղ . աշտպէս Հերմանայ առջեւէն կ'անցնէր
թեթեւաքայլ օրիորդին պատկերն ու կը թուէր թէ
կերթայր ցրենադաշտին նուրբ շաւղէն : Բայց ա-

հա սխտօսեցաւ զարմանալի տեսիլէն և յամբարայլ
զարձաւ ի գիւղն և զարմացաւ վերստին , զի գէտ
ինքն կուգայր գեղանի օրիորդին վեհ կերպարանն :
Ուշի ուշով դիտեց զայն . մի առ աչօք երեւոյթ
չէր , մի պատկեր խաբեպատիր . նա ինքն էր :
Ճարմանդ ներէն բռնած ունէր երկու ձեռքն մի մի
թակոցկ անհաւասար մեծութեամբ և փութանակի
կ'երթայր գէտ յաղբիւրն : Նորա գիմաց գնաց իս-
կոյն խնդաղին , և , ողևորեալ նորա տեսքով ,
մինչ նա իսկ արմացած մնացած էր , խօսեցաւ առ
նա այսպէս .

Բարեսիրտ օրիորդ , զարձեալ կը գտնեմ զքեզ ,
որպէս քիչ յառաջ , զբազուած այլոց ձեռնառու լի-
նեւոյ և սխտօսելոյ զմարդիկ : Ըսէ ինձ , էր մինա-
ւոր կուգաս յայս աղբիւր հեռաւոր , մինչ այլք կը
չատանան գիւղին ջրով : Ստոյգ է թէ այս աղբիւ-
րի ջուրն ունի մի մասնաւոր զօրութիւն և մարդ
հանութեամբ կ'ըմպէ անտի : Անտարակոյս կ'ուզես
տանիլ այն հիւանդ կնոջ զոր փրկեցիր այնքան
անձնութեամբ :

Բարի օրիորդն բարեկամական ողջոյն մի ընծա-
յեց իսկոյն երխատասարդին , և ըսաւ .

Այն յողնութիւն՝ զոր կրեցի մինչեւ հաս զայլոյ
համար՝ փարձատրուած է արդէն , զի ահա կը պա-
տահիմ այն ազնուատիրաւ անձին որ լցոյց զմեզ
պարգեւօք . զի երախտաւորին տեսքն այնքան ու-
րախութիւն կուտայ որչափ երախտիքն : Ակէք և
անձամբ իսկ տեսէք զայնս որք ձեր առատասարր-
տութիւնն վայելեցին , և ընդունեցէք բոլոր սխտօ-

եալներուն հանդարտ շնորհակալիքն : Քայց որպէս
զի իմանայք իսկոյն թէ ինչու համար մինչև այս
վճիտ ու անապառ ազգիւրն եկած եմ ջուր առնուլ ,
ահա կ'ըսեմ ձեզ պատճառն : անհեռատես մարդիկ
զիւզին բոլոր ջրերն պրտորել են , ձի և եղն ան-
ցրնելով այն աւազանին մէջէն որ ջուր կը մատա-
կարարէ բնակչաց , և ձորձ ու աման լուարով աղ-
տտակել են ամէն ջրարբք և ապականել ամէն ջրհոր-
զի անցնիւր որ յինքն միայն կը խորհի և , մերձա-
գոյն կարօտութիւնն արագ գոհացնելոյ ատեն ,
չմտածեր բնաւ հետեւեալ աւուր պիտոյից վերայ :

Այսպէս խօսելով իջաւ նա ընկերակցին հետ
լայն սառիճաններէն ի վայր , և նստան երկոքին
ազբեր որովան վերայ : Մուկցաւ աղջիկն ջուր առ-
նուլ , և երիտասարդն առաւ միւս թակոցին ու ծը-
ռեցաւ նոյնպէս : Եւ անդ ցոլացեալ տեսան իւր-
եանց պատկերն երկնից կապոյտին վերայ երերա-
ծութի , և գլխով նշանացի խօսեցան միմեանց , և
սիրայիր ողջունեցին զիրեար հայելոցն մէջ :

Տուր ինձ ըմպել , ըսաւ անդէն երիտասարդն
պայծառաղէմ , և աղջիկն առ նա մատոյց թակոցին :
Եւ նստած կը մնային անդ երկոքեան , անմեղ վըս-
տահալեալ , անօթոց վերայ կրթնած : Սակայն
աղջիկն ըսաւ իւր բարեկամին .


Ասէ , ինչպէս եղաւ որ հոս գտնուեցար : և այս
առանց կատրի և ձիերու , հեռի այն տեղէն ուր
առաջին անգամ տեսայ զքեզ . ինչո՞ւ եկար հոս :

Հերման խոհալից գետին կը նայէր . յետոյ հան-
դարաւ հայեաց մի վերցուց գէտի Դորոթէա և

նայեցաւ սիրազարար նորա աշաց մէջ , և զգաց թէ իւր սիրան կը խաղաղէր և կ'ստոյգուէր : Սակայն խօսիլ նմա սիրոյ վերայ՝ անկարելի պիտի լինէր . սէր չէր նշանակեր նորա աշաց հայեցումքն , այլ անազօտ խելացութիւն , և կը սրատուիրէր մի մըտացի պատասխան : Աւ իսկոյն ամփոփեց ինքզինքն և ըսաւ ազջկան վատահումեամբ .

Աէ ինձ , ազջիկ , և պիտի պատասխանեմ քո հարցման : Քեզ համար եկած եմ այսր և էր զայն ծածկեմ : Կ'ապրիմ երջանիկ սիրելի ծնողացս հետ որոց կ'օգնեմ ես , իրբեւ նոցա մէկ հստիկ որդին , կառավարելոյ մեր տունն ու մեր ստացումքներն , և մեր գործեր բազմազան են : Ինձ յանձն է բոլոր դաշտաց խնամքն . հայրս թիր մատակարարն է տան , և գործունեաց մայրս տան կառավարութեան կենդանատու հոգին է : Անշուշտ դու եւս փորձն առած պիտի լինիս թէ՛ որքան մերթ թերեւամտութեամբ և մերթ անհաւատարմութեամբ ծառաներն կը նեղացնեն տանտիկինն որ կ'ստիպուի շարունակ փոխել զայնա , այսինքն թերութիւններ փոխանակել ուրիշ թերութեանց հետ : Ո՞վազուց արդէն կը փոփաքէր մայրս ունենալ ազջիկ մի տան մէջ , որ աչ միայն ձեռքով այլ և սրտով օգնէ նմա փոխանակ իւր սիրելի ազջկան զոր , աւանդ , շատ շուտ կորսնցուց : Արդ , երբ այսօր սայլին քով տեսայ զքեզ փոյթեաանդն զիւրաշարժ , տեսայ բազկիդ ոյժն ու անդամներուդ լիակատար սուղջութիւնն , երբ լսեցի խելանի խօսքերդ , տալեցայ , և իսկոյն փութացի տուն ծնողացս և բարեկամաց





գովել օտարուհին ըստ իւր արժանեաց : Արդ կու-
գամ ըսել քեզ ինչ որ կը բաղձան նոքա , որպէս և
ես . . . : Ներէ այս թոթով խօսուածքիս :

Աներկիրդ աւարտեցէք ձեր խօսքն , ըսաւ օրի-
որդն անդէն . ոչ միայն չէք վշտացնէր զիս , այլ
և կը տեսնէք որ երախտապարտ կ'ընէք զիս : Ը-
սէք բացէ ի բաց . բանն զիս չկարէ վախցնել :
Նուզէիք վարձել զիս իբր սպասուհի ձեր հօր և
մօր համար որպէս զի պահպանեմ բարեկարգու-
թիւնն որ կը տիրէ ձեր տան մէջ , և կը կարծէք
զանեւ իմ վերայ մի պիտանի աղջիկ , վարժ աշխա-
տութեան և ոչ խստաբարոյ : Ձեր առաջարկն հա-
մառօտ էր . համառօտ պիտի լինի և իմ պատաս-
խան . այո՛ , կուգամ ձեր հետ , և կը կարծեմ
այսպէս հնազանդիւ հակատագրիս հրաւերին : Հոս
աւարտած է իմ գործ . աղաքերն իրեններուն դար-
ձուցի . ուրախ են նոքա ազատման համար , ար-
դէն ի նոցանէ շատերն միացած են , և մնացեալք
չուտով կուգան կը գանեն զիրենք : Ամէնքն վրա-
տահ են թէ քիչ օրէն կը դառնան ի հայրենիս .
այսպէս պանդուխտն կը ջանայ միշտ ինքզինք խա-
բել յոյսերով . բայց ես չեմ օրօրի թեթեւ յոյ-
սերով այս բաղմատխուր օրերուն մէջ որք դեռ
ուրիշ տխուր օրեր մեզ կը գուժեն . քակուեցան
աշխարհի կապերն , ո՞վ պիտի կապէ վերադին , և-
թէ ոչ ծայրացեղ շուտութիւնն որ առաջի կայ
մեզ : Աթէ կարեմ սնանիւ ծառայելով ձեր յար-
գելի հօր տան մէջ և ձեր ազնիւ մօր աչաց տակ ,
յանձն կ'առնու՞մ յօժարակամ , զի մի թախախիկ

աղիկան համբաւն յողորդ է միշտ : Այ՛, տանիմ
այս թակոյկներն բարեկամաց , և բարի մարդոց
օրհնութիւնն առնում , և այնուհետեւ անմիջապէս
կուգամ ձեր հետ : Եկէք , պէտք է որ տեսնէք
զիրենք և զիս իւրեանց ձեռքէն ընդունիք :

Յնձագին լսեց երիտասարդն օրիորդին յօժա-
րափոյթ որոշումն , երկմտելով թէ արդեօք հարկ
էր թէ ոչ խոստովանիլ ճշմարտութիւնն . բայց
լաւազոյն թուեցաւ ինքեան սլաարանաց մէջ թո-
ղուլ զայն , տանիլ ի տուն և անդ միայն խնդրել
նորա սէրն . մանաւանդ երբ , բարէ , մի ոսկեղէն
մատանի նշմարեց նորա մատն : Ուստի և թողուց
որ խօսի նա , և ինքն ուշադիր մտիկ կ'ընէր նորա
խօսքերն :

Մեկնիմք , ըսաւ օրիորդն շարունակելով . ազ-
բիւրին քով երկար տեսն յամոլ աղջիկներն կը կըշ-
տամբուին . և սակայն այնքան սիրուն է խօսա-
ցիլ մի ցաշտուն աղի քով :

Նւ ահա յտան ելան եւ միանդամ եւս հայեցան
յետս յաղբիւրն , եւ մի քաղցր փափաք գրաւեց
զինքեանս :

Լսին , առաւ Գործիէա երկու թակոյկներն ,
ձարմանդներէն բռնելով , վեր ելաւ աստիճաննե-
րէն , և Հերման կը հետեւէր սիրականին : Խնդրեց
ինքն առնուլ մին թակոյկներէն , բաժնեղջ համար
բեռնն :

Թողէք զայն , ըսաւ Գործիէա . զիւրազոյն ևս
կը կրուի հաւասարակշիւ բեռնն , և տէրն , որ պի-
տի հրամայէ ինձ առյապա , պէտք չէ որ ինձ ըս-

պատաստօրէ : Ա՛յնքան լրջօրէն մի նայիք իմ վերայ , իբրու թէ կարեկցութեան արժանի լինէր իմ վիճակ : Պէտք է որ կինն կանուխ ուսնի ծառայել , որպէս է իւր կոչումն . վասն զի ծառայելով միայն կը հասնի վերջապէս և կը լինի արժանի այն իշխանութեան որ տան մէջ իւր բաժինն է : Կանուխէն կը ծառայէ քոյրն եղբօր , կը ծառայէ ծնողաց , և իւր կեանքն ուրիշ բան չէ , բայց միայն մի յարատեւ երթեւեկ տանիլ , բերել , պատրաստել , կազմել այլոց համար : Երանի իրեն , եթէ կը սովորի իւր կենաց՝ մինչեւ ոչ մի համբայ գտնել կարի գլժուարուտ , շորոշել գիշերոյ ժամերն օրուան ժամերէն , ոչ մի աշխատանք համարել կարի մանրակրկիտ և ոչ մի ասեղ կարի նրբածայր , մտնալ բոլորովին իւր անձն ու կարենալ սպրիլ յայրս : Վասն զի ստուգիւ , երբ մայր լինի , պէտք պիտի ունենայ բոլոր այս սուարինութեանց , երբ սանդիաց մանուկն արթնցնէ հիւանդ մայրն ու սնունդ խընդրէ ակարացեալ կնոջմէն և հոգք յաւելնան ցաւոց վերայ : Քսան այր մարդ , ի միասին գալով , չեն կարող տանիլ այս յոյնութեանց . ինքեանք կոչուած չեն այս բանին , բայց պէտք է որ հասկանան և երախտագէտ լինին :

Այսպէս կը խօսէր , և , իւր լռին ընկերակցին հետ , պարտիզէն անցնելով , եկած էր մինչ ի կալ շտեմարանին ուր կը հանդէժր մատաղածինն , զոր ուրախ գուարթ թողած էր իւր գտերոց հետ , այն ազջկանց զորս փրկած էր , անմեղութեան պատկերք գեղեցիկ :

Ներս մտան , և նոյն ժամայն միւս կողմէն մըտաւ ներս դատաւորն , մէն մի ձեռքով բռնած մի մանուկ : Աղբա կորսուել էին ի ցաւ իւրեանց մօր , բայց ծերունին դաւել էր ահա զայնս խռան մէջ : Ուրախութեամբ վազեցին ողջունել իւրեանց սիրելի մայրն , և խնդացին տեսնելով նորեկ եղբայրիկն , անծանօթ ընկերն . յետոյ վազեցին Գործէպի վերայ և ողջունեցին զայն խանդաղատանօք , հաց և միրգ խնդրելով և , ամէն բանէ յառաջ , շուր : Գործէպա տուաւ նոցա ըմպել : Խմեցին մանուկներն , խմեց տղարերն ու իւր ազգիւնք , և խմեց նաև դատաւորն : Ամէնքն արբուցին իւրեանց ծարաւն , զուարթացան ու գովեցին ջրոյն ազնուութիւնն . մի քիչ թթու համ ունէր , և կազգուրիչ ու առողջարար ըմպելի մ'էր մարդկան :

Բայց օրիորդն լուրջ գէմք մի առաւ և ըսաւ .

Բարեկամք , վերջին անգամն է որ թակոցկն ձեր բերնին մօտեցուցի , ձեր շրթունքն ջրով թրջեցի . երբ սպազային մէջ ասիտ օր մի արբումն զձեզ զովայնէ , երբ՝ շուքին տակ նստած՝ հանգիստ ու վճիտ աղբիւրներու զովութիւնն վայելէք , յիշեցէք զիս յայնժամ և իմ բարեկամական ծառայութիւններս , զոր ի սիրոյ մանաւանդ քան յազգականութենէ մըտած մատուցի ձեզ : Բոլոր սպազայ կենացս մէջ պիտի յիշեմ ինչ բարութիւն որ ցուցիք ինձ : Յակամայս կը թողում զձեզ արդարև . բայց այս ժամուս իւրաքանչիւր ոք աւելի բեռ մի է ուրիշին քան մխիթարութիւն , և եթէ արգիլուի մեզ դատնալ ի հայրենիս , ամէնքս այլ պիտի ստիպուիմք վերջա-

պէս ցրուիլ օտար երկիրներ : Տեսէք , ահա ապիկ է այն երիտասարդ որում կը պարտիմք պարզեւներն , մանկան խանձարուքն և պարէններն որք յերկնից եկած թուեցան մեզ : Սա եկած է առաջարկել ինձ յիւր տուն տանիլ զիս , որպէս զի ծառայեմ անդ իւր մեծատուն ու ազնուասիրտ ծնողաց . և ես չեմ մերժեր . զի ազգիկն ամենուրեք կը ծառայէ , և իւրեան համար մի բեռ պիտի լինէր հանդչիլ տան մէջ և ծառայուիլ ուրիշներէն : Ուստի և յօժարութեամբ կը հետեւիմ իւր քայլից : մի խոհական երիտասարդ կը թուի լինել , և անշուշտ իւր ծնողքն այլ այնպէս են , ինչպէս կը վաշելէ լինել հարուստներուն : Ուրեմն , մնայք բարեաւ , սիրելի բարեկամուհիս , և ուրախացիք կենսաւէս կաթնիկեր մանկամբն որ ձեր երեսն ի վեր կը հայի արդէն քաջաուող : Երբ այս գոյնզգոյն լաթերով սեղմէք զայն ձեր կրծոց վրայ , ո՛հ , յիշեցէք բարեսիրտ երիտասարդն որ նուիրեց մեզ զայնս , և որ յետ այսորիկ եւս զիս , որ ձերն եմ , պիտի սնուցանէ և զգեցնէ : Եւ դուք , այր պատուական , ընդունեցէք շնորհակալութիւններս , փոխանակ զի բազմաթիւ առիթներու մէջ հայր եղաք ինձ :

Եւ ծուր գրաւ յայնժամ գորովասիրտ մատաղածնին առ ընթեր , որ կ'արտասուէր , համարուրեց զնա և ընդունեց զայն օրհնութիւն զոր մրմընջեց նա գողգոջաձայն : Բայց դու , դատաւորդ պատուարժան , այնպէս խօսեցար առ Հերման .

Արդարեւ , ո՛վ բարեկամ , արժանի էք դասուիլ այն իմաստուն տանտեարց կարգն , որք պի-

տանի անձեր օժանդակ կ'առնուն իւրեանց տան
կառավարութեանն համար . զի շատ անգամ տե-
սած եմ թէ մարդիկ , եզ , մի որպէս և ոչխար
փոխանակելոյ կամ գնելոյ ատեն , ուշի ուշով կը
քննեն . բայց այն մարդն , որ եթէ նարտար և
բարի է՝ կը պահպանէ ամէն ինչ , իսկ եթէ ոչ՝ ա-
մէն ինչ կը վատնէ և կը կործանէ , այն մարդն
տուն կ'առնուն՝ բախտին կամ գիպուածին միայն
սպաւինելով , և թէպէտ գահափէժ ընտրութեան
վերայ կը զգջան , բայց կարի անագան : Սակայն
կերեւի թէ դուք գործէն կը հասկանայք , քանզի
տան մէջ ձեզ և ձեր ծնողաց սպասուորելոյ հա-
մար ընտրեցիք մի այնպիսի ազգիկ որ քաջայարմար
է : Լաւ վարուեցէք իւր հետ . զորչափ իւր վերայ
լինի ձեր տան կառավարութիւնն , դուք մի քոյր
պիտի գանէք ի նմա , և ձեր ծնողք՝ մի դուստր :

Նոյն պահուն եկան մատաղածնին մերձաւոր
ազգականներէն շատեր , բերելով բազում ինչ և
լուր տալով նմա թէ մի լաւագոյն բնակարան
պատրաստուած էր իւրեան համար : Ամէնքն իմա-
ցան Գորթիէայի որոշումն և բարեմազթուի իւն-
ներ ըրին Հերմանայ նշանական նայուածքով և
մասնաւոր գիտումներով : Քանզի միտեանց տկան-
ջքն ի վայր սա խօսքերն կը հծծէին արագ . եթէ
տէրն ամուսին գտանայ , ազգիան բախտն շինուած
է : Հերման Գորթիէայի ձեռքէն բռնեց և ըստ .
Մեկնիմք , որն կը տարածամի , և մեր քաղաքիկն
հետի է : Այն ատեն կանայք , այխուժիւ խօսելով ,
ողջագութեցին գորթիէա : Հերման քաղցեց զայն .

նա շատ բարեւներ յանձնարարեց բարեկամաց համար : Բայց տղայք , լալով աղաղակելով , փաթթուեցան նորա հանդերձներուն և չէին ուզեր թողուլ երկրորդ մայրիկն : Բայց կիներէն այս ու այն սաստելով ըսին .

Առեցէք , տղայք , քաղաք կ'երթայ որ բերէ ձեզ այն աղւոր շաքարներն զոր ձեր եզրայրն ապսպրեց , երբ արագիլն* , զայն բերելոյ ատեն , շաքարագործին առջեւէն կ'անցնէր . հիմայ պիտի դայ նորէն՝ գեղեցիկ սակեզօծ թղթերու մէջ ծրարուած շաքարներով :

Եւ այսպէս թողին զայն տղայք , և դժուարաւ դարձեալ Հերման կրցաւ խլել զնա նորանոր գրքկախառնումներէ ևւ թաշկինակաց հեռախօս շարժումներէ :

* Ի Գերմանիա , ժողովրդեան ինչ ինչ գասերուն մէջ , կը պատմեն տղայոց թէ արագիլն բերաւ նորածին մանկիկն :

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

ՄԵԼՊՈՄԵՆԷ

1875

1875

1875

Faint, illegible text at the bottom of the page, possibly bleed-through from the reverse side.

ՄԵԼՊՈՄԵՆԷ

ՀԵՐՄԸՆ ԵՒ ԳՈՐԾԹԸՆ



Ա. ԵՄ

Ե զնացին Երկրեան ի միասին արեւուն դէմ որ ի մայրն կը մանէր, և, մըրկադոյժ, կը ծածկուէր ամպերու մէջ, քողէն դուրս՝ մերթ այսր, մերթ անդր հրացայտ ականոցեօք սպառնազից նշոյլներ արձակելով դաշտաց վերայ :

Իցիւ, ըսաւ Հերման, շարագոյժ օդն շրերէր մեզ կարկուտ և տեղատարափ անձրեւ, զի ամէն ինչ մի գեղեցիկ հունձք կը խոստանայ :

Այս ուրախացան Երկրեան տեսներով երկայնա-

ծառայող արեւածաման ցորեանն որ, մինչ կ'անցնէին ար-
տին մէջէն, կը հասնէր գրեթէ իւրեանց գեղեցիկ
հասակաց բարձրութեան :

Եւ ըսաւ Օրիորդն առ բարեկամն որ կ'առաջ-
նորդէր իւր քայլից .

Ո՛վ բարեօրրա սգի, դուք՝ յորմէ ընդհուպ պիտի
ընդունիմ բարերաստ մի՞նակ մի, յարկ եւ խուց,
մինչ այնքան պանդուխտներ բացօթեաց կը մնան
մրրկին սպառնալեաց տակ, ըսէք ինձ նախ և ճանչ-
ցուցէք ինձ ձեր ծնողքն, որոց յօժար եմ բոլորով
սրտիւ ծառայել . զի երբ մարդ կը ճանչէ իւր
սէրն, յայնժամ գիւրազոյն է նմա հաճելի լինել
իւր տիրոջ . երբ գիտէ թէ ի՞նչ բաներ կարեւորա-
գոյն կը թուին նմա և ի՞նչ են այն իրեր որոց վերայ
իւր կամքն բացորոշ է : Աւտի ըսէք ինձ, ի՞նչպէս
հնար է ինձ շահիլ ձեր հօր և մօր սէրն :

Առ այս պատասխանեց ազնիւ հանձարեղ երի-
տասարդն .

Ո՛հ, սրչափ իրաւունք կուտամ քեզ, ո՛վ ընտիր,
պատուական ազջիկ, որ նախ և առաջ կ'ուզեա տե-
ղեկանալ ծնողացս բնաւորութեան : Առանց այդը
ի դուր պիտի ջանայի ըստ իւր հաճոյից ծառայել
իմ հօր, ստանձնելով անդոց և այգեստանին հողն
և առաւօտ ու երեկոյ խնամելով այնպէս իբրեւ թէ
իմա իսկ լինէին : Բայց մայրս դո՛հ ընել դժուարին
չէ եղած ինձ . նա գիտէ գնահատել անձնուէր աշ-
խատութիւնս . նայնպէս և դու ընտրելագոյն ազ-
ջիկն պիտի երեւիս իւրեան երբ խնամես տունն
իբրեւ թէ քոյդ լինէր . բայց հօրս մասին չէ այն-

պէս • զի սա կը սիրէ նաև ցոյցն : Ա՛յլ բարեսիրտ ազգիկ , զիս անսիրտ եւ անզգայ որ մի՛ համարիր , քանդի քեզ , օտարականիդ , կը մերկանամ հօրս տկար կողմերն : Այ՛ս , կ'երզնում , առաջին անգամն է որ մի այսպիսի խօսք կը խուսափի շրթներէս որք շեն վարժուած ունայն շաղփաղփանայ • բայց դու այնքան վստահութիւն կ'ազգես ինձ որ սիրտս կը բացուի քեզ անքող : Այս բարի հօր հաճելի են ինչ ինչ զարդեր կենաց մէջ , սիրոյ եւ մեծարանաց արտաքին նշաններ կը պահանջէ , և թերեւս պիտի հաճէր յուեզոյն սպասաւորէն որ գիտնար սակայն օգուտ քաղել իւր այս բնասորութենէն , մինչդեռ առանց այսը լաւագոյն ծառայն կարէր ատելի լինել իւր աշաց :

Առ այս խնդագին լսաւ Գորոթէս , միանգամայն կրկնելով թեթեւաշարժ իւր արագ քայլեր ընդ շաւղն որ կը մթնէր •

Կը յուսամ զերկոսին եւս գոհացնել • ձեր մօր բնասորութիւն նման է իմ խակ բնասորութեան , և ի տղայութենէ օտար շեն եղած ինձ վարմանց հաճելի եղանակներ : Երբեմն մեր դրացի Գաղիացիք մեծ յարգ կ'ընծայէին քաղաքաւարութեան • սովորական էր այն ազնուականին եւ քաղաքացւոյն , որպէս և շինականին , և ամէն մարդ զայն իւրայնոց կը յանձնարարէր : Նոյնպէս և առ մեզ , գերմանական երկիրներու մէջ , տղայք սովորութիւն ունէին ձեռքպագով եւ խոնարհութեամբ բարիւրյս մաղթել իւրեանց ծնողաց , և բոլոր օրն պարկեշտութեամբ ու քաղաքաւարութեամբ կ'անցնէին :

Ամէն ինչ որ ուսուցած են ի տղայութենէ կրթութիւնն ու սփորութիւնն , ամէն ինչ որ կարէ սիրաս ինձ տուն տալ , — կ'ուզեմ զայն նուիրել յարգելի ծերունւոյն : Բայց ս՛ով պիտի ըսէ ինձ թէ ինչպէս պէտք է որ վարութիւն ձեզ հետ որ միամտօր որդի էք և յապագային իմ մեծս պիտի լինիք :


Նրբ այսպէս կը խօսէր , ահա հասան տանձենւոյն տակ : Առսինն , ուռճայիր , կը ճառագայթէր յերկնից ի վայր . դիչեր եղած էր , եւ միտութիւնն՝ ծածկած արեգական յետին նշոյլն . իւրեանց առջեւ կը ծաւալէին , լայնատարած , դէմ առ դէմ , լոյսեր պայծառ իրրեւ զախ և ստուերք միմին գիչերոց : Հաճութեամբ լսեց Հերման այս բարեկամական հարցումն այն վեհափառ ծառոյն շուքին տակ , որ սիրելի էր իւրեան եւ որ այն , որ խակ վիպց եղած էր իւր արտասուացն առ սէր իւր վտարանդւոյն :

Նրբ կը նստէին դի հանդիմն վայրիկ մի , սիրափառ երխտասարդն , օրիորդին ձեռնն բռնելով , բսաւ . Թ՛ո՛ղ սիրտդ ըսէ քեզ զայն եւ հետեւէ նմա ազատօրէն յամենայնի :

Բայց շիշխեց աւելի ինչ ստել , թէպէտ այնքան նորաստաւոր էր ժամն . կ'երկնչէր թէ գուցէ ոչ մի ընդունի ի պատասխան , և , ս՛, իւր ձեռնն հոգաւ մատանւոյն զոր կը կրէր նա իւր մասն , — նշան շարագոյժ : Այսպէս կը նստէին միմեանց քով լո՛սին և անբարբառ :

Սակայն օրիորդն խղեց զառաջինն լուսիեան թեղն ու ըսաւ .





Քանի՛ք քաղցր է ինձ լուսնոյ հիանալի պայծա-
ռութիւնն . իւր փայլն հաւասար է տունջեան լու-
սոյն : Անդ , քաղաքին մէջ որոշ կը տեսնեմ տուներն
ու բակերն , պատուհան մի տանեաց տակ . ինձ կը
թուի թէ կարող եմ հաշուել ապակիներն :

Ինչ որ կը տեսնես , պատասխանեց երիտա-
սարդն ինքզինք զսպելով , մեր բնակարանն է՝ ուր
կը տանիմ գքեզ , և հոն այն պատուհանն տանեաց
տակ իմ խուցս է որ թերեւս քոյզ պիտի լինի , զի
տան մէջ փոփոխութիւններ պիտի ընեմք : Մեր են
այս գաշտեր . հունձք արդէն հասունցած են՝ անկ-
նեւոյ համար վաղիւ մանգաղին տակ . հոս շուքին
տակ պիտի հանդչիմք և մեր ճաշն առնումք : Բայց
այգեստանէն ու պարտիզէն անցնելով իջնեմք եր-
թամք ի տուն . փան պի , տնս , կը մերձի ահաւոր
մրրիկն փայլակներ արձակելով , որ եւ ընդ հուպ
պիտի կլնէ լիալուսինն սիրարցս :

Եւ յտն ելան , իջան և գնացին ի վեր ընդ ան-
դատանն հասկաթուռ ցորենոյն մէջէն , զուարճա-
նալով զիշերոյն պայծառութեամբ : Եւ երբ հա-
սան յայգեստանն , այն ատեն սկսան քայլել մթու-
թեան մէջ :

Եւ Հերման առաջնորդեց զԴորոթէա գէպ այն
բազմաթիւ անտաշ քարերն որք սարսիինային իբր
ստափճան կը ծառայէին :

Դորոթէա իջաւ յուշիկ , ձեռներն Հերմանոյ ու-
սոց վերայ դրած . լուսին , գողգոջարցս , կը հայէր
ի նսաս ի բարձանց՝ սարսիինային տերեւոց մէջէն ,
և ահա , մրրկայոյզ ամպերէ պաշարուած , թողուց

զոյգն ի խաւարի : Հերման , կորովին , ուշադիր կը պաշտպանէր օրիորդն որ կը կքէր իւր վերայ . բայց նա , անծանօթ ուզոյն և անհարթ աստիճանաց , գիտեցաւ . կրճեց իւր ոտնն , անկնելոյ վասնդին մէջ էր . իսկոյն ուշիմ երիտասարդն պարզեց բազուկն արագաշարժ և բռնեց սիրունին . իւր ուսոց վերայ անկաւ նա մեղմիկ . կուրծք կուրծքի և այս այտի հայեցան : Այսպէս կը մնայր Հերման անխոյրտ իրբեւ մարմարեայ արձան , սանձուած իւր կամաց անողոր հրամաններէն , և միայն ծանրութեան դէմ գնելով : Սիրելի բեռան տակ , մի հեշտայիր զգացմամբ կը լցուէր . կ'զգայր նորա սրտին ջերմութիւնն , խնկահոտ բուրումն նորա շնչոյն որ կը ծաւալէր շրթներուն վերայ եւ կը կրէր իրբեւ այր զգայուն սկայագեղ հասակն օրիորդին :

Գործիէս սակայն կը կեղծէր շղղալ ցաւն ու կ'ըսէր կատակելով .

Չարագուշակ է , կ'ըսեն խոհական մարդիկ , երբ տուն մտնելոյ վաւրկենին , ոչ ինչ հեռի սեմէն , կրճէ ոտնն : Յիրաւի սակայն լաւազոյն նշան մի կը բաղձայի . մի քիչ կանոց ասնումբ , որպէս զի ծնողքդ չսեղադրեն զքեզ թէ կաղ սպասուհի մի կը տանիս և շերեւիս նոցա մի անճարակ անասա :

Ո Ւ Ր Ա Ն Ի Ա

1870

1870



ՈՒՐԱՆԻԱ

Հ Ն Ի Ը Պ Ը Տ Կ Ե Ր



ուսայք, դուք որ նպաստամատոց էք սրտագին սեռն սիրոյ, դուք որ ցայս վայր առաջնորդեցիք ազնիւ երիտասարդին իւր ուղւոյն մէջ, պնդեցիք զօրիորդն իւր կրծոց վերայ յառաջ քան զհարսնախօսութիւն, ձեռն տուք ի գլուխ հանել սիրուն ամուլից միութիւնն և փարատեցէք արագ այն ամպեր որք նոցա երջանկութեան վերեւ կը տարածուին սպառնական. բայց ըսէք մեզ նախ թէ ինչ կ'անցնի այս պահուս հայրենի տան մէջ :

Մայրն , սրտատանջ անհանգիստ , արդէն եր-
րորդ անգամ մտաւ վերստին այն սենեկին մէջ ուր
արքն էին եւ յորմէ այն ինչ դուրս ելած էր . կը
խօսէր մօտալուտ մրրկին , լուսնոյն յեղակարծ խա-
ւարման , որդւոյն բացակայութեան եւ գիշերոյ վը-
տանդաց վերայ . կը մեղադրէր սաստկութեամբ
բարեկամներն որ առանց ազնկան խօսելոյ , առանց
խնդրելոյ զնա ի հարանութիւն , բաժնուել էին երի-
տասարդէն :

Մի ծանրացներ շարիքն , ըսաւ Հայրն նեղարտու-
թեամբ , վասն զի կը տեսնես որ մեք իսկ անհամբե-
րութեան մէջ եմք եւ իրաց վախճանին կ'սպասեմք :

Բայց դրացին , նստած , սկսաւ խօսիլ հանդար-
տութեամբ .

Այսպիսի անդռհական ժամու մէջ միշտ երախ-
տաղէտ մտք կը յիշեմ բարեյիշատակ հայրս , որ ,
երբ տղայ էի , խլեց սրտէս ամէն անհամբերութեան
արմատներն , այնպէս որ եւ ոչ մազ մի մնաց անդ , եւ
սոյրեցայ իսկոյն սնդասել լաւագոյն իսկ քան որ եւ է
իմաստուն մարդ :

Ըսէք մեզ , պատասխանեց երէցն , ինչ հնարք
գործածեց ծերունին սա այս :

Յօժարակամ կը պատմեմ ձեզ , ըսաւ դրացին ,
զի անցնիւք որ կարէ յուշի կապել եւ օգտիլ :

Երբ մամուկ էի , մի կիւրակէ որ պատահեցաւ
ինձ մեծ անհամբերութեան մէջ անկնիլ , անձկա-
նօք սպասելով այն կառքին որ զմեզ թմբեաց աղ-
բիւրն պիտի տանէր : Սակայն կառքն կը յապաղէր
զալ . նման արիսի , կը վաղէի այսք անդր , սան-

դուզներէն վեր վայր կ'երնէի կ'իջնէի , և պատու-
հանէն դէպի դուռ կը դիմէի . մատներուս մէջ
մարմաջ կ'զգայի , սեղաններն կը քերէի , սենեկին
չորսդին կը դառնայի ոտնատրոյի , և մերձ էի ար-
տասուել : Հանգարտաբարոյ մարդն այս ամէնն կը
տեսնէր . բայց վերջապէս երբ ծայրայեղ յիմարու-
թեան գնաց դործն , անխառով բռնեց ձեռքէս ,
դէպի պատուհանն տարաւ և սա նշանաւոր խօս-
քերն ինձ խօսեցաւ . Ար տեսնե՞ս մեր գիմաց կա-
հագործին կրպակն որ փակ է այսօր . վաղիւ կը
բացուի . քերիչ և սղոց միշտ կը շարժին անդ , և
առաւօտէն ցերեկոյ կ'անցնին ժամերն աշխատու-
թեամբ . բայց լաւ ուշ գիր սա բանին . — պիտի գայ
մի առաւօտ ուր վարպետն և իւր բոլոր գործակիցք
պիտի աշխատին քեզ դազազ մի շինելոյ և շոյա ու
արագ ի գլուխ հանելոյ համար . և պիտի փութան
հօս բերել տախտակամած տունն որ իւր մէջ կ'ըն-
դունի վերջապէս համբերողն ու անհամբերն , և
որոյ վերայ ընդհուպ պիտի ծանրանայ իւր կափա-
րիչն : Մտօք իսկոյն իրականացեալ տեսայ այս ա-
մէնն , տեսայ տախտակներն կցուած և սեւ գոյնն
պատրաստ . այնուհետև նստայ հանգարտ և համ-
բերութեամբ սպասեցի կառքին : Այն ատենէն ի
վեր , երբ այլք , անստոյգ սպասման մէջ , այսր ան-
դըր կը վազեն այլայլած , ևս ստիպուած եմ մտա-
ծել դազազին վերայ :

Ժմտազին ըսաւ երէցն . Մահուան սրտայոյզ տե-
սին շրնծայիւր իմաստնոյն իբրեւ ահաւոր ինչ և ոչ
բարեպաշտին՝ իբրեւ վերջին կէտ : Ձեռ կ'ընկրկէ

յետս ի կեանս և կ'ուսուցանէ նմա լաւ գործածել զայն , և զոս կը սրտասպնդէ շուտաուրիկեան մէջ՝ ապագայ երջանկութեան յուսով . երկոցուն համար այլ մահն ի կեանս կը փոխարկի : Աւրեմն հայրն իրաւունք շունէր մահուան մէջ զմահ միայն ցուցընել իւր զգայուն մանկան : Պէտք է որ պատանւոյն ցոյց արուի ազնուապէս հասունցած հասակին արժանիքն , և ծերունւոյն՝ երիտասարդութեան պատկերն , որպէս զի երկոցուն եւս հանելի լինի տեսնել այս յաւերժական շրջանակն և այսպէս կեանքն լրանայ կեանքի գործունէութեան մէջ :

Բայց ահա դուռն բացուեցաւ : Երեւեցան հիանալի ամուրքն , ու սքանչացան բարեկամք , սքանչացան գորովալից ծնողք ընդ կերպարան հարսին որ գուգական էր փեսային կերպարանաց . այն , կարի փոքր կ'երեւէր դուռն ընդունելոյ համար նոցա գեղատամիծ բարձր հասակքն՝ այն վայրկենին ուր սենեկին սեմն ի միասին կոխեցին :

Հերման ներկայացոյց զ'Նորոթէա իւր ծնողաց արագ արթեւ բանիւք .

Ահա՛ , ըսաւ , մի այնպիսի աղջիկ որպիսի կը փափաքիր ունենալ տան մէջ : Հայր սիրելի , ընդունեցէք զայն սիրով , արժանի է . և դուք , սիրելի մայր , այժմէն հարցէք զինքն տան ներքին կառավարութեան վերաբերեալ ամէն իրաց վերայ , որպէս զի տեսնէք թէ՛ յորքան արժանի է ձեզ մերձաւորագոյն լինելոյ :

Եւ իսկոյն մեկուսի առ առ պատուական երէցն ու ըսաւ նմա .

Արժանապատիւ հայր , փութացէ՛ք օգնել ինձ այս տագնապի մէջ և քակեցէ՛ք այն հանգոյցն որոյ լուծման առջեւ կը դողայ սիրտս . զի իբրեւ ինձ հարս շխնդրեցի աղջիկն , այլ կը կարծէ թէ իբրև սպասուհի կուգայ տուն , և կը վախճամ թէ մի գուցէ փախչի դժկամակ երբ հարսանեաց վերայ խօսիմք իւրեան : Բայց թ՛ող իսկոյն որոշուի այս . պէտք չէ որ աւելի երկար մնայ նա պատրանաց մէջ , և ես տարակուսանաց . աճապարեցէ՛ք և սոսա եւս տուէ՛ք մեզ փորձն ձեր իմաստութեան , զոր կը յարգեմք :

Հողեւորականն անմիջապէս դարձաւ առ ընկերութիւնն : Բայց , աւանդ , օրիորդին հոգին խռոված էր այն դուարձարան խօսքերէն զոր արտասանած էր հայրն կատակօրէն , այլ բարեմտութեամբ .

Ահա ինչ որ հաճելի է ինձ , զաւակս . ուրախ եմ տեսնելով որ օրդիս ոչինչ նուազ ձաշակ ունի քան իւր հայրն որ , երբ երիտասարդ էր , միշտ գեղեցկագոյն աղջիկն կ'առնոյր սպարակից և որ վերջապէս ամէնէն գեղանին գնաց հարս բերաւ յիւր տուն . մայրիկն էր այն : Ընտրեալ ամուսինէն իսկոյն կ'իմացուի թէ ընտրող մարդն ինչպիսի ոգւոյ տէր է և թէ անձնական արժանապատուութեան գիտակցութիւն ունի : Բայց գուք այլ անշուշտ երկար ժամանակի պէտք չունեցաք որոշում տալոյ համար . զի արդարեւ ինձ կը թուի թէ այսպիսի երիտասարդի մի ետեւէն երթալ շատ դժուար չէ :

Հերման ընդ ազօտ միայն լրած էր այս խօսքերն . բայց սարսուռ գգաց իւր հոգւոյն մէջ , և ակումբն ողջոյն կը մնայր լուս ու մունջ :

Իսկ այնքա՛ն օրհորդն , խորապէ՛ս զգածեալ ու
փրաւորեալ իւր հոգւոյն մէջ՝ այնպիսի ծաղրական
խօսքերէ , որպէ՛ս թուեցան ինքեան , կը կենայր ան-
շարժ , և յեզակարժ շառագունանք կը պատէին այ-
տերն մինչեւ ի փրզն . սակայն բուռն ըրաւ անձին ,
ամփոփեց ինքզինք և խօսեցաւ առ ծերունին , ոչ
բոլորովին ծածկելով զփրշա իւր սրտին .

Յիրաւի ձեր որդին մի այսպիսի ընդունելութեան
շարտրաստեց զիս , երբ իւր հօր , պատուական քա-
ղաքացւոյն , նկարագիրն ըրաւ ինձ , և զիտեմ թէ
ներկայ կը գտնուիմ մի այնպիսի բարեկիրթ մար-
դոյ առջեւ որ զիտէ խոհեմութեամբ վարուիլ իւ-
րաքանչիւրին հետ և ըստ պատշաճի անձանց : Բայց
ինձ կ'երեւի թէ բաւական կարեկցութիւն չէք զգար
մի աղքատիկ ազնկան վերայ , որ այն ինչ կոխեց
ձեր սեմն և պատրաստ է ձեզ ծառայել . ապա թէ
ոչ գտուն ծաղրաբանութեամբ շարտի ցուցնէիք ինձ
թէ իմ փրճակա սրբան հետի է ձեր և ձեր որդւոյն
փրճակէն : Անշուշտ մի փոքրիկ ծրարով կը մտնեմ
աղքատիկ այնպիսի տնէ մի ներս , որ ամենայնց է
եւ վատահ ու աներկեւան կը գործէ իւր գուարթ
բնակիչներն . բայց ես ըստ կը հանչեմ ինքզինքա և
զիտեմ թէ ինչ պարտին լինել մեր յարաբերու-
թիւնք : Վեհանձնութիւն է ընդունիլ զիս առաջին
անգամ այդպիսի երգիծանութեամբ , որ գրեթէ
արդէն հեռու կը վանէ զիս տնէն , որոյ սեւոց վե-
րայ հազիւ ոտք դրած եմ :

Հերման , տաղնապալից , կը յուզէր և նշանայի
կը խնդրէր եկեղեցականէն որ միջամտէ և փարա-

տէ իսկոյն թիւրքիմացութիւնն : Անդէն մերձեցաւ այրն զգօնամիտ և զիտեց կուսին լուին արտաբեկութիւնն , վիշտն զոր կը զսպէր և արտասուքն իւր աշերտն մէջ : Բայց իւր հողին հրամայեց իւրեան շխզել իսկոյն պատրանքն , այլ յերկարել զայն փոքր մի եւս , որպէս զի փորձէր օրիորդին զգացումներն մինչ յուզուած էր :

Աւստի փորձիչ խօսքերով ըսաւ օրիորդին .

Անտարակոյս , սիւ օտարուհիդ , եթէ կարի անապարանօք որչում ըրած ես ծառայել օտարաց քով , շեւ լաւ կըսած թէ ինչ կը նշանակէ հրամայող տիրոջ մի տունն մտնել . զի երբ մարդ կը հաւանի և ձեռք կուտայ , անտի կախումն ունի սմբողջ տարւոյն բախան , և մի միակ այս կը պարտաւորէ շատ բանի համբերել : Մտռայական կենաց մէջ ամէնէն տաժանելին ոչ թէ այսք անդր վազելով յոգնիլն է կամ դառն քիրան զոր թափել կուտայ անվերջ ստիպողական աշխատութիւնն , վասն զի գործօն տէր մի կ'աշխատակցի իւր ծառայից , այլ հանդուրժել տիրոջ նեղարտութեան , երբ կը յանդիմանէ յանիրաւի կամ այս ու այն կը խնդրէ ինքն ինքեան հետ անհամաձայն , և տանիլ տանտիկնոջ բարկասրտութեան , որ փոքր բանէ մի կը բորբոքի իսկոյն , և մանկանց բրտութեան ու փրտութեան . դժուարին է կրել զայս ու մի և նոյն ատեն կատարել պարտականութիւնն անհանգիստ և արագ , և նոյն իսկ առանց տրանջանաց : Բայց դու ինձ յարմար շեւ թուիր այս բանին , որովհետեւ ահա հոր մի կատակն արդէն քի խոր խոցեց գրեզ , և սակայն շատ

ստորաական բան է ազնկան մի հետ անկնիւ ասելով
թէ երիտասարդ մի հանոյացած է իւրեան :

Այսպէս խօսեցաւ : Սրիորդն , սաստկապէս
դգածուած այս վերջին խօսքէն որ գէպ ուղիւ գը-
նաց դարկաւ նպատակին , այլ եւս չկարաց զսպել
ինքզինքն . ուժգնութեամբ ի յայտ եկան իւր ըզ-
գացմունք , լանջքն ուռեցան , և մի հասաչ գուրս
սլացաւ անտի :

Եւ իսկոյն պատասխանեց հեղուով քերաքերոմ ար-
տասուք .

Ո՛հ , խոհական մարդն , որ կ'ուզէ խորհուրդ
տալ մեր ցաւոց մէջ , չգիտէ երբեք թէ ցուրտ
խօսքն չէ կարող սխտիել սիրան այն վշտէն զոր
բարձրագոյն ճակատագիր մի հարկադրած է մեր
վերայ . դուք երջանիկ էք եւ զուարթ . ինչպէս
ծաղր մի կարող է զձեզ վիրաւորել . բայց հիւանդն
ցաւ կ'զգայ եթէ նոյն իսկ թեթեւ ձեռամբ հպի
որ իւրեան : Այ , կեղծելն օգուտ չունի ինձ , եթէ
նոյն իսկ յաջողիմ : Թող այժմ իսկ յայանուի ինչ որ
յետոյ միայն խորին ցաւեր կարէ յաւելուլ և գուցէ
զիս ընկզմել 'այնպիսի վշտի մէջ որ թաքուն կեր-
սով զիս մաշէ : Թողէք ինձ մեկնիլ . չեմ կարող
մնալ այս տան մէջ . կ'ուզեմ երթալ եւ գտնել
կրկին իմ հէք ազգականներս զորս թշուառութեան
մէջ լքի , զիս միայն ազատել խորհելով : Այս է
ահա իմ հաստատ որոշումս , եւ այս կը ներէ ինձ
յայտնել ձեզ ինչ որ տարիներով սրտիս խորն թաղ-
ուած պիտի մնայր եթէ կենայի աստ : Այո՛ , հօր
կատակն խորապէս վիրաւորեց զիս . ո՛չ վտան զի

սպասուհւոց անուատաշամ հպարտութիւն և զգայնութիւն ունիմ, այլ վասն զի իրօք սրտիս մէջ արթնցած է համակրանք մի առ երիտասարդն որ իբրև փրկիչ երևեցաւ մեզ այսօր: Արք առաջին անգամ բաժնուեցաւ յինէն ճամբուն վերայ, միշտ մտացս առջև էր. կը մտածէի այն երջանիկ աղջնկան վերայ զոր թերևս արդէն իւր սրտին մէջ կը կրէր իբրև իւր խօսեցեալն: Աւ երբ գտայ զայն վերատին ազբաբին քով, իւր տեսքն այնքան ուրախացոյց զիս որ կարծեցի թէ երկնային ոգին երէն մին կ'երևէր իմ աչաց: Աւ այնքան սրտայօժար հեանեացայ իւրեան, երբ առաջարկեց ինձ սպասուհի մանել հոս: Առջեմ զայն եւս խոստովանիլ ճամբուն վերայ սիրտս կը գգուէր այն յոյս թէ օր մի թերևս արժանանայի իւր ձեռքին, երբ կարենայի տան անհրաժեշտ նեցուկն դառնալ: Բայց, աւսի՛ղ, այս վայրկեանիս միայն կը տեսնեմ թէ ինչ վտանգաց մէջ կը դնէի իմ անձն սպրեւլով այն երիտասարդին քով զոր կը սիրէի լսին. այժմ իսկ կ'զգամ թէ ինչ հեռաւորութիւն կայ մի ազգատիկ աղջկան և մի հարուստ երիտասարդի մէջ, թէպէտ այդ աղջիկն լինի արժանաւորագոյնն իւր տեսին: Այս ամէնն ըսի, որպէս զի ճանշէք այն սիրան զոր վիրաւորեց մի սպարազայ որում պարտական եմ այս որոշումն: Առանց այսր ուրիշ բանի պէտք չէր ինձ սպասել, ծածկելով իմ լսին փափաքներն, և թէ ոչ տեսնելոյ որ ընդ հուպ տուն բերէր նա իւր հարսն, և ինչպէս հնար պիտի լինէր ինձ յայնժամ կրել իմ թարուն վշտերն: Յարմար ժամուն

կը հասնի ազգարարութիւնն , եւ գազանիքս կը
խուսափի կուրծքէս այն ատեն երբ դեռ բուժելի է
չարիքն : Թող ամէն բան յայտնուի : Այլ եւս ոչինչ
կարող է զիս աւելի երկար ատեն բռնել այս տան
մէջ , ուր կամ ամօթահար եւ խռովեալ , խոստովա-
նելով անկեղծօրէն համակրութիւնս եւ յիմար յոյսս :
Ո՛չ գիշերն որ կը ծածկուի գէզագէզ ամպերով ,
ոչ գոռացող սրտումն զոր կը շեմ , ոչ տեղատա-
րափ անձրեւն որ հեղեղանման կը թափի երկինքէն
եւ ոչ մրրիկն որ ուժգին կը շէջ՝ շախտի արգիլեն
զիս : Ես այդ ամէնն կրած եմ մեր աղետալի փա-
խատեան ատեն եւ երբ կը հալածէր զմեզ թշնամին
ի մօտոյ : Արդ կ'երթամ նետուիլ վերստին ժամանա-
կին յորձանքին մէջ , բաժնուիլ յամենայնէ , ինչպէս
վարժուած եմ երկար ատենէ ի վեր : Մնայք բար-
եաւ . այլ եւս չեմ մնար . ամենայն ինչ վճարեալ է :

Այսպէս խօսեցաւ Գորոթէա , եւ արագ շարժեցաւ
գէպ ի դռան , իւր բազկին տակ ունենալով տա-
կաին ծրարիկն զոր բերած էր : Բայց մայրն , երկու
բազուկներովն փաթթուելով ազջկան , բռնեց զնա ,
եւ գոչեց զարմացած ու ապշած . Ըսէ , ինչ կը նշա-
նակէ այս , եւ այդ անօգուտ արցունքներն . ո՛չ ,
զքեզ չեմ թողուր . դու իմ սրբւոյն նշանածն ես :

Բայց հայրն կեցած գժկամակութեամբ կը նա-
յէր լացող օրիորդին , եւ ըսաւ նեղարարութեամբ .

Այսպէս , իբրեւ վարձք իմ ծայրայեղ ներողա-
մըտութեան , կը պատահի ինձ կրել՝ օրուան վախճա-
նին՝ ինչ որ ամէնէն աւելի տհաճոյ է ինձ . քանզի
ոչինչ աւելի անհանդուրժելի է ինձ համար քան

կանանց լացն , ցաւագին ճիշերն , որք բողբոսփն կը կենճառտեն ինչ որ դուզն ինչ խելքով կարելի էր պարզել : Գժուարին է ինձ աւելի երկար ատեն ակա- նատես լինել այս տարօրինակ անսարանին . դուք յառաջ տարէք ու լրացուցէք զայն , ես կ'երթամ ննջել :

Եւ դարձաւ արագ և կը փութայր երթալ յիւր առաջաստ , ուր սոփոր էր նա հանդիստ վայելել . բայց բանեց զնա որդին և ըսաւ պաղատագին բանիւք .

Հայր , մի անապարէք և մի գայրանայք օրիորդին դէմ . ես միայն պարտական եմ կրել բոլոր այս շք- փոթեթեան պատիժն , զոր այս բարեկամն՝ անա- կրնկալ կերպով՝ յաւելցուց իւր կեղծիքով : Խօսե- ցէք , մեծարոյ աէր , դուք որում հաւատացի իրաց հօգն , մի յաւելուք մեր տաղնասն ու անձկութիւ- նքն . ի գլուխ հանեցէք և պարզեցէք ամէն ինչ . վասն զի ձեր վերայ իմ յարգանքս պիտի նուազէր եթէ այլոց վշտերով զուարճանալ ուզէիք փոխանակ ի կիր արկանելոյ ձեր բարձրագոյն իմաստութիւնն :

Ժմտագին պատասխանեց պատուարժան երէցն եւ ըսաւ .

Ո՞ր խոհեմութիւն պիտի կարող լինէր այն գե- ղեցիկ խտատովանութիւնն դուրս հանել այս բարի ազնկան սրտէն և երեւան բերել իւր բնաւորու- թիւնն : Վո մտատանջութիւն իսկոյն շփոխուեցան հեշտութեան , ցնծութեան : Աւստի դ՛ու իսկ խօսէ՛ ինչ հարկ օտար մեկնութեան :

Յայնժամ յառաջացաւ Հերման եւ խօսեցաւ սիրալիր բանիւք .

Մի ցաւիր այդ արտատուաց և այդ վաղանցիկ

վաթիւն վրայ : զի նորա կը կնքեն իմ երջանկութիւնն
և , որպէս կը բաղձամ , քոյդ : Ես աղբիւր շեկայ
որպէս զի օտարուհւոյն , պատուական օրիորդին ,
առաջարկեմ ծառայել մեզ . եկայ քո սէրն խնդրել .
բայց , աւանդ , իմ երկշտա նայուածքն շէր կարող
սրտիդ յօժարութիւնն տեսնել . երբ աղբեր խաղաղ
հայելուոյն մէջ ողջունեցիր զիմ նայուած , աչերուդ
մէջ բարեկամութիւն միայն տեսայ : Զքեզ մեր տուն
բերել արդէն կէսն էր իմ երջանկութեան : Սակայն
կատարեալ ըրէ արդ : Մհ , լնճ օրհնեալ :

Եւ օրիորդն խորին յուզմամբ նայեցաւ երիտա-
սարդին և շմերժեց գիրկընդ առնումն ու համբոյրն ,
յրու՛մն բերկրութեան , երբ սիրահարաց համար եր-
կար ատենէ ի վեր բաղձացեալ գրաւականն են կե-
նաց ապագայ երանութեան , որ անվախճան կը
թուի յայնժամ :

Երէցն այլոց տարակուսանքն փարատած էր .
բայց օրիորդն , զօրովագին և շնորհալից , եկաւ
հօրն առջեւ , խոնարհեցաւ և համբուրեց նորա
ձեռնն զոր նա կ'ամփոփէր , և խօսեցաւ .

Պիտի ներէք արդարութեամբ պատրանքէ խը-
նովեալ աղջկան մի նախ իւր ցառոց և տալա ուրա-
խութեան արցունքներն : Մհ , թողութիւն տուէք
ինձ իմ նախկին յուզման համար . թողութիւն ալ-
ւէք արդ և այն յուզման համար զոր կ'զգամ այս
վայրկենիս և թոյլ տուք ինձ սթափիլ և ճանշել
ինքզինքս այն անկարծելի երջանկութեան մէջ որ
ինձ կը պատահի : Այո , թող այն առաջին վիշտն ,
զոր պատճառեցի ձեզ՝ պատրեալ , լինի վերջինն :

Այն սիրացօժար ծառայութիւնն զոր ապաստւոյնն պիտի մատուցանէր ձեզ հաւատարմաբար, թո՛ղ արդ զուսարն ընծայէ ձեզ զայն :

Եւ հայրն անմիջապէս ողջագութեան զնա, ծածկելով արտասաքն : Մայրն վստահութեամբ մերձեցաւ նմա և համբուրեց զնա սրտագին, աջ ի յաջ խառնելով . երկրքին կանայք կ'արտասուէին ըսին :

Յայնժամ բարի հանձարեղ երէցն բռնեց շուտով հօր ձեռնն և քաշեց մատէն նշանաուութեան մատանին, (ոչ այնքան դիւրաւ, զի հօր մատն յոյր ու մակղ էր), առաւ նաեւ մօր մատանին, և նշանեց երկու երիտասարդներն : Եւ խօսեցաւ այսպէս .

Թող այս ոսկեղէն մատանիք սահմանուին երկրորդ անգամ հիւսել մի ամուր միութիւն՝ ըստ ամենայնի նման առաջնոյն : Այս երիտասարդն օրիորդին սիրով խորասպէս սողորուած է, և օրիորդն այլ կը խոստովանի թէ երիտասարդն ցանկալի է իւր սրտին : Աւստի կը նշանեմ զձեզ այսօր և կ'օրհնեմ զձեզ ապագայ աւուրց համար, կամաւ ձեր հօր և մօր և վկայութեամբ մեր բարեկամին :


Եւ դրացին իսկ և իսկ խոնարհեցաւ առ նոսաջերմ բարեմաղթութիւններ ընելով : Բայց երբ հոգեւորականն ոսկեղէն մատանին կը դնէր օրիորդին մատն, ահա զարմանօք նշմարեց միւսն, զոր ներման ազբեր քով դիտած էր այնքանի սրտատանջութեամբ :

Եւ ըսաւ բարեկամօրէն կատակաբան խօսքերով . Ի՞նչ, այս երկրորդ անգամն է որ կը նշանուիս . միայն թէ առաջին խօսեցեալն շնորհալիանայ ի խո-

բանն քաղաքել ձեր սովուսնութեան գէժ և արդե-
լուլ զայն :

Բայց Կորոթէա ըսաւ . Ո՛հ , թող տաք մի վայր-
կեան զոհել այս յիշատակին . վասն զի արժանի է
այնմ այն առարքինի մարդն որ բաժանմանն առեն
տուաւ ինձ զայն և որ ոչ ևս դարձաւ իւր հայրե-
նեաց գիրկն : Նա զամէն ինչ նախատեսեց երբ ա-
զատութեան սէրն և յեղափոխութեան մասնակցե-
լոյ տենչն գրգեց զնա զնալ ի Նարիզ , ուր բանտ
և մահ գտաւ : Երջանիկ ապրէ դու , ըսաւ . ես կը
մեկնիմ . ամէն ինչ միանգամայն կը յուզի երկրի
վերայ , և ամէն ինչ կը թուի քակուիլ զբուիլ . ամ-
բազոյն աէրութեանց հիմունք կը քայքային , կալ-
ուածն կը բաժնուի հին կալուածատէրէն , բարե-
կամն բարեկամէն , և սիրահարն իւր սիրուհիէն :
Ար թողում զքեզ սաս . և եթէ գտնեմ զքեզ վե-
րբափն , — ո՛վ գիտէ , զուցէ վերջին անգամ կը
խօսիմ քեզ հետ : Իրաւամբ ըսած են , մարդն մի
օտարական է միայն այս երկրի վերայ . և այժմ
իսկ առաւել քան երբեք անցնիւր որ մի օտարա-
կան դարձած է . զեափնն այլ եւս մեր չէ . գանձք
կը թափառին . ոսկին և արծաթն կը հալին և իւր-
եանց նախկին նուիրական ձեւերն կը մերկանան .
ամէն բան շարժման մէջ է , իբր այն թէ աշխարհ ,
որ միանգամ ընդ միշտ ձեւակերպեալ կը թուէր ,
ուզէր վերափն լուծուիլ ի քառս և ի գիշեր և վե-
րակազմիլ նորակերպ : Դու պիտի պահես ինձ քո
սիրան , և եթէ լինի մեզ գտնել գիրեար վերափն
ըշխարհի աւերակաց վերայ , յայնժամ նորոգեալ





էակներ պիտի լինինք, կերպարանափոխ և ազատ
և անկախ ի ճակատագրէ : վասն զի ինչ բան կա-
րող է շղթայել զայն որ այդպիսի օրերէ անցաւ :
Բայց եթէ չպիտի լինի որ այս վտանգներէն զեր-
ծանիմք յաջողութեամբ, վերստին գրկեմք զիրեար
ցնծութեամբ, ո՛հ, իմ պատկերն աշացդ առջեւ
թող լինի միշտ որ հաւասար արիութեամբ պատ-
րաստ լինիս երջանկութեան և թշուառութեան :
Եթէ նոր հայրենիք մի և նոր կապ մի գլեզ հրա-
ւիրեն, շնորհակալութեամբ վայելէ ինչ որ բախան
կրնձայէ քեզ : Միքէ անկեզծութեամբ զայնս որք
պիտի սիրեն գլեզ և երախտապարտ եզիր բարերա-
րաց : Բայց կոխէ միշտ գիւրաշարժ թեթև սախք,
զի գուցէ երկրորդ կորստեան մի գառն վշտին են-
թարկուիս : Միքելի լինին քեզ օրերդ - բայց և այն-
պէս մի առաւել յարգեր կեանքն քան միւս բարիք-
ներն, և ամէն բարիք պատիր են : Այսպէս խօսեցաւ
նա. — Ե ոչ և ս երեւցաւ ինձ ազնուական երիտա-
սարգն : Յետոյ կորուսի ամէն ինչ որ ունէի, և հա-
զար անգամ մտածած եմ իւր խրատուց վերայ :
Այժմ իսկ կը մտածեմ մինչ սէրն զերջանկութիւն կը
պատրաստէ ինձ աստ և կը պարզէ ինձ զեզեցկա-
զոյն յոյսեր : Ա՛հ, ներէ ինձ, պատուական բարեկամ,
եթէ նոյն իսկ թեզ սեզմերոյ աստեն կը դողամ : Այս-
պէս ցամաք ելնող նաւագին երերուն կը թուի նոյն
իսկ ամենահաստատուն և ապահովագոյն գետինն :

Այսպէս խօսեցաւ Գորոթէա և նոր մատանին
գրաւ նախնւոյն քով :

Բայց Հերման ազնիւ այրական յուզմամբ պա-
տասխանեց .

Գործիքէա , այս ընդհանուր վրդովման մէջ թող
այնքան ամուր լինի մեր միութիւն : Դիմադրեմք ի
միասին , ամուր բռնեմք գիրեար և ամուր պա-
հեմք մեր գեղեցիկ գոյից սեփականութիւնն : Ձիայն
մարդ , որ երերածուի ժամանակաց մէջ ինքն իսկ
է յողջողջ , նա կը բազմապատկէ շարիքն և կ'ընդ-
լայնէ առաւել : Բայց նա , որ ողին է անդրդուելի ,
նա ինքն ինքեան մի աշխարհ կը շինէ : Գերմանին
չէ վայել թոյլ տալ որ աճի իւր սրտին մէջ երկիւ-
ղագին շարժումն , չէ վայել տարուերթիլ վարան-
մամբ : Այս պիտի լինի նաեւ մեր վարմունք : զայս
կրկնեմք և զայս հաստատեմք : Տակաւին կը գովուին
այն անվեհեր ժողովուրդք որք Աստուծոյ , օրինաց ,
ծնողաց , կանանց և որդւոց համար գէնք առին և
գիմեցին թշնամւոյն վերայ և գիմադրեցին միահա-
մուռ : Դու իմ ես , և ինչ որ իմ է կրկնապէս իմ
կը լինի և սիրելագոյն ինձ քան երբեք : Ձեմ ուզեր
վշտիւ պահել զայն և երկիւղագին զայն վայելել ,
այլ արիութեամբ և քաջութեամբ : Եթէ թշնամիք
դարձնաւ սպառնան մեզ այս տարի կամ առջադա ,
եկ մատուցանել ինձ գէնքերս և կազմել զիս ի մարտ :
Գիտնալով թէ տունն և սիրելի ծնողքս քո խնամոց
ներքեւ են , ո՛հ , թշնամւոյն գէմ պիտի հանեմ
լանջքս սուրհով : Եւ եթէ իւրաքանչիւր զք մտածէ
ինձ նման , զօրութիւն զօրութեան գէմ կ'ելնէ ,
եւ ընդհուպ խաղաղութիւն կը բերէ ընդհանուր
հրճուանք :



Էջեր	Տող	Սկիզբ	Սեղման
29	3	այ եւ ոքից	այ եւ ոքից
53	2	պատկանում	պատկանում
64	24	արեւոյցի	արեւոյցի



